

ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Զ

Ի Ն Չ Պ Ե Ս Կ Ա Ր Դ Ա Լ
Ա Ս Տ Վ Վ Ծ Ա Շ Ո Ւ Ն Չ Լ





ՀՐԱՍՏԱՆԱ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՄՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Զ

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԴԱԼ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

Երկրորդ՝ լրացված և վերանայված
հրատարակություն

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ Էջմիածնի ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. Էջմիածին - 2008

ՀՏԴ 23/28

ԳՄԴ 86.37

Ի 621

Աշխատասիրությամբ Գ. Դարդինյանի

Ի - 621 Ինչպես կարդալ Աստվածաշունչը: - Եջմիա-
ծին: Մայր Աթոռ Սուրբ Եջմիածին, 2008.-
228 էջ:

Այս գրքույկը նվիրված է առանձնական աստ-
վածպաշտության կարևորագույն կողմերից
մեկին՝ Ս. Գրքի ուղղափառ ընթերցանության
սկզբունքներին:

Գրքույկը նախատեսված է Ս. Գիրքն ուղղա-
փառորեն ընթերցել և սերտել ցանկացողների,
մանավանդ՝ սկսնակների համար:

ԳՄԴ 86.37

ISBN 978-9939-59-003-5 © Մայր Աթոռ Սուրբ Եջմիածին, 2008 թ.
© Գրիգոր Դարդինյան, 2008 թ.

Նվիրում եմ
ի Քրիստոս ննջած
մայրիկին՝
Գայանե Գրիգորյանի
լուսավոր հիշատակին

Նվիրվում է Քրիստոնեությունը Հայաստանում պետքական կրոն հոչակելու 1700-րդ տարեդարձին

Այս գրքույկը նվիրված է առանձնական աստվածաշտության կարևորագույն կողմերից մեկին՝ Ս. Գրքի ուղղափառ ընթերցանության սկզբունքներին: Կազմելով գրքույկը՝ թարգմանաբար և քաղվածաբար օգտագործել ենք Ընդհանրական և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հայրերի հոգեշահ Տառերի, քարոզների և մեկնությունների՝ մեր խնդրին առնչվող տեղիները, ինչպես նաև առանձին հոգևոր հեղինակների համապատասխան գրվածքները: Մեծապես օգտվել ենք Ռուս Ուղղափառ Եկեղեցու հրատարակած համանուն խորագիրը կրող գործից:

Նյութերը թեմատիկ առումով գետեղված են առանձին գլուխների բաժանված վեց մասերում, որոնց բաժանումը ինչ-որ առումով պայմանական է: Բանն այն է, որ միևնույն ասույթի մեջ միաժամանակ արծարծված են հոգևոր ընթերցանության տարրեր խնդիրներին վերաբերող խոսքեր, որոնց դասակարգումը այս կամ այն մասի ու գլխի կատարվել է դրան-

ցից մեկի՝ առավել հատկանշականի ընտրությամբ: Առանձին մասով, իբրև հավելված, համառոտակի շարադրված է մեր մատենագրության մեջ հանդիպող «Սուրբ Գրոց ուսման» պատմությունը Յայաստանում: Այն թեև ուղղակիորեն չի առնչվում մեր խնդրին, բայց արժեքավոր և ուսանելի է, քանզի ի հայտ է բերում Աստվածաշունչը սերտելու աստվածային պատվիրանի իրականացումը հոգևոր ավանդություններով հարուստ մեր հնամենի երկրում:

Որոշ կարևորագույն թեմաների նյութերը, որոնք հղումներ չունեն, շարադրվել են մեր կողմից երկյուղածաբար ու Եկեղեցու սրբազան ավանդության շրջանակներում:

Գրքույկը նախատեսված է Ս. Գիրքն ուղղափառորեն ընթերցել և սերտել ցանկացողների, մանավանդ՝ սկսնակների համար:

ՄՈՒՏՏՔ

Վերածնվեցեք ո՞չ թե ապականության ենթակա սերմից, այլ աճապականից՝ Աստծու կենդանի և մշտնենական խոսքով, բանզի. «Ամեն մարմին ճնան է խոտի, և մարդու ամբողջ փառքը ճնան խոտածաղի. խոտը չորամում է, ծաղիկն էլ թափվում, բայց Տիրոջ խոսքը մնում է հավիտյան»:
Այսինքն՝ այն խոսքը, որ ավետարանվեց ձեզ:

(Ա. Պետ. Ա. 23-25)

Դարերի, հազարամյակների ընթացքում մարդկության կուտակած բովանդակ կենսափորձն ու գիտելիքը՝ շրջակա աշխարհն ու ինքն իրեն հասկանալու, ճանաչելու և արտահայտելու արգասիքը, ամփոփված է բազմաբնույթ ձեռագրերում ու գրքերում: Այսպես. ցայսօր մարդկանց ձեռքերով տասնյակ միլիոնավոր գրքեր են գրվել, որոնք մենք ընթերցում ենք գիտելիքներ ձեռք բերելու, մեր հետաքրքրասիրությունը բավարարելու և նաև զվարճանալու նպատակով: Գրքերի այս ահռելի քանակը, սակայն, եթե մի կողմից՝ խոսում է արարչագործության ճանաչողության անսահմանության, ճշնարտությանը, երևույթների և իրերի բնությանը բանականությանը հասու լինելու դժվարության մասին, ապա մյուս կողմից՝ վկայում է այս գործնթացի հակասականության, իրարամերժության և հարաբերականության

մասին: Արդյունքում, համաշխարհային գրադարանը գիտության և կենսափորձի սահմանների ընդլայնման համեմատ, անվերջ համալրվում է նոր գրքերով, որոնք փոխարինելու են գալիս հներին:

Այդպիսին չեն Աստվածաշունչը՝ Աստծու խոսքի հայտնությունը մարդկությանը՝ բոլոր ժամանակների ամենաընթերցվող, ամենահրատարակվող ու ամենահանրաճանաչ գիրքը: Սուրբ Գրքի խորհուրդը խորին և անանց է, իսկ բնույթը՝ համամարդկային՝ վերազգային ու տիեզերական, որքան էլ առաջին հայացքից նրա պատումները, իրադարձությունները և իրողությունները տեղի և ժամանակի մեջ սահմանափակված թվան և ազգային գունավորում ունենան: Նա իր ընթերցողին զգալ ու հասկանալ է տալիս, որ մարդը Աստծու արարած է, ինչպես Ադամն էր առանց ազգության ու հասարակական դիրքի, և նրան սրբանալու և ապաշխարելու ճանապարհով Երկնաքաղաքացիության է հրավիրում: Ինչպես ասում է Պողոս առաքյալը. «Հագե՛ք նորը, այն, որ նորոգված է գիտությամբ, ըստ իր Արարչի պատկերի. այլևս չկա հրեա, ոչ էլ հեթանոս, թղփատություն և անթղփատություն, բարբարոս, սկյութացի, ծառա, ազատ, այլ՝ Քրիստոս, որ ամեն ինչ է ամեն բանի մեջ» (Կող. Գ. 10-12):

Սուրբ Գրքին խորը է որևէ ժամանակավրիպություն, քանզի նրա խոսքն ինքը ճշմարտությունն

է, որը հավետ արդիական հնչեղություն ունի. և ըստ այդմ նույնքան հոգեհարազատ և առինքնող է աշխարհի բոլոր ազգերի և սերունդների, բոլոր մարդկանց համար՝ անկախ տարիքից ու սեռից: Յետևաբար Սուրբ Գիրքը նույնն է թե խոր անցյալի և թե այսօրվա՝ գիտատեխնիկական դարաշրջանի մարդու համար և այդպիսին կլինի նաև հեռավոր ու մոտ ապագայում, քանզի հավիտենականության կնիքն ունի. «Երկինք և երկիր պիտի անցնեն, բայց իմ խոսքերը չպիտի անցնեն» (Մատթ. ԻՇ 35):

Աստվածաշունչը թեև մարդկության ճշակութային ժառանգության գլուխգործոցն է, սակայն իր ծագմանք, ծշմարտացիությամբ, հավիտենականությամբ, կատարելությամբ, հոգին և սիրտը կրթելու փրկագործական նպատակադրությամբ, ինչպես նաև սերտողության կարգով ընդիանորության և ոչ մի եզր չունի աշխարհի մյուս բոլոր գրքերի հետ: Քանզի այս Գիրք գրոցը ընդունում ենք «ոչ որպես մարդկանց խոսք, այլ ճշմարտապես՝ որպես Աստծու խոսք» (Ա. Թեսաղ. Բ 13), և որը նախ և առաջ «Աստծու զորությունն է՝ ի փրկություն բոլոր հավատացլաների» (Հոռմ. Ա 16): Օժտված լինելով միմիայն իրեն հատուկ՝ բժշկելու, միսիթարելու և կենդանացնելու գորություններով՝ Սուրբ Գիրքը գիտելիքների, տեղեկությունների և իմաստության պարզ ամբողջություն չէ, ինչպես մյուս գրքերը, այլ հոգու ծշմարիտ սնունդ՝ ըստ մեր Տեր

Դիսուս Քրիստոսի վկայության. «Միայն հացով չի ապրի մարդ, այլ՝ ամեն խոսքով, որ դուքս է գալիս Աստծու քերամից» (Մատթ. 7: 4): Եվ այս հոգևոր սննդից կամաթե ակամա հրաժարվելն է, որ պատճառ է դառնում ժողովրդի «խոտորման» ու բարքերի անկման և պայմանավորում բովանդակ հասարակական կյանքի ճգնաժամը:

Որտե՞ղ, եթե ոչ այս Կենաց Մատյանում իմաստություն և ծշմարտություն փնտրող մարդը կգտնի իր ամենանվիրական հարցերի սպառիչ պատախանները՝ ի՞նչ է չարն ու բարին, կյանքն ու մահը, երջանկությունն ու դժբախտությունը, և վերջապես, ո՞րն է մարդու երկրային կյանքի իմաստը:

Ո՞ր գիրքն է, եթե ոչ Աստվածաշունչը, որ աստվածահածո կյանքով ապրողի, հավիտենական և ժամանակավոր բարիք ու խաղաղություն փնտրողի համար ծառայում է «ուսուցման, համարիմանության, ուղղելու և արդարության մեջ խրատելու համար, որպեսզի կատարյալ լինի Աստծու մարդը և պատրաստ բոլոր բարի գործերի համար» (Բ Տիմ. Գ 16, 17):

Իր տեսակի մեջ եզակի այս երկնառաք Մատյանը՝ քրիստոնեության Սուլը Գիրքը, որի, ինչպես ասում է Խոսրով Անձնացին, «պատվիրանների մի նշանախեցն անգամ ավելի մեծ է, քան երկինքն ու երկիրը», թելադրում է ընթերցանության ուրույն եղանակներ: Էապես տարբերվելով գիտելիքի աշխարհի

մտավոր փորձառությամբ կատարվող պարզ յուրացումից՝ այն ննան է մահկանացուի սրտում Աստծու հավիտենական խոսքի հանապազ սերմնացանությանը (ծլելու, աճելու և հավիտենական կյանքի համար պտղաբերելու ակնկալությամբ), պատվիրված է Աստծուց և յուրաքանչյուր քրիստոնյայի սրբազն պարտականությունն է:

Քրիստոսի Եկեղեցին իր հիմնադրման առաջին իսկ օրից, առաջնորդվելով Աստվածաշունչը հարատև ընթերցելու աստվածային պատգամով, առաջնային է համարել Աստծու խոսքի սերտողությունը, նրանով լցվելու և ապրելու անհրաժեշտությունը հավատացյալի կյանքում՝ իբրև առանձնական աստվածպաշտությունը՝ պահքը, աղոթքը, ողորմությունը և բարեպաշտությունը սնուցող օրինաբեր աղբյուր և փրկության միջոց:

Այսօր էլ, ինչպես դարեր ու հազարամյակներ առաջ, Աստվածաշունչը մարդկության ուշադրության կիզակետում է, շատերի հոգևոր սնունդն ու միսիթարությունը: Սակայն, ցավոք սրտի, բոլորը չեն, որ ընթերցում են Եկեղեցաբար, ինչպես առաջ, իբրև հազարամյա ուղղափառ ավանդության կրող, այլ կամա թե ականա ընդօրինակում են սերտողության աշխարհիկ փորձառությունը: Ննան մոտեցմանը Ս. Գիրքն ընթերցելը ոչ միայն սխալ է և անօգտակար, այլև կարող է վնասակար լինել: Քանզի բնավ

պետք չէ մոռանալ, որ Աստծու խոսքը ոչ միայն մեր քարեղեն սրտերը փշրող «մուրճ» է, մութ տեղերում լույս տվող «ճրագ», այլև՝ «ազդու և ավելի հասու, քան ամեն մի երկասցի սուր» (Եբր. Դ 12), որը կարող է կորստյան պատճառ դառնալ այն մարդկանց համար, ովքեր «ծուռ են մեկնում» գրվածքները (տե՛ս Բ Պետ. Գ 16): Եկեղեցու շնորհակիր հայրերը, մեկնելով Աստվածաշունչը սերտելու աստվածային պատգամները, մշակել են հոգևոր ընթերցանության տեսական և գործնական համակարգեր, որոնք բացահայտում են Աստծու խոսքի շնորհման նպատակը, փրկագործական ու խրատական զորությունները, բարերար ազդեցությունը հոգու, սրտի և մտքի վրա, կարևորությունն ու դերը ընդհանրական և առանձնական աստվածապաշտության մեջ, երկյուղալից դիրքորոշումը նրա նկատմամբ, ընթերցանության կերպերն ու գրքերի հաջորդականությունն ըստ կարևորության և մատչելիության և այլն:

Դամաշխարհային պրակտիկայում իրենց նմանօրինակը չունեցող այս համակարգերի ծանոթությունը մեզ հնարավորություն կընձեռի վերանայել մեր սխալ և մակերեսային մոտեցումները Սուրբ Գրքի ընթերցանության նկատմամբ և առավել արդյունավետ յուրացնելու այն, այսինքն՝ այնպես, ինչպես կամենում է երկնքի և երկրի Արարիչը:

Դրատարակելով հոգևոր կյանքի կարևորագույն

խնդրի լուսաբաննանը նվիրված այս գրքույկը՝ հույս ունենք առ Աստված, որ հոգևոր ընթերցանության սկզբունքները կօգնեն մեզ առատապես լցվելու և ապրելու Քրիստոսի խոսքով՝ արժանանալով աստվածային երանություններին:

«Երանելի է այն մարդը,
որն ամրարիշտների խորհրդով չի գնում,
մեղավորների ճամապարհին ոտք չի դնում,
ժամտերի աթոռին չի նստում,
այլ Տիրոջ օրենքի մեջ է կամքը նրա,
գիշեր-ցերեկ խորհում է Նրա պատվիրամների
մասին:

Նա նման է ջրերի հոսանքի վրա տնկված ծառի,
որն իր պտուղը ժամանակին կտա,
իսկ նրա տերևը չի թափվի,
ու ամեն բան, ինչ էլ որ ամի, կհաջողվի նրան»:

(Սաղմ. Ա 1-3):

Տ. Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյան
Վիրահալոց թեմի առաջնորդ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Ա. ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՃՆՈՐՀՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Որովհետև ամոթ չեմ համարում ավետարանելը, քանի որ այն Աստծու զորությունն է ի փրկություն բոլոր հավատացյալների:

(Հոռմ. Ա. 16)

Աստված Սուրբ Գիրքը պարգևել է ինչպես բովանդակ մարդկությանը, այդպես էլ յուրաքանչյուր մարդու՝ ինձ և քեզ: Որովհետև Աստված կամենում է, որ «բոլոր մարդիկ» (հետեաբար և դու) «փրկվեան և հասմեն ճշմարտոթյան գիտությանը» (Ա. Տիմ. Բ. 4): Այս է նրա՝ Սուրբ Գիրքը յուրաքանչյուրին շնորհելու պատճառը. որպեսզի կարդալով կամ լսելով այն՝ մարդիկ կարողանան հավիտենական փրկության հասնել:

Հարկ է Սուրբ Գիրքը կարդալ կամ լսել ոչ թե նրբամիտ դառնալու, այս աշխահում իմաստուն լինելու կամ հաջո մարդկանց իմաստուն երևալու համար, քանզի սա հակառակ է Աստծու խոսքին: Այն մեզ չի շնորհվել, որ նրանով փառավորվենք այս աշխարհում: Ով այդ

նպատակով է կարդում կամ քարոզում Աստծու խոսքը, կամենում է Աստծու շնորհը, այսինքն՝ Աստծու խոսքը, ոչ թե Աստծու, այլ իր ունայն փառքին ծառայեցնել և այդպիսով Աստծու շնորհից աստվածային փառք հափշտակել իր համար, որը նույնն է, ինչ գողանաւը (իսկ դա մեծագույն և պղծագույն մեղք է): Այլ Աստծու խոսքը հարկ է կարդալ կամ լսել փրկության մեջ իմաստնանալու, լուսավորված միտք ունենալու, ճշմարտությունը ճանաչելու, դեպի չարը հակված սիրտը բարուն և Տիրոջ կամքը կատարելուն ուղղելու համար, ինչպես նաև՝ քարոզելու մադկանց շինության և ոչ թե սեփական իմացությունը ցուցադրելու համար: Իսկ ով կարդում, լսում կամ քարոզում է Աստծու խոսքն այլ նպատակով, նրա համար այն ոչ միայն օգտակար չէ, այլև վնասակար է: Այդ պատճառով է, որ Աստվածաշնչին քաջատեղյակ բազում անձինք ավելի չար են լինում, քան անտեղյակները: Բանն այն է, որ Աստված այդպիսիներից վերցնում է շնորհը իրեն անտեսելու և իր աստվածային շնորհը չարաշահելու պատճառով. և այդպես առանց շնորհի նրանք մի մեղքից մյուսն են ընկնում, քանզի «Աստված հակառակ է ամբարտավաններին, իսկ խոնարհներին տալիս է շնորհ» (Ա. Պետ. Ե 5):

Երկու տեսակի ուսյալ և իմաստուն մարդիկ կան. ոմանք դպրոցներում կրթվում են գրքերով, սակայն նրանցից շատերն ավելի անմիտ են, քան հասարակ ու անգրագետ մարդիկ, քանզի քրիստոնեական այբուբենն իսկ չգիտեն. մտքով սուր են, բառեր են ուղղում ու պերճախոսում, սակայն սեփական սիրտն ուղղել չեն ցանկանում: Մյուսներն աղոթքով, խոնարհությամբ ու ջանասիրությամբ սովորում ելուսավորվում են Սուրբ Հոգուց և ավելի իմաստուն են, քան այս աշխարհի իմաստասերները: Նրանք բարեպաշտ են, սուրբ և աստվածահաճութեանքի թեև գրագետ չեն, բայց գիտեն, թե ինչ է բարին. հասարակ ու կոպիտ են խոսում, սակայն ապրում են գեղեցիկ ու պարկեցտ կյանքով: Այդպիսիներին հետևիր, քրիստոնյա՛ (ս. Տիխոն Զադոնսկի):

Ավետարան կարդալիս հաճույք և հրճվանք մի՛ փնտրիր, ոչ էլ՝ փայլուն մտքեր, այլ ձգտիր տեսնել սուրբ ծշմարտությունը: Մի՛ բավարարվիր միայն Ավետարանի անպտուղ ընթերցանությամբ, ջանա կատարել նրա պատվիրանները. կարդա այն գործերով: Այն կյանքի Գիրք է, և պետք է այն կյանքով կարդալ:

Երբ բացես սուրբ Ավետարանը ընթերցելու համար, հիշի՛ր, որ նա է լուծելու քո հավիտե-

նական վիճակը: Նրանով ենք մենք դատվելու. այստեղ նրա նկատմամբ ունեցած վերաբերմունքի համեմատ էլ կհատուցվի մեզ կա՞մ հավիտենական երանություն, կա՞մ հավիտենական պատիժ: Աստված իր կամքը հայտնեց չնչին հյուկեին՝ մարդուն: Գիրքը, որի մեջ շարադրված է այդ մեծ ու ամենասուրբ կամքը, քո ձեռքում է: Դու ըստ քո հայեցողության կարող ես և՛ ընդունել, և՛ մերժել քո Արարչի և Փրկչի կամքը: Քո հավիտենական կյանքն ու հավիտենական մահը քո ձեռքում են: Հապախորհի՛ր, թե որքա՞ն զգույշ ու ողջամիտ պիտի լինես: Մի՛ խաղա քո հավիտենական վիճակի հետ (ս. Իգնատի Բրյանչանինով):

Տգիտություն և տկարություն՝ ահա մեղքի երկու աղբյուրները, որոնք երկուսն էլ մեր կամքից են կախված: Իսկ մենք չենք կամենում ո՛չ սովորել, ո՛չ էլ սանձահարել մեր ցանկությունները: Թե՛ մեկի, թե՛ մյուսի դեմ պայքարելու միջոցներ են շնորհվել մեզ. դրանք են ճանաչողությունն ու սուրբգրային ապացույցների վրա հիմնված խորին համոզմունքը (Կղեմես Աղեքսանդրացի):

Միրելինե՛րս, Աստվածաշունչ Մատյանի ընթերցանությունը մեծ շնորհ է: Նա իմաստնացնում է հոգին, միտքը երկինք հափշտակում,

մարդուն մղում երախտագիտության առ Աստված, թույլ չի տալիս նրան հակվել չար բարքերի, ստիպում է միշտ մտքով հաստատվել երկնքում, դրդում մեզ գործել Տիրողից հատուցում ստանալու ակնկալիքով և մեծ նախանձախնդրությամբ ձգտել առաքինության սխրանքների: Այստեղից Սուրբ Գրքից կարելի է ստույգ իմանալ, թե ինչ փութով է մեզ օգնության գալիս աստվածային նախախնամությունը, այստեղ ենք հանդիպում բազում արդարների և ճանաչում Տիրոջ ողորմածությունն ու հատուցումների անսպառ հարստությունը: Հենց նրանով է կարելի սեփական անձի մեջ արթնացնել առաքինի այրերի՝ ողջախոհությանը հետևելու և ընդօրինակելու բաղանքը և թույլ չտալ սեփական անձին տկարանալ առաքինություն ձեռք բերելու սխրանքի մեջ, այլ ի սրտե ապավինել Աստծու խոստումներին նախքան նրանց իրականանալը: Ինչ որ նյութական սնունդն է մեր մարմնի կենսագործունեությունը պահպանելու համար, իսկ և իսկ Սուրբ Գրքի ընթերցանությունն է հոգու համար: Նա հոգեսոր սնունդ է, որ բյուրեղացնում է միտքը, հոգին դարձնում զորավոր, հաստատակամ ու իմաստուն՝ թույլ չտալով վերջինիս ընկղմվել անմիտ կրքերի մեջ, այլ ընդհակառակը՝ էլ ավելի է դյուրացնում

նրա ճախրանքը՝ բարձրացնելով-հասցնելով նրան, այսպես ասած, ուղղակի երկինք։ Ուստի աղաչում եմ, առավելագույն ջանադրությա՞մբ ընթերցենք Աստվածաշունչ Մատյանը։

Որովհետև անհնար է, անհնար է, ասում եմ, որ որևէ մեկը փրկված լիներ կամ կարողանա փրկվել առանց Սուրբ Գրքի ընթերցանության (ս. Հովհաննես Ոսկեբերան)։

Ով իսկապես ճանաչել է Սուրբ Գրքի գիտությունը, գիտե, որ Գրքի ամենապարզ և ամենախմատուն խոսքի զորությունը հետապնդում է միևնույն նպատակը՝ մարդու փրկությունը, իսկ այս գիտությանն անհաղորդը հաճախ է գայթակղվում (ս. Պետրոս Դամասկոսցի)։

Տգետ ու կույր են բոլոր նրանք, ովքեր չեն ընդունում, որ Ս. Գրքի ընթերցանությունը մղում է մարդու կոչմանն արժանի ու վեհ գաղափարների (Որոգիննես Ալեքսանդրացի)։

Ճշմարտությանը հասնելու ամենահուսալի շափիղը Ս. Գրքի ընթերցանությունն է, քանզի այստեղից ենք իմանում, թե ինչ պետք է անել և ինչ չանել։ Այստեղ վաղուց ի Տեր ննջած մարդիկ ասես հարություն են առնում իրենց վեհ կյանքով և ճանապարհ ցույց տալիս նրանց, ովքեր կամենում են հետևել իրենց բարի օրի-

նակին: Ահա թե ինչու յուրաքանչյուր ոք, ով տկարանում է իր պարտականությունների կատարման մեջ, ընթերցելով Ս. Գիրքը, կարող է զորանալ: Միայն թե խորհուրդ եմ տալիս. այդ ընթերցանությունը թող ուղեկցվի աղոթքով (ս. Բարսեղ Կեսարացի):

Մենք միշտ պետք է Ավետարանի խրատով դաստիարակվենք լուսավորվելու համար, որպեսզի ստանանք Կտակարաններում ամփոփված ճշմարտության Սուրբ Հոգու շնորհներից: Ուստի դադարենք դատարկ և վայրապարքննությունից և ընթանանք Ս. Գրքի՝ Հին և Նոր Կտակարանների խրատներով:

Գրքերն են մեր վարդապետները. Նրանց միջոցով ընդունենք հավիտենական հույսը և նրանցով վեր բարձրանանք աշխարհից (ս. Գրիգոր Լուսավորիչ):

Սուրբ Հոգով շարադրված բոլոր Սուրբ Գրքերը խորհուրդ ու դիտավորություն ունեն և երբեք զուր տեղը չգրվեցին, այլ գրվեցին մեզ օգտակար լինելու և ուսուցանելու համար, որպեսզի նրանց միջոցով ճանաչենք Աստծու ամբողջ կամքը և չշեղվենք ուղիղ ճանապարհից, որը մեզ դեպի վեր՝ Աստծու մոտ է տանում: Այս մասին վկայում է նաև Պողոս առաքյալը.

«Աստծու շնչով գրված ամեն գիրք օգտակար է ուսուցման, հանդիմանության, ուղղելու և արդարության մեջ խրատելու համար» (Բ Տիմ. Գ 16) (Սարգիս Շնորհալի):

Հին կամ Նոր Կտակարանների աստվածային հեղինակություն ունեցող էջերից կամ ուսուցումներից ո՞ր մեկը ուղղագույն կանոն չէ մարդկային կյանքի համար (և Բենեդիկտոս):

Քանի որ մենք շատ թույլ ենք, որպեսզի ճշմարտությունը գտնենք զուտ բանականության միջոցով, և հետևապես կարիք ունենք Սուրբ Գրքի հեղինակությանը, ես սկսեցի հավատալ, որ Դու այդ Գրքին այդպիսի հեղինակություն չէիր հաղորդի ողջ աշխարհով մեկ, եթե չուզենայիր, որ Նրա միջոցով Քեզ հավատան և Նրա միջոցով Քեզ փնտրեն: ... Սուրբ Գիրքը սկսեց ինձ թվալ ավելի արժանի հարգանքի նրանով, որ բաց էր բոլորի համար, և միևնույն ժամանակ պահպանում էր իր խորհրդավորության վեհությունը՝ խորը մտքի քննության համար: Այն ներկայանում էր բոլորին շատ պարզ խոսքերով և խոնարհ ոճով, միևնույն ժամանակ նրանց, ովքեր թեթևաբարու չեն սրտով, ստիպում էր մտքով լարվել, որպեսզի իր գիրկը բաց անի բոլորի համար և

նեղ անցումներով դեպի Քեզ տանի քչերին. թեև նրանք ավելի շատ են, քան կլինեին, եթե Գիրքը իր հեղինակությամբ այդքան բարձր չլիներ և իր սուրբ ու խոնարհ գիրկը չընդուներ մարդկանց այդպիսի բազմություններ (ա. Օգոստինոս Երամելի):

«Ոմանք,՝ գրում է մի հեղինակ,՝ դիմում են Աստծու խոսքին՝ կարծելով, թե նրանում հին ժամանակներին վերաբերող պատմական տեղեկություններ կտտնեն, և, իրոք, գտնում են, սակայն խոսքի նպատակը այդ չէ: Մյուսները երկրաբանական տեղեկություններ են փնտրում և փութեռանդորեն փորձում կա՛մ երկրաբանությունը հարմարեցնել Սուրբ Գրքին, կա՛մ Սուրբ Գիրքը՝ երկրաբանությանը: Մենք կարող ենք միշտ լիովին վստահ լինել, որ ճշմարտությունը երբեք ինքն իրեն չի հակասում, բայց քանի որ դեռևս ոչ ոք ի գորու չէ լիովին երկրաբանություն իմանալ (քանզի նրա վիաստերը դեռևս մեկնաբանված չեն որևէ գոհացուցիչ տեսությամբ), մենք կսպասենք, որ վիլխոփաները լուծեն իրենց հարցերը: Իսկ մենք վստահ ենք, որ երբ նրանք գտնեն ճշմարտությունը, այն լիովին համահունչ կլինի Աստծու հայտնությանը: Համենայն դեպս, մենք կարող ենք գիտությունը թողնել գիտնականներին: Աստ-

վածաշնչի գլխավոր վարդապետությունը մարդկանց փրկության, դրախտի առաջին մարդկանց անկման, մարդկային բնության խաթարման և քավության միջոցների մասին է: Ընթերցե՛ք բովանդակ Աստվածաշունչը և կտեսնեք, որ նրա գլխավոր խնդրո առարկան մարդկանց կենսական շահերն են (լինեն նրանք հրեաներ, թե հեթանոսներ). մարդկանց, որ միևնույն ծագումն ունեն (լինեն նրանք բարբարոսներ, սկյութներ, հույներ, ստրուկներ կամ էլ ազատներ). մարդկանց, որ կանչված են չնորհի հանդիսությանը: Աստծու խոսքը սխալ է ընթերցում նա, ով չի լսում, որ այն առավելապես վերաբերում է իրեն և իր մերձավորներին:

Սա Գիրք է, որն անձամբ է խոսում մեզ հետ: Նա չի խոսում այն մասին, թե ինչ կա Լուսնի և Յուպիտեր մոլորակի վրա, ինչ է եղել հին ժամանակներում, ոչ էլ՝ առավել ևս գալիք ժամանակի մասին: Գիրքը վերաբերում է մեզ, մեր այժմյան պարտականություններին, խոսում է այն մասին, թե ինչպես այսօր մեղքը կարող է ներված լինել, և ինչպես մեր հոգիները կարող են միավորվել Քրիստոսի հետ»:

Մեր կողմից վկայակոչված իմաստունը իր ստեղծագործություններից մեկում նշում է, որ քրիստոնյան չպետք է ընթերցի Ավետարանը

բանաստեղծի, գիտնական պրոֆեսորի, մեկնաբանի ու պատմաբանի նման: «Ընթերցեք, գրում է նա, ինչպես մարդ: Կա մի բան, որ գերիվեր է երևակայությունից, գիտությունից, խելքից, հանճարից (թեկուզ աշխարհի ամենամեծ խելքն ու հանճարը լինի). դուք ինձ չեք առարկի, եթե ասեմ, որ խղճմտանքն է այդ բանը, որով պետք է ընթերցել Ավետարանը»:

Իրապես կոպիտ սխալ թույլ տված կլինենք, եթե, տեղի տալով մեր մտքի անհագ հետաքրքրասիրությանը, Աստվածաշնչում փնտրենք բոլոր հարցերի լուծումը: Աստված հաճեց հավիտենական ճշմարտությունից մարդկությանը հայտնել այն, ինչն անհրաժեշտ է երկրային կյանքի իմաստը հասկանալու և Աստծու կամքը այս աշխարհում կատարելու համար: Զհետենք մեր բանականության քմահաճույքներին այնտեղ, որտեղ մարդու գիտակցության համար հանապազօրյա հացի չափով է ամփոփված Աստծու հավիտենական ճշմարտությունը:

Աստվածաշնչում չփնտրենք աստղագիտությանը, երկրաբանությանը, բնախոսությանը կամ կազմախոսությանը վերաբերող այն հարցերի պատասխանները, որոնք մարդու երկրային կյանքի իմաստի ընկալման հետ ընդհանրության որևէ եզր չունեն: Եվ վստահ լինենք,

որ կգտնենք վերոհիշյալ գիտություններին առնչվող բոլոր այն հարցերի պատասխանները, որոնք անհրաժեշտ են մարդու երկրային կյանքի իմաստը հասկանալու և Աստծու կամքը կատարելու համար։ Բայց մի բան լավ հիշենք, որ այն ամենը, ինչ հաղորդում է մեզ աստվածային Հայտնությունը, բացարձակ ճշմարտություն է, և ոչ թե նրա հետ համեմատել, այլ նրանով պետք է ստուգել բոլոր գիտական հիպոթեզները, որոնք շատ հաճախ հիմնված են միամիտու անհեթեթ գիտական հեքիաթիկների վրա և, իբրև որևէ հեղինակավոր գիտնականի անձնապատճեն երևակայության արդյունք՝ հաճախ զուրկ են նվազագույն իսկ գիտական հիմունքներից¹:

Բ. ԱՍՏԾՈՒ ԽՈՍՔԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ԻՍԿ ՄԱՍԻՆ

Սրբացրո՛ւ մրանց քո ճշմարտությամբ, որովհետև Քո խոսքը ճշմարտություն է։

(Հովհ. ԺԷ 17)

Պողոս առաքյալն ասում է, որ ամբողջ Սուրբ Գիրքն Աստծու չնչով է գրված, և ավելացնում է. «Օգտակար է ուսուցման, հանդիմանության, ուղղելու

¹ Как читать Библию, Москва, 1996, стр. 6-7.

և արդարության մեջ խրատելու համար, որպեսզի կատարյալ լինի Աստծու մարդը և պատրաստ՝ բոլոր բարի գործերի համար» (Բ Տիմ. Գ 16-17): Սակայն ինչ-պե՞ս է այդ իրականանում: Դա իրականանում է Աստծու՝ այդ նույն «ազդու և ավելի հատու» (Երր. Դ 12) խոսքի միջոցով, երբ մարդը հավատով ընդունում է այն իր սրտում:

Աստվածաշնչում Աստծու խոսքն անվանվում է «սուսեր», «մուրճ», «հուր», «ճրագ», «սերմ» և «կյանքի խոսք»:

Աստծու խոսքը «Հոգու սուսերն» է (Եփես. Զ 17), որ «կտրում անցնում է մինչև ոգու և հոգու, հողերի և ողածութի բաժանման սահմանը. Աա քննում է սրտի մտածումներն ու խորհուրդները» (Երր. Դ 12):

Աստծու խոսքը «մուրճ» է, որ ջարդում է մեր քարեղեն սրտերը (Երեմ. Ի Գ 29):

Աստծու խոսքը «հուր» է, որ այրում է մեր մեղսալից անմաքրությունը և ջերմացնում մեր՝ բնությամբ «երկնքի արքայության խորհուրդների» նկատմամբ անտարբեր սրտերը (Մատթ. Ժ Գ 11-15): Սրտի մեջ հավատով ընդունված Աստծու խոսքը մաքրագործում, սրբագործում է այն (Հովհ. ԺԵ Յ, ԺԷ Յ):

Աստծու խոսքը «իբրև ճրագ է, որ լուս է տալիս մութ տեղում» (Բ Պետ. Ա 19) և իր լույսով փարատում մեր տգիտության, կրքերի ու մոլորությունների խավարը:

Աստծու խոսքը «սերմ է» (Ղուկ. Հ 11-15): Ինչպես մշակված հողն է սերմանվում ու պտղաբերում, այդպես էլ Աստծու խոսքով փշրված, խոնարհված ու փխրեցված սիրտն է աճեցնում Նրա խոսքի սերմերը և «պտուղ տալիս. մեկի դիմաց՝ երեսուն, մեկի դիմաց՝ վաթսուն, և մեկի դիմաց՝ հարյուր» (Մարկ. Դ 20):

Եվ վերջապես՝ Աստծու խոսքը «կյանքի խոսք» է (Փիլիպ. Բ 16), խոսք, որ շնորհում է կյանք՝ հավիտենական կյանք¹:

Սերմ

Ինչպես որ հողն է աճեցնում այն, ինչ սերմանվում է իր մեջ, այդպես էլ հողեղեն մարդու բնությունն է պտղաբերում այն, ինչ սերմանվում է իր մեջ՝ մեղքի փուշ կամ առաքինության ծաղիկ: Հետեաբար, Աստծու պատվիրանների լույսը թող լույս տա մեր եղբայրության հոգում, ու ամեն տեսակի բարի ծաղիկներ աճեն նրա մեջ (Հովհաննես Երզնկացի):

Մեր նյութական մարմինը հող է, միտքը՝ մշակ և հողագործ, սերմը՝ Աստծու օրենք՝ թե՛ բնականը², թե՛ դրավորը, թե՛ Ավետարանը:

¹ Անդ, էջ 27-28:

² Բնական օրենքը խղճի վկայությունն է, գրավորը՝ Մովսեսի օրենքը:

Ինչպես մշակը, որ շտեմարանից վերցնելով սերմը՝ բերում և ցանում է, այնպես էլ մեր միտքը, Սուրբ Գրքի շտեմարանից վերցնելով Աստծու օրենքների սերմը, հավատի իմաստությամբ, իբրև ջրով, ոռոգում է այն՝ միշտ մտքում հիշելով այս աշխարհից մահվամբ դուրս գալու մասին, «խորհելով վերին բաների մասին, ուր Քրիստոս նատած է Աստծու աջ կողմում» (հմմտ. Կող. Գ.2): Այն նման է ջրի և զվարթարար ցողի: Իսկ հավատի դավանությունը սրտով ու լեզվով խոստովանելը նման է արեի, որը ծագում է և սնուցում հոգեոր բույսերը: Ապա մեր հողը պտղաբեր է դարձնում բույսերի արմատը, որ հաստատված է հոգում, և մարմնի զգայարաններում ծաղկեցնում է զանազան անուշահոտ առաքինություններ՝ այստեղ պտղաբերելով գործով, իսկ հանգերձյալ կյանքում՝ արդյունքով և ըստ գործերի հատուցմամբ (ս. Գրիգոր Տաթևացի):

«Աստծու խոսքը սերմ է,՝ գրում է մի հեղինակ,՝ արտը, ուր ցորեն չի ցանվել, աճեցնում է մարդու սննդի համար անպիտան որոմ, որը հյութեղ ու գեղեցիկ է, քանի դեռ մատաղ է, և այլանդակ, երբ չորանում է: Այդպիսին է նաև այն մարդու սիրտը, որի մեջ ցանված չէ Աստծու խոսքը. այն մեղքով ապականված իր բնությամբ ոչ մի բարի, աստվածահաճո բան աճեցնել չի կարող:

Մեր բնատուր հատկությունները կարող են դրավիչ լինել, քանի դեռ լեցուն են պատանեկան եռանդով, խանդավառությամբ, երիտասարդության պոեզիայով։ Ծերանալիս (մի քանի երջանիկ բացառություններով) մարդու մեջ գերիշխում է բոլորիս այնքան հայտնի չոր, վանող եսասիրությունը։ Սակայն երբ մարդու սիրտը հավատով ընդունում և պահում է Աստծու խոսքի՝ կենդանի խոսքի սերմը, մաքրագործվում է անպիտան որոմներից՝ կրքերից ու բղջախոհությունից։ Սերմը սրբագործում ու կերպարանափոխում է սիրտը և թթվամորի պես, որ խառնվում է ալյուրին, մնալով նրա մեջ, վերածվում է հավիտենական կյանքի սերմի, ինչպես ինքն է հավերժ կենդանի (Ա.Պետ. Ա.23, Ա.Հովհ.Բ.17, Մատթ. ԺԳ.33) ու «կյանքի խոսք» (Փիլիպ. Բ.16, Գործք Ե.20): Այդժամ նաև ծերության մեջ «երիտասարդությունը նորոգվում է արծվի պես» (Սաղմ. ՇԲ.5)»¹:

¹ Անդ, էջ 16-17:

Կերակուր

Հավատի մեջ մանուկ մեր հոգիների համար Աստծու խոսքի կաթը խմենք Սուրբ Գրքից, ուր պատմվում է ամեն բանի պատճառ Հոր, Նրանից ծնված Որդու, որ մեզ ծնեց ավազանով և ընծայեց Հորը, ինչպես նաև Հորից բխող Սուրբ Հոգու՝ Մխիթարիչի և Հոր և Որդու Փառակցի մասին: Սուրբ Գրքի ընթերցումը համարենք մեր ամենօրյա զբաղմունքն ու հոգսը, հանգիստն ու փառքը, կերակուրը և ուրախության գինին: Ինչպես որ ջուրը պտղավետ ու տերեաշատ է դարձնում ծառը, նմանապես աստվածային Գրքերի ընթերցումը աճեցնում է աստվածասերների միտքն ու հոգին և զարդարում առաքինության պտուղներով (Սարգիս Շնորհալի):

Շատերն ասում են, թե ամեն ոք գիտե՝ ինչ են մեղքն ու արդարությունը, ամեն մարդ տեղյակ է չարից հեռանալու և բարիք գործելու մասին, բայց Գրքով զբաղվելը շահ չէ և խափանում է կարևոր գործերը: Սա իրականացումն է Ամոսի բերանով ասված Տիրոջ սպառնալիքի. «Ոչ թե հացի սով կամ ջրի ծարավ, այլ Տիրոջ խոսքը լսելու սով պիտի ուղարկեմ» (Ամոս Ը 11): Մարգարեն նկատի ունի, որ այս սովից սմբում և ապականվում են այն հոգիները, որոնք չեն լսում Աստ-

ծու պատգամները։ Քանզի ինչպես մարմինն է մահանում առանց կերակրի, նույնպես և հոգին չի կարող ապրել առանց Գրքի խրատների։ Այս մասին է Մովսեսի խոսքը (Բ Օրենք Հ 3): Նույն բանը վկայում է նաև Տերն իր փորձության ժամանակ. «Միայն հացով չէ, որ կապրի մարդ, այլ՝ Աստծու ամեն խոսքով» (Ղուկ. Դ 3):

Եթե Աստծու պատվիրանները հավիտենական կյանք են, ապա ակնհայտ է, որ դրանցից զրկվածները մեռած են հավիտենական կյանքի համար, ինչպես որ անհրաժեշտ կերակրից զրկվածներն են մահանում այս կյանքում...

Պողոս առաքյալը նույն բանը նկատի ունի, երբ ասում է. «Աստծու շնչով գրված ամեն գիրք օգտակար է ուսուցման, հանդիմանության, ուղղելու և արդարության մեջ խրատելու համար, որպեսզի կատարյալ լինի Աստծու մարդը և պատրաստ՝ բոլոր բարի գործերի համար» (Բ Տիմ. Գ 16-17), այնինչ նրանք պնդում են, թե Գրքերը պետք չեն:

Արդ, ի՞նքդ որոշիր, թե ով է իրավացի՝ Պողոսը, թե՝ Սուրբ Գիրքն արհամարհող վայրենամիտները, որոնց Եսայի մարդարեն վայ է տալիս. «Վայ նրանց, որոնք արհամարհում են, արհամարհելով արհամարհում են օրենքները» (Եսայի Ի Դ 16)... Բայց հարցնեմ նրանց. մի՛թե Աստված զուր հրամայեց Մովսեսին ու մարդարեներին

գրել Սուրբ Գիրքը, կամ մի՞թե առաքյալները զուր գրեցին Ավետարանները, իրենց թղթերը և Գործք առաքելոցը, իսկ վարդապետները՝ իրենց գրվածքները։ Աստծու պատվիրանի նշանախեցն (փոքրիկ տառանշանը) իսկ ավելի պատվական է, քան երկինքն ու երկիրը։ Այդ իսկ պատճառով Աստված Մովսեսի միջոցով պատվիրում է. «Այս պատգամները, որ այսօր հաղորդում եմ քեզ, կապահես մտքիդ ու հոգուդ մեջ։ Դրանք կհաղորդես քո որդիներին և դրանց մասին կիսուես, երբ տամը նատած ես, ճանապարհ գնալիս, պառկելիս ու վեր կենալիս։ Դրանք, որպես ճշան, կկապես քո ձեռքին, որ մնան ամշարժ քո աչքերի առջև, դրանք կգրես քո տների մուտքին և դուների վրա» (Բ Օրենք Զ 6-9): Սատանայի շուրթերով են խոսում նրանք, ովքեր խափանում են Սուրբ Գիրքը լսելը (Խոսրով Անձնացի):

Սուրբ Գրքի ընթերցումը սնում է, խոկումը՝ կերակրում և աղոթքը զորացնում է (Օգոստիհու Երանելի):

«Միայն հացով չի ապրի մարդ, այլ՝ այն ամեն խորպով, որ դուրս է գալիս Աստծու բերանից» (Մատթ. Դ 4):

Տերը չասաց, թե՝ «Ոչ միայն հացով է ապրում մարդը», և լոեց, որովհետեւ կան նաև այլ կերակուրներ, որոնցով ապրում են մարդիկ. այլ ավելացրեց, թե՝ «այն ամեն խոսքով,

որ դուրս է գալիս Աստծու բերանից»: Քանզի մարդը կազմված է հոգուց և մարմնից. ինչպես որ մարմինն է ապրում նյութական հացով, այնպես էլ հոգին՝ աննյութական խոսքով, բայց ոչ մարդկանց ունայն խոսքով, այլ նրանցով, որ Աստծուց են և կյանք են շնորհում մարդկանց: Որպէսք են այդ խոսքերը. դրանք Աստծու՝ միայն Մովսեսի և մյուս մարդարեների հետ խոսածները չեն կամ Աստծու Բանի՝ այս աշխարհում խոսածները, այլև բոլոր Գրքերը, որ Աստծու պատվիրաններն են ուսուցանում մարդկանց, Աստծու խոսքերն են և մանավանդ՝ Ավետարանի ինքնախոս խոսքերը: Դարձյալ՝ այլ մտքեր ես. ասում է՝ ոչ միայն զգալի հացով կապրի երեկի մարդը, այլ ինձնով, որ Աստծու խոսքն եմ՝ միացած սրան, որ ոչ միայն իմ անձին կարող եմ կյանք տալ, այլև բոլոր մարդկանց, ովքեր հավատով և սրբությամբ են մոտենում ինձ (ս. Ներսես Շնորհալի):

Յուրաքանչյուր մարդկային միտք, յուրաքանչյուր մարդկային խոսք ներգործություն է: Եվ եթե դա հավաստի է մարդկային մտքի և խոսքի համար, ապա մանավանդ հավաստի է Աստծու խոսքի՝ Քրիստոսի խոսքի համար:

Երբ մենք լսում ենք Քրիստոսի ավետարանական խոսքը՝ անուշաբույր, մեղմիկ ու

Քաղցրալուր. «Երանի՛ Արանց, որ սրտով մաքուր են, որովհետև Արանք Աստծուն պիտի տեսնեն» (Մատթ. Ե 8), «Սովորեցեք Ինձնից, որ հեզ եմ և սրտով խոնարհ» (Մատթ. ԺԱ 29), բնավ չենք մոռանում, որ այդ հեղ խոսքը այն անընթափական է անսահման զորությունն է, որը խավարի անէությունից լուսեղեն կյանքի կոչեց ամենայն գոյավորը, բոլոր անթիվ աշխարհները, իրենց բազմազանության մեջ անհամար բոլոր բանական և ոչ բանական արարածներին:

Քրիստոսի խոսքը՝ զգեստավորված խոնարհ, զգայականորեն ընկալելի մարդկային խոսքի ձեփ մեջ, որը կարող է արտահայտվել նույնիսկ գծագրական-տեսողական նշաններով՝ գրավոր կերպով, այն խոսքն է, որն իր խորքում, իր հիմքում մեծ, ամենակարող, ամենայնի Արարիչ Աստծուն ներգործությունն է:

Խոսքի մասին հարկ է ասել այն, ինչ Աստվածաշնչում ասվում է իր՝ Աստծու մասին, այսինքն՝ նա «ոչնչացնող կրակ» է, որին հողեղենները պետք է մոտենան մեծ ահով ու դողով (Եբր. ԺԲ 28-29):

«Խիստ ընտիր են Քո խոսքերը» (Սաղմ. ՇԺԸ 140), ասում է սաղմոսերգուն:

Քրիստոսի խոսքը ամենախորհրդավոր խոսքն է. այն անմատչելի է, անընթափական հան-

ճարների համար, բայց միաժամանակ այնքան պարզ է, որ մատչելի է նույնիսկ մանուկներին:

Քրիստոսի խոսքը այնքան մոտ է մեզ, այնքան հասկանալի, բնականաբար խորապես հոգեհարազատ մեր մարդկային սրտին և, այդուհանդերձ, անկասկած անսահմանորեն գերիվեր է արարածի բնության զորությունից. այն աստվածային է, անհասանելի, գերբնական և, ինչպես ասում է Պողոս առաքյալը, «մարդկային չէ և մարդուց վերցված չէ» (տե՛ս Գաղ. Ա 11-12):

Ազատ մարդուն ուղղված Քրիստոսի խոսքը հակիրճ է, անբռնադատ և միաժամանակ՝ մարդուն ամենեին ոչ հատուկ անսահման իշխանությամբ օժտված, իբրև բացարձակ հեղինակության խոսք, իբրև բովանդակ կեցության ամենազոր Տիրոջ խոսք. «Երկինք ու երկիր պիտի անցնեն, բայց իմ խոսքերը չպիտի անցնեն» (Մատթ. իԴ 35):

Իոր հավատով ընկալված Քրիստոսի խոսքը մարդուն առաջնորդում է գեղի հավիտենական կյանք մի ճանապարհով, որում նա կհանդիպի շատ անսովոր, խորհրդավոր բաների: Այդ վեճմ ճանապարհին կբացվի նրան այն ամենը, ինչ մարդն իր կեցության ընթացքում կարող է վերապրել և ճանաչել:

Քրիստոսի խոսքը հասնում է խավարչտին

անդունդի ծայրասահմաններին՝ ի հայտ բերելով ճշմարտության բազմաթիվ հատկանիշների ընությունը, որոնք խավարում առինքնում են մարդուն:

Քրիստոսի խոսքը կրակ է, որ փորձում է այն ամենը, ինչ որ կա մարդու և առհասարակ աշխարհի կեցության մեջ, քանզի, ինչպես վկայում է Պողոս առաքյալը, «Նրա առաջ չկա անտեսանելի արարած» (Եբր. Դ 13):

Քրիստոսի խոսքը հոգի է և կյանք, սիրոլում և երկնային խնդություն, Քրիստոսի խոսքը աստվածային ինքնագոյն լույսն է: Այն ներազգում է ոչ թե մակերեսային տրամաբանական բանականության, այլ մարդու սրտի խորքերի վրա: Եվ նա, ով ընդառաջ ենելով նրան՝ անմնացորդ բացում է իր սրտի ամենախորին պարունակները, որ պատշաճ կերպով ընկալի այդ աստվածային լույսը, որպեսզի միաձուլվի նրա հետ, դառնում է աստվածանման: Կյանքով ընկալված Քրիստոսի խոսքը աստվածացնում է մարդուն (Վարդապետ Սոֆրոնի):

Գ. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԲԱՐԵՐԱՐ ԱԶԴԵՅՑՈՒԹՅՈՒՆԸ

Ուկուց ու շատ թամկագին քարերից ցամկալի են դրանք,
Նովապես և քաղցր՝ մեղրի խորսից ավելի:
Եվ քանի որ Քո ծառան պահպանում է դրանք,
Պահպանելու վարձը մեծ կլինի:

(Սաղմ. ԺՀ 11, 12)

Մեր օրերում Ավետարանի՝ մարդկանց վրա
գործած բարերար ազդեցության մասին ամենից
լավ է հարցնել նրանց, ովքեր բարեպաշտ սովորություն ունեն ամեն օր այդ հրաշալի Գրքից
ինչոր բան կարդալու: Հավանաբար նրանք
կասեն մեզ, թե Ավետարանը դյուրացնում և
ամոքում է ամեն վիշտ, նվիրագործում ու հաստատում
մաքուր ինդությունը, ինչպես բովի
մեջ՝ փորձում, մաքրագործում և վսեմացնում
է զգայական ուրախությունը:

Ավետարանն օժտված է նաև խորհրդավոր,
մարդու քննող բանականության հայացքից
սպրդող չնորհական զորությամբ, որը մարդու
հստակ գիտակցումից անկախ ի զորու է վերականգնել, կենդանացնել, մխիթարել և բժշկել:
Այս զորությունը ելնում է Ավետարանի՝ Աստծու կենդանի, ազդու և հատու խոսքից: Այս
զորությունն ի հայտ է գալիս այն ժամանակ,

Երբ մարդն ընկնում է ծանր կացության մեջ (օրինակ՝ երբ նրանից երես են թեքում երջանկությունը, ընկերներն ու հարազատները, արդարությունը, նրան լքում է այն ամենը, ինչի վրա կարող էր հույս դնել): Դիմելով Ավետարանին՝ նա այնտեղ գտնում է օգնություն, մխիթարություն և հանգստություն նեղությունների ծանրության տակ կքած իր հոգու համար:

Այսպիսով, եթե դուք կարիքի, վշտի և անձկության մեջ եք, եթե ձեզ հալածում են, նվաստացնում, վիրավորում, զրկում հասանելիքից, փութով դիմե՛ք սուրբ Ավետարանին՝ փրկարար համբերության շնորհական արիությամբ ու ցանկալի մեծահոգությամբ հավաստիորեն լցվելու համար: Ոչի՞նչ, եթե դժբախտություններն ու տրտմությունը կարծես դարձել են ձեր անբաժան ուղեկիցն ու մշտական վիճակը. այս դեպքում ևս սուրբ Ավետարանից կստանաք այն, ինչը ձեր ծանր ու խավարամած կյանքը կդարձնի դյուրին ու լուսավոր: Սուրբ Ավետարանն իր հրաշալի կենարար զորությամբ իրական կդարձնի ձեզ համար Տիրոջ՝ հրեաների հետ զրուցելիս ասած խոսքը. «Եկե՛ք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և Ես ձեզ կհանգստացնեմ» (Մատթ. ԺԱ 28):

Սուրբ Ավետարանի Էջերը տոգորված են

աստվածային առանձնահատուկ գորությամբ, որը կարող է վերականգնել, մխիթարել, բժշկել, կենդանացնել, բարելավել, վսեմացնել ու սրբագործել մարդուն։ Ո՞վ չունի այս գորության կարիքը : Բոլորն էլ անխտիր ունեն։ Հետեաբար բոլորն էլ, առանց բացառության, պետք է լսեն կամ կարդան սուրբ Ավետարանը¹:

Սուրբ Սերաֆիմ Սարովսկին, որն յուրաքանչյուր շաբաթ կարդում էր բոլոր Ավետարանները, Գործք առաքելոցը և առաքելական թղթերը, Սուրբ Գրքի ընթերցանության մասին այսպիսի խոսքեր ունի. «Սրանով ոչ միայն հոգիս, այլև մարմինս է երանանում ու ոգեզենանում։ Սուրբ Գիրքն ընթերցելիս ես զրուցում եմ Տիրոջ հետ, հիշողությանս մեջ մտապահում եմ Նրա կյանքն ու չարչարանքները, զօր ու գիշեր բարեբանում, փառաբանում եմ Նրան և գոհանում Նրա բոլոր ողորմությունների համար, որ առատորեն շնորհվում են մարդկությանն ու ինձ՝ անարժանիս»:

Այնքան շոշափելի է ինձ համար շնորհի ներկայությունը Աստծու խոսքի մեջ, որ սիրտս հոգեոր ցնծությամբ է համակվում. ինձ նույնիսկ թվում է, թե կարդում եմ, և Աստծու շնորհը հեղվում է իմ մեջ (ս. Իոան Կրոնշտադտսկի):

¹ Անդ, էջ 17-18:

Թեկուզ միայն ընթերցի՛ր Գիրքը: Եթե նույնիսկ ոչինչ չհիշես, միևնույն է, ընթերցանության ընթացքում օգուտ կստանաս (Ամբրո-սի Օպտիմալի):

Մխիթարություն

Ուրեմն, ինչ որ գրվեց, գրվեց, որ մենք սովորեաք, որպեսզի համբերությամբ և գրքերի պարզեած միսիթա-րությամբ հույսն ընդունենք:

(Հոռմ. ԺԵ 4)

Լսե՛ք, աղաչում եմ ձեզ, բոլոր կանչված-նե՛րդ. ձեռք բերեք հոգու բժշկության Գրքերը: Եթե չեք կամենում բոլոր գրքերը, ձեռք բերեք գոնե Նոր Կտակարանը, Գործք առաքելոցը, Ավետարանը՝ մեր մշտական դաստիարակնե-րին: Թե վշտացել ես, կառչի՛ր դրանց, ինչպես բալասանով լեցուն անոթի. Եթե զրկվել ես ինչ-որ բանից կամ մերձավորիդ մահը, կորուստն ես տեսել, այդտեղի՛ց միսիթարություն գտիր քո դժբախտության մեջ: Կամ, կառչելուց առավել, սրտիդ մեջ ընդունի՛ր և մտապահի՛ր...

Ո՛չ փառքի մեծությունը, ո՛չ իշխանության բարձրությունը, ո՛չ ընկերների ներկայությունը, ո՛չ էլ մարդկային որևէ այլ բան ի զորու չեն ամոքել վիշտն այնպես, ինչպես Աստվա-ծաշնչի ընթերցանությունը: Ինչո՞ւ: Որովհետեւ

սրանք երկրավոր և ժամանակավոր բաներ են, ուստի և նրանց սփոփանքն էլ վաղանցիկ է, իսկ Սուրբ Գրքի ընթերցանությունը զրույց է Աստծու հետ:

Սուրբ Գրքի չիմացությունն է բոլոր չարիքների աղբյուրը: Մենք պատերազմելու ենք գնում անզեն, հապա ինչպես պիտի փրկվենք: Դյուրին է փրկվել Աստվածաշնչով, իսկ առանց դրա անհնար է (ս. Հովհաննես Ոսկեբերան):

Խաղաղություն

Քո օրենքը սիրողները մեծ խաղաղության մեջ են, և մրանց համար չկա գայթակղություն:

(Սաղմ. ՇԺԸ 165)

Անհնար է, որ հոգին խաղաղության մեջ հանգրվանի առանց զօր ու գիշեր Տիրոջ օրենքը ուսանելու, քանզի այն գրված է Սուրբ Հոգու կողմից: Սուրբ Հոգին Գրքից անցնում է հոգու մեջ, և հոգին լցվում է քաղցրությամբ ու բավականությամբ և այլևս չի ցանկանում սիրել երկրայինը, քանզի սերը երկրայինի նկատմամբ ամայացնում է հոգին: Իսկ նման վիճակում հոգին վհատվում է ու վայրենանում:

Տեսնելով, որ հոգին չի հաղորդակցվում

Աստծու հետ՝ թշնամին սասանում է այն և, չհանդիպելով դիմագրության, նվաճում է միտքը՝ հոգին մի չար մտածումից մյուսին մղելով։ Այդպիսով, հոգին ամբողջ օրն անցկացնում է այս թոհութոհի մեջ և ի զորու չի լինում հստակորեն հայել Աստծուն (Սիլուան վանական)։

Եկե՛ք և հաղորդվեցե՛ք անգերազանցե-լի և իր նմանը չունեցող իմաստությանը, սո-վորեցե՛ք Աստծու խոսքից, ճանաչեցե՛ք հա-վիտենական թափափորին։ Աստծու խոսքն իր զորությամբ թափանցում է մեր հոգիների մեջ։ Օ՛, ինչպիսի՛ խաղաղության բանքեր է քեզ հա-մար, մարտնչո՞ղ հոգի։ Ինչպիսի՛ միջոց է կրքե-րի անագորույն պոռթկումները սանձահարե-լու համար։ Այս զորությունը մեզ չի դարձնում ո՛չ բանաստեղծ, ո՛չ իմաստուն, ո՛չ էլ անվանի հուետոր, այլ առաջնորդում է դեպի վեհ գաղա-փարներ. մեզ՝ մահկանացուներիս, տանում է անմահության՝ այսրաշխարհից ուղեկցելով դեպի անդրաշխարհ (ս. Հուստինոս Վկա)։

Եթե խռովված ես, նախ և առաջ կարդա՛ Ավետարանը շշնջալով, որ ականջներդ լսեն, կարդա՛ թեկուզ առանց հասկանալու։ Սուրբ Հոգու խոսքը կհալածի հոգեկան խավարը, առավել ևս՝ թշնամականը (Ամբրոսի Օպտիմակի)։

Մի ծեր ասաց, թե Սուրբ Գրքի ընթերցումը, տքնությունն ու աղոթքը առ Աստված են դարձնում մոլորված մտքերը, իսկ սաղմոսերգությունը, համբերությունը և ողորմությունը հանդարտեցնում են բարկությունը (Վարք հարանց):

Տիրոջ խոսքը մաքրազործում, իմաստնացնում և լուսավորում է հոգիները

Տիրոջ օրենքն՝ անքիծ է և վերափոխում է հոգիները.
Տիրոջ վկայությունը ստուգ է և իմաստում է դարձնում տիասանին:

Տիրոջ արդարությունն ուղիղ է և զվարճացնում է արտերը.

Տիրոջ պատվիրանները լուս են և լուս են տախս աշքերին:

Տիրոջ երկուոր սուրբ է և սուրբ է մանուս հավիտյան:

Տիրոջ դատաստանները ճշմարիտ են և ինքնին՝ արդար:

(Սաղմ. ԺԸ 8-10)

Ոչինչ այնպես չի սնում հոգին և զորացնում միտքը, որքան Ս. Գրքի ընթերցանությունը: Դուք դրանից առավելագույն օգուտ կստա-

¹ Օրենքը միայն Աստծու պատվիրանների ամբողջությունը՝ Թորան չէ: Յրեաները Յին Կտակարանը անվանում են ըստ իրենց կողմից ընդունված գրեթի բովանդակության եռամսա բաժանման՝ Օրենք, Սարգարեներ և Գրվածքներ, կամ հակիրծ՝ Օրենք: Սա, փաստորեն, փոխանունություն է, այսինքն՝ երբ մասով անվանում են ամբողջը, որը և նույնանում է բովանդակ հինկտակարանյան հայտնության հետ:

նաք. կլինեք հաստատակամ, ազնիվ, բարեպաշտ, Քրիստոսի սիրով կկատարեք ձեր պարտականությունները և անցողիկը ավելի ցածր կհամարեք, քան ամենայն մարդկային միտք ու հասկացություն գերազանցող խոստացված հավիտենական բարիքները (Ա. Թեոդ)

Փութաջանորեն կառչի՛ր Ս. Գրքին, և Գիրքը դուրս կը շի անմաքրությունները (այսինքն՝ պիղծ մտքերը) (Ա. Անտոն Անապատական):

Ինչպես որ գիշերն ի զորու չէ կլանել երկնակամարում փայլող աստղերը, այդպես էլ, անշուշտ, երկրի չարությունը չի կարող խավարեցնել Ս. Գրքի հիմքին ամուր կառչած հավատացյալների հոգիները (Հոռմի պապ Զեֆիրիհա):

Զգիտեմ՝ արդյոք կարո՞ղ է նորոգվել միտքն այն մարդու, ով անտարբեր է Ս. Գրքի և հոգեոր գիտության մեջ վարժվելու նկատմամբ։ Եթե նույնիսկ այս վարժանքի միջոցով չնորոգվի այս միտքը, որն այստեղ իր գիտական ճանաչողության սահմանների ընդլայնումն է փնտրում, ապա, համենայն դեպս, կնորոգվի այն միտքը, որն առաջնորդում է մեզ դեպի ազնվություն, մարդասիրություն, հավատ և կայունություն։ Ով այսպես չի նորոգում իր միտքը, նա մոլոր ված է խաբած (Որոգինես Ալեքսանդրացի):

Այնժամ, երբ միտքը ցրված է, աղոթքից առավել անձնատությունը եղիր ընթերցանությանը, քանզի Սուրբ Գրքի ընթերցանությունը անաղարտ աղոթքի աղբյուրն է:

Եթե անգամ կարճ ժամանակով ընդհատվի Ս. Գրքի ընթերցումը, մարդը կբռնվի կրքերով (ս. Իսահակ Ասորի):

Աստծու պատվիրանների խորհրդով սուրբ զորությունները մաքրում են մեզ բոլոր աղտեղություններից և բնության խորհուրդներով ու աստվածային խոսքերով բերում են մեզ կատարյալ իմաստության (Եվագր Պոնտացի):

Դարձի՛ր Աստվածաշունչ Գրքերի ամենօրյա զրուցակիցը և նրանց հետ զրույցի միջոցով կհալածես օտար մտքերի հարձակումները։ Ով Սուրբ Գրքերի մեջ վարժվելով՝ սրտում ամբարում է հոգևոր գիտության գանձերը, նա դյուրությամբ վանում է օտար մտքերը։

Հսկումի գիշերային ընթերցանության ժամանակ Աստվածաշունչ Գրքերը լսելիս քնով չխլացնենք մեր լսողությունը, ոչ էլ հոգին գերության հանձնենք մտքերին։ Այլ Գրքի խայթոցով խոցենք մեր սրտերը, որ խոնարհվելով՝ լցվենք փրկության հանդեպ նախանձախնդրությամբ և խափանենք զազրելի ան-

Գուշթությունը (ս. Նեղոս Սինայեցի):

Հույս են սրբազան Գրքերը՝ Աստծուց մեզ պարգևված, և լույսի ցոլքեր են արձակում մեր մտքերում ու լուսավորում՝ դրվածքների միջոցով տեսնելու հոգեղենը (ս. Դիոնախոս Արեւագացի):

Աստծու խոսքը լույս է և հուր, քանզի սրբագործում է բնական մտքերը և այրում անբնականները, ինչպես նաև փարատում է նրանց զգայական կյանքի խավարը, ովքեր պատվիրանապահությամբ ձգտում են բաղձալի լավագույն կյանքին, և դատաստանի ու դատապարտության հրով պատժում է նրանց, ովքեր ինքնահաճ կերպով, մարմնի սիրուն կառչում են զգայական կյանքի այդ խավար գիշերին (ս. Մաքսիմ Խոստովանող):

Սուրբ Գրքի ընթերցանությունը կարող է բավականաչափ լուսավորել ու հավաքել միտքը, քանզի աստվածաշնչյան Գրքերը Սուրբ Հոգու խոսքերն են և ըստ ամենայնի իմաստնացնում են ընթերցողներին... Հոգեոր զորություն ստանալուց առաջ մի՛ կարդա ճշմարիտ հավատին խորթ գրքեր, քանզի դրանք լցված են խավարով և մթագնում են տկարների մտքերը (ս. Հովհաննես Կղեմաքոս):

Ինչպես որ աստղերի փայլվլող բույլն է լուսավորում երկինքը, այդպես էլ աստվածային խոսքերի ճշմարտությունն է լուսավորում մարդուն՝ ներսում դրված ճրագի պես։ Ուստի բոլորս էլ կրենք ճշմարտության միևնույն պատկերը, քանզի Տերը համախոհներին է տանը բնակեցնում (ա. Նեղոս Սիմայեցի)։

Իրենց ձեռքը Ավետարանի մաճի վրա դրածները թող այլևս չետ չնայեն և չլսեն իրենց հետ պահողներին, ամբողջ մտքով թող առաջադիմեն և մարմնով ընթանան այնպես, ինչպես վայել է այն կոչմանը, որին կոչվեցին (Հովհաննես Սարկավագ)։

Հոգեոր գինին, որ Սուրբ Գրքի իմաստությունն է, տո՛ւր նրանց, ովքեր զուրկ են առաքինությունից, տրտում ու տկար են մեղքերի առատությունից, նրանց, ովքեր մշտապես ցավում ու տրտում են խղճմտանքից, նրանց տո՛ւր այն գինին, որն ասում է. «Ոչ թե արդարներին, այլ մեղավորներին ապաշխարության կոչելու եկա», և թե՝ «Եկե՛ք բոլոր հոգնածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ», և թե՝ «Հիսուս Քրիստոս աշխարհ եկավ մեղավորների համար, որոնց գլուխը ես եմ» (ա. Գր. Տաթևացի)։

Դ. ԱՍՏՎԱԾԱՇՆՁԻ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԹԱԽՆԱԿԱՆ ԱՍՏՎԱԾՊԱՀՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ¹

Թող Քրիստոսի խոսքը բնակվի ձեր մեջ առատապես, որ կատարյալ իմաստությամբ ուսուցածքը և խրանքը միմ-յանց՝ սաղմուներով, օրհներգություններով, հոգևոր երգերով և երախտագիտությամբ ձեր սրտերում օրհնելով Աստծու։

(Կոդ. Գ. 16)

Աստվածասիրությունը Գրքից է ծնվում մարդու մեջ։ Աղոթքների և արտասուրքների, պահքի և ողորմության, խոնարհության ու սիրո հանդեպ սերը Գրքից է ծագում մարդկանց մտքում։ Արիության ու համբերության, հուսու և երկյուղի ու բոլոր բարեգործությունների պատճառը մեզանում Սուրբ Գիրքը մաքուր մտքով կարդալուց է։ Նաև օրենքների, կանոնների և բոլոր բարեկարգությունների պատճառն ու հաստատությունն աշխարհում Գիրքն է։

¹ Աստվածապահություն ասելով հասկանում ենք Եկեղեցում հոգևորականների ձեռամբ և ժողովրդի մասնակցությամբ մատուցվող սրբազն արարողությունների ու խորհրդակատարությունների ընդհանրական և հավատացյալի՝ պահքով, աղոթքով, ողորմությամբ ու բարեպահությամբ արտահայտվող առանձնական կարգերը՝ ուղղված Աստծուն պաշտելուն և Նրա ամենասուրբ կամքը կատարելուն։ Առանձնական աստվածպահության մեջ մանավանդ կարևոր է Սուրբ Գրքի հանապազ ընթերցանությունը, որը հավատացյալի սրբազն պարտականությունն է, նրա բովանդակ հոգևոր կյանքի օրինաբեր աղբյուրը։

Այլև մեռոնի, խաչի և եկեղեցու օրհնությունը, քահանայական ձեռնադրությունը, թագավորական օծումը և քրիստոնեական պատարագի բաշխումն ըստ Սուրբ Գրքի ենք կատարում։ Նաև քրիստոնեական հավատն ու մկրտությունը, օրինավոր ամուսնությունը, մահն ու կյանքը, հանդերձյալ կյանքի ծանոթությունը, երկնքի արքայության մասին տեղեկությունն ու աստվածանաչողությունը և ամեն ինչի սկիզբն ու վախճանը մենք Գրքից ենք իմանում։ Եվ չկա որևէ հոգեոր գործառություն կամ բարեկարգություն, որ առանց Գրքի լինի (Խորրով Անձնացի):

Կատարյալ քրիստոնյայի բովանդակ կյանքը նման է սրբազան հանդեսի. Նրա զոհաբերությունները աղոթքներն են, նրա աստվածաշտությունը՝ Աստվածաշնչի ընթերցանությունը... Քաջատեղյակ լինելով Սուրբ Գրքին և ծերության մեջ էլ ընթերցելով այն՝ նա ապրում է՝ լիովին հնագանդվելով Ավետարանին... Նրա բովանդակ կյանքը ոչ այլ ինչ է, քան ուսում և գործեր՝ հիմնված Տիրոջ վարդապետության վրա (Կղեմես Աղեքսանդրացի):



ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Ա. ՀԱՎԱՏՈՎ ԿԱՐԴԱԼՈՒՄ ՄԱՍԻՆ

Ահա թե ինչու մենք շարունակ գոհովքուն ենք տալիս Աստծուն ճրա համար, որ մեզմից Աստծու խոսքի լորժառնելով՝ այն ընդունեցիք ոչ որպես մարդկանց խոսք, այլ ճշմարտապես՝ որպես Աստծու խոսք, որ ներգործում է հաև ձեր՝ հավատացյալներիդ մեջ:

(Ա. ԹԹեսաղ. Բ 13)

Հավատն ունի մեկ անուն, բայց՝ երկու զորություն։ Առաջինը դավանության հավատն է՝ Սուրբ Երրորդության խոստովանությունը, որ յուրաքանչյուր անձ ստանում է ավագանից։ Երկրորդն այն հավատն է, որ Սուրբ Գրքում գրված խոսքերը, որոնք Սուրբ Հոգին խոսեց մարդարեների, առաքյալների և եկեղեցու վարդապետների բերանով, սուտ և առասպել չի համարում, այլ հավատում է, որ ճշմարիտ և ուղիղ են, որպես թե իր աչքերով է տեսնում այն ամենը, ինչ եղել է, պիտի լինի, և որ է (ս. Ներսէս Շնորհապի)։

Սուրբ Հոգու ներշնչանքով գրված Սուրբ Գիրքը կարող է հասկանալի լինել միայն Սուրբ

Հոգու օգնականությամբ։ Իսկ այդ շնորհին արժանանալու համար պետք է մանուկներին հատուկ դյուրահավատ սիրո ունենալ։ Հիշենք Փրկչի խոսքերը. «Գոհություն եմ հայտնում Քեզ, Հայր, Տե՛ր երկնքի ու երկրի, որ ծածկեցիր այս բանը (Երկնքի արքայության խորհուրդները) իմաստումներից և գիտումներից ու հայտնեցիր մանուկներին» (Մատթ. ԺԱ. 25): Հետևաբար մանկական վստահությամբ ընթերցենք Աստծու խոսքը՝ իբրև երկնային Հոր՝ մեզ հասցեազրված ուղերձ։

Մեծ տարբերություն կա Աստծու խոսքի տառացի իմաստը սեփական մտքով հասկանալու և այն իբրև ճշմարտություն ընդունելու կամ հավատի շուրթերով ճաշակելու և սրտում ընդունելու միջև։ Ինչպես որ համտեսված սնունդը հաճելի է քիմքին և սնուցում է մարմինը, այդպես էլ հավատով ճաշակված Աստծու խոսքը ուրախացնում ու սնում է հոգու կյանքը. «Ծաշակեցե՛ք և տեսե՛ք, թե որքան քաղցր է Տերը» (Սաղմ. Լ. Գ. 9), - բացականչում է սաղմոսերդուն, ում համար «Տիրոջ դատաստանները» քաղցր են «մեղրից ու խորսխից ավելի» (Սաղմ. ԺՂ. 11):

Մեծ տարբերություն կա Աստծու խոսքն իբրև ճշմարտություն ընդունելու և Աստծու խոսքին հավատալու միջև։ Կարդալով հարավային պտուղների նկարագրությունները՝ մենք

իմանում ենք, թե ինչպիսին է դրանց տեսքը և համը, չենք կասկածում դրանց գոյությանը, սակայն որքա՞ն մեծ է տարբերությունը, երբ ճաշակում ենք դրանք: Ի՞նչ հաճելի, թարմացնող ու կենարար զգացողությամբ ենք համակվում: Այսպիսին է Սուրբ Գիրքի խոսքի ներգործությունը, երբ հավատով ենք ընթերցում: Աստվածաշունչը սիրող յուրաքանչյուր ոք գիտե այս բանը: Երբեմն ընթերցվում են տողեր և էջեր, բայց սիրտը սառն է մնում: Հանկարծ ինչ-որ խոսքի հանդիպելիս սիրտն ասես հալչում է, ինչպես սառույցն՝ արեգակի ճառագայթներից, հոգին լցվում է խաղաղությամբ ու խնդությամբ. այն խանդաղատվում է, ցնծում ու գոհանում կամ սարսափահար է լինում ու խոնարհվում. հոգին հաստատ որոշում է կայցրել, նա աղոթում է: Խաղաղությունը կրկին հանգրվանել է նրա մեջ, հոգին ճաշակել է Աստծու խոսքը¹:

Բ. ՀԱՍԿԱՆԱԼՈՎ ԿԱՐԴԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Իմաստո՞ւմ դարձրու ինձ, որ քննեմ Քո օրենքը
և ամրող սրտովս պահպանեմ այն:

(Սաղմ. ԾԺԸ 34)

Եվ արդ, պատվենք Սուրբ Գիրքն ընթերցանությամբ, որը պատճառն է մեր բոլոր բա-

¹ Անդ, Էջ 11:

ըելավությունների. սիրով փափագենք Սուրբ Գրքի ուսումնասիրությունը և ընթերցելիս հոգանք երկու բանի մասին. նախ՝ որ հասկանանք ընթերցվածը, և երկրորդ՝ որ մտքում անմոռաց պահենք, մանավանդ գործով կատարենք և օրենքը կատարող լինենք, որ թեթևամտությամբ չզրկվենք մեծագույն բարիքներից (Խոսրով Անձնացի):

Թերես կարելի է արտագրություններ անել Գրքերից, սակայն պետք է յուրացնել: Կարդալ այն, ինչը հասկանալի է: Պետք է քիչ կարդալ, բայց՝ հասկանալով (Ամբրոսի Օպտինակի):

Երբ ճենամուխ լինես աստվածային Գրքերն ընթերցել և իմանալ խոսքերի գորությունը, աղաչում եմ, ուշադրություն դարձու, որ ոչ մի տառ չվրիպի քո մտքից: Բոլոր գրվածքները երկնագոր իմաստություն են պարունակում և ծնում են իմաստուն մտքերի հոգեւոր խոսքեր, որոնք ամուլ են չհասկացողների համար, իսկ հասկացողների համար՝ բազմուսույց: Այդպես էլ՝ յուրաքանչյուր միտք լսելիս. ով ճիշտ է հասկանում, նրա մտքի ճաշակելիքն անուշանում է (Մամբրե Վերծանող):

Ս. Աթանասը Անտոն Անապատականի մասին խոսելիս ընդգծում է այն ճշմարտություն-

նը, որ նա «այնքան ուշադիր էր Աստվածաշնչի ընթերցանությանը, որ նրանում գրված ոչ մի խոսք գետին չէր ընկնում, այլ հիշում էր ամբողջը, և հիշողությունը գրավում էր Գրքերի տեղը» («Աբբա», մի խոսք ասա՞ինձ»):

Հետամուտ եղիր հասու լինել սուրբքրային յուրաքանչյուր բառի իմաստին, որ հասնես սրբերի մարգարեների և առաքյալների մտքերի խորքերին և մեծ ստուգությամբ հասկանաս դրանք: Իրենց կյանքում աստվածային շնորհով դեպի լույս առաջնորդվողները միշտ զգում են, որ ասես մտավոր ինչ-որ ճաճանչ է անցնում տողերի վրայով՝ գիտակցության համար մերկ բառերը զանազանելով հոգեոր գիտությամբ արտահայտված խոր մտքերից:

Եթե մեկը կարդում է բազմիմաստ համարներ՝ չխորանալով դրանց իմաստի մեջ, ապա սիրտն էլ է մնում աղքատ, անհաղորդ, և նրա մեջ մարում է սուրբ զորությունը, որը հոգու հրաշալի ընկալման դեպքում սրտին քաղցրություն է պատճառում (ս. Խասիակ Ասորի):

Ընթերցողներն առանց որևէ դժվարության հասկանում են աշխարհիկ գրքերը, սակայն աստվածային ու փրկագործական Գրքերը ոչ ոք չի կարող ինքնուրույն հասկանալ կամ ըն-

**կալել առանց Սուրբ Հոգու օգնության (Սիմեոն
Նոր Աստվածաբան):**

**Շնո՞րհ տուր, Տե՛ր, որ մենք բոլորս կա-
տարենք ավետարանական այս պատվիրանը.
«Քննեցեք Գրքերը» (Որոգինես Ալեքսանդրացի):**

**Լավ է մի տուն սաղմոս ասել հասկանալով
ու ըմբռնելով, քան թե հազար տուն՝ առանց
հասկանալու և միտքը քննելու:**

Աստվածաշունչը Վերընթերցանության գիրք է

**Աստվածաշունչն ընթերցելիս, երբ անհաս-
կանալի մտքի ենք հանդիպում, չպետք է կանգ
առնենք դրա վրա. կհասկանանք հետո՝ երկ-
րորդ անգամ ընթերցելիս: Առհասարակ օգտա-
կար է միևնույն բանը հաճախ վերընթերցելը:
Այսպես՝ Պողոս առաքյալի որևէ թուղթն ըն-
թերցելուց հետո անմիջապես կարդանք երկ-
րորդ, երրորդ անգամ: Մի հեղինակ ասում է.
«Երբ ամբողջ գրավածքն ընթերցվել է, և բոլոր
մանրամասնությունները ձուլվել են մի կուռ
ամբողջության մեջ, անհրաժեշտ է կարդալ
երկրորդ անգամ, որպեսզի այդ ներդաշնակ
ամբողջության լույսի ներքո հասկանալի դառ-
նան մանրամասները, որ նրա կազմի մեջ են**

մտնում իբրև բաղկացուցիչ մասեր»: Նմանօրինակ կրկնողական ընթերցանության դեպքում ոչ միայն հասկանալի է դառնում մինչ այդ անհասկանալին, այլև արդեն մի անգամ հասկացված խոսքերի մեջ ջանասեր ընթերցողը ամեն անգամ նոր մտքեր է բացահայտում, որոնք ընդլայնում ու խորացնում են նրա ըմբռնումը՝ ուրախություն պատճառելով սրտին: Այդժամ աստվածային յուրաքանչյուր խոսք իրավամբ սերմ է դառնում, որից հավատի աչքերով ուշադրությամբ քննելիս միշտ աճում են ցողուններ, ծաղիկներ և նոր մտքերի պտուղներ: Այնպես որ, ինչքան շատ ենք ընթերցում Սուրբ Գրքի որևէ հատված, այդքան նորանոր բաներ ենք գտնում նրանում. Նրա բովանդակությունն աստիճանաբար ընդլայնվում է մինչև անսահմանություն՝ իր մեջ ի հայտ բերելով Աստծու խոսքի հատկանիշը, որը նույնքան հավերժ ու անսահման է, որքան նա, Ումից այն բխել է¹:

¹ Անդ, էջ 20-21:

Գ. ԽՈԿՈՒՄ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԴԱՑԱԾԻ ՇՈՒՐՋ

Այս օրենքների Գիրքը քո շուրթերից չհեռացնե՞ս, այլ գիշեր-ցերեկ դրա մասին մտածի՞ր, որպեսզի գիտենաս կատարել դրա մեջ բոլոր գրվածները. այն ժամանակ հաջողակ կլինես, ուղիղ ճանապարհով կը նետանաս և խելամոռնեան կգործես:

(Հետու Ա. 8)

«Երանելի է այն մարդը, ով ամբարիշտների խորհրդով չի գնում, մեղավորների ճանապարհի մեջ չի կանգնում և ժամտերի աթողին չի մատում» (Սաղմ. Ա. 1), այսինքն՝ քննում է Աստծու օրենքը՝ ոչ թե իմանալու, ճշմարիտ են կամ իրեն հաճելի, այլ տեսնելու, թե Աստված դրանով ինչ է հրամայում անել կամ չանել: Եվ որպեսզի ցույց տա, որ պետք է հարատեել այդ բանում, ավելացնում է՝ գիշեր-ցերեկ: Այսինքն՝ միշտ պետք է խորհի կամ էլ՝ երբ հարկ լինի, ցերեկ թե գիշեր, «տանը նստելիս թե ճանապարհ գնալիս, պառկելիս թե վեր կենալիս», ինչպես ասվում է ԲՕրենք Զ 6-7-ում: Օրինակ՝ մի բան անելիս կամ ձեռնարկելիս նախ մտածի՝ արդյո՞ք Աստծու օրենքներին համապատասխանում է այն, ինչ անում է, թե՝ հակառակ է դրանց: Նույնպես և՝ գիշերը:

Ոչ միայն այսչափ, այլև օրվա ընթացքում

բազում անգամ քննում է, թե Տերն ինչ է հրամայում, որպեսզի ըստ այնմ կարգավորի իր կյանքն ու դործերը։ Այլև քննում է բաղդատությամբ, այսինքն՝ համեմատելով իր դործերն ու կյանքը Աստծու օրենքների՝ իբրև տիպարի կամ էլ կյանքի փորձաքարի հետ, որ տեսնի՝ համահունչ են միմյանց, իսկ եթե ոչ, ապա ջանա համաձայնեցնել իր վարքը օրենքի հետ։

Այս մտածությունը կամ խորհրդածությունը ախտերի ու տրտմությունների հալիչ է, առաքինություններ աճեցնող ու անարատ վարքի տիպար։ Բանն այն է, որ Տիրոջ օրենքների քննությունն ու նրանց մասին խորհրդածությունը նման են ջրի, իսկ ախտն ու տրտմությունը՝ դառն աղի. ինչպես որ աղն է ջրին հպվելիս հալչում, այդպես էլ ախտն ու տրտմությունն են հալչում օրենքի շուրջ խորհրդածությանը հպվելիս։ Ասացի, որ նաև տիպար են, որովհետև պատվիրանների քննությունը նման է բարի վարքի և կյանքի անարատության նախանկարի (նախատիպ օրինակի), ըստ որի էլ կառուցվում է մարդու բարի ու աստվածահաճո կենցաղավարությունը։ Ուստի նրանք, ովքեր կամենում են ապրել ըստ Աստծու օրենքի, պետք է այս մտահոգությունն ունենան ու այսպես գործեն։ Այդպես էին անում սրբերը, և

այդպես են անում Աստծու ծառաները. այդպես գործելով՝ նրանք իմաստնանում ու երջանկանում են, քանզի նմանօրինակ մտածությունն աճեցնում է հոգեոր կյանքը...

Իսկ նրանք, ովքեր անհոգ են ընթերցելու և խորհելու նկատմամբ, չեն կարող աճել առաքի-նություններով ու առաջնորդվել ըստ Աստծու օրենքների: Եթե նրանք, ովքեր միշտ խորհում ու քննում են, բազմիցս են վրիպում, ապա որպան առավել կվրիպեն նրանք, ովքեր անփույթ են, քանզի եթե չենք հետեւում այդ խորհուրդներին, ապա «եղծանելի մարմինը ծանրացնում է հոգին, և հողեղեն այս հարկը բազմահոգ է դարձնում միտքը» (Իմաստ. Թթ 15) (Միքայել Վրդ. Զամշյանց):

Մովսեսը հրամայում է խոկալ Աստծու օրենքների շուրջ տանը նստելիս, ճանապարհ գնալիս, պառկելիս ու վեր կենալիս, գրել գրանք տների մուտքին ու դռների վրա, «որ մնան, - ասում է,- անշարժ քո աչքերի առջև» (Բ Օրենք Զ 8):

Դավիթը Սաղմոսարանում ասում է. «Աստծու օրենքների շուրջ գիշեր-ցերեկ խորհող մարդը նման է ծառի, որ տնկված է ջրերի հոսանքների վրա, որն իր պտուղը ժամանակին է տալիս, և նրա տերևը չի թափում» (տե՛ս Սաղմ. Ա 2-3):

Քանզի ո՞ր ջուրը կարող է այնպիսի տնկիներ աճեցնել, պտղաբեր ու տերևաշատ դարձ-

նել դրանք, ինչպես սուրբգրային ընթերցվածք-ները՝ միտքը: Կամ ո՞ր անձրել կարող է այն-պես սնել բույսերն ու փարթամացնել ճյուղերը, ինչպես սուրբգրային գիտությունը՝ աստվածասեր հոգին:

Տեսնո՞ւմ ես՝ ինչպես հոգաց Քրիստոս թե՛ անձամբ, թե՛ առաքյալների ու մարդարեների միջոցով՝ հորդորելու մեզ կրթվել և աճել Սուրբ Գրքի ընթերցվածքներով: Հարատե պարապել և գիշեր-ցերեկ տքնել ու նույն բանում ջանալ, միշտ խոկալ և ընթերցանությունն իր հոգեոր կերակուրն ու ջուրը համարել (Սարգիս Շնորհալի):

Սուրբ Գրոց հոգեոր խրատները տալիս են ճշմարիտ վարքի իմացություն և հորդորում են մեզ գեպի հոգեոր կարգը: Քանզի երբ մարդը նյութական բաներ է խորհում, նմանապես և մարմնավոր հիշողություններով աղտեղի շարժումներ է ունենում, որոնք պղտորում են միտքն ու մարմնի զգայարանները: Իսկ եթե հոգեոր սրբությունների մասին է մտորում, Սուրբ Հոգու ազգեցությամբ հոգեոր վարքի մասին է խորհում և ջանում առաքինության գործեր կատարել (ս. Գրիգոր Լուսավորիչ):

Պետք է Գրքերը կարդալ առավոտյան, աշ-խատանքից առաջ, մոտ քառորդ ժամ, ապա

ամբողջ օրը ծամծմել կարդացածը, ինչպես ոչ-խարն է որոճում (Ամբրոսի Օպտինակի):

Ամեն հոգս ու երկրային մտածում մերժելուն համեմատ պետք է ըստ ամենայնի ջանալ փութեռանդորեն և նույնիսկ անդադրում զբաղվել Սուրբ Գրքի ընթերցանությամբ, մինչև որ հարատե ընթերցանությունը համակի հոգիդ... Այս խորհրդածության օգուտը երկակի է. նախ՝ հոգին կլանվում է ընթերցանությամբ ու խորհրդածությամբ: Երկրորդ՝ այն, ինչ հաճախակի կրկնությամբ (երբ փորձում ենք յուրացնել հիշողությամբ) չենք կարողացել հասկանալ մեր՝ այդ ժամանակ զբաղված մտքով, հետո, բոլոր գործերից ու հոգսերից ազատվելով և հատկապես գիշերային լոռության մեջ խորհրդածելով, ավելի լավ ենք հասկանում, այնպես որ հանգստանալիս և նույնիսկ խորքուն մտնելիս բացահայտվում է ամենածածուկ իմաստի ընկալումը, որը մենք անգամ դույզնինչ չէինք հասկացել արթմնի (ս. Իոան Կասիան):

Զբաղվի՛ր Գրքի ընթերցանությամբ և, երբ դառնաս աղոթքին և քո գործին, ապա աշխարհում տեսածիդ ու լսածիդ փոխարեն կխորհրդածես Սուրբ Գրքերից ընթերցված հատվածների մասին: Դրանով մոռացության կմատնվեն աշխարհային հիշողությունները. այդպիսով

միտքը մաքրության մեջ կհաստատվի: Ընթերցանությունն օգնում է հոգուն, երբ վերջինս աղոթքի է կանգնում. ընթերցանությամբ հոգին լուսավորվում է, որպեսզի առանց ծուլանալու և այլայլվելու հանապազ աղոթի:

Եթե կամենում ես, որ Սուրբ Գրքի ընթերցանությունը հաճելի լինի և իմաստով հասկանալի, մի կողմ դիր ընթերցածիդ չափն ու քանակը, և թող միտքդ խորամուխ լինի Հոգու խոսքերի մեջ, մինչև որ հոգիդ սքանչանա Աստծու փրկագործության առջև ու խորունկ խորհրդածության միջոցով ձգտի բարեբանության կամ հոգեշահ տիմրության (ս. Իսահակ Ասորի):

Սուրբ Գիրքը վերցնելիս մի՛ ձգտիր միմիայն ընթերցել թերթ թերթի հետևից, այլ խորհրդածելով թափանցի՛ր յուրաքանչյուր բառի մեջ: Կանգ առ այն բառերի վրա, որոնք դրդում են քեզ խորասուզվել անձիդ մեջ կամ ապաշխարության պատճառ են դառնում կամ էլ հոգեոր խնդությամբ ու սիրով համակում են սիրտդ: Այդ Աստված է մոտենում քեզ. բաց սրտով խոնարհաբար ընդունի՛ր Նրան այնպես, ինչպես ինքն է կամենում, որ հաղորդվես իր հետ (ս. Նիկողիմ Սվյատոգորեց):

Անապատի վանականները Աստվածաշունչն ընթերցում էին օր ու գիշեր, և վանական զգեստ չէր ստանում նա, ով անդիր չէր իմանում առնվազն Ավետարաններն ու Սաղմոսները: Ընթերցանությամբ անդիր սովորած ամբողջական հատվածների մտովին ծամումը, նրանց շուրջ խորհրդածությունը (խոսքն իրենց սրտում պահպանելու համար), լոռությունը, որ հնարավորություն էր ստեղծում ունկնդրել Հոգուն, միայնությունը, որ ազատում էր նրանց իրենց սեփական եսից և աշխարհային ցանկություններից, դարձնում էին այս աբբաներին Աստվածաշնչով լի մարդիկ («Աբբա՛, մի խորասական ինձ»):

Դ. ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ՀԱՐԱՏԵՎ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՄՔ ՄԵՐՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այս խոսքերն ի պահ դրե՛ք ձեր մտքում ու ձեր հոգում: Դրամք որպես նշան կապեցե՛ք ձեր ձեռքերին, որ մշտապես մնան ձեր աչքերի առջև: Դուք դրամք սովորեցրե՛ք ձեր որդիներին և դրանց մասին խոսեցե՛ք տամը հատելիս ու ճանապարհ գնալիս, պատկելիս ու վեր կենալիս: Դրամք գրեցե՛ք ձեր տմերի մուտքերին ու դռների վրա, որ ձեր լյամքը երկար լինի:

(Բ Օրենք ԺԱ. 18-21, տե՛ս նաև Բ Օրենք Զ 6-9, ԹՎԵՐ ԺԵ 39-40, Հետու Ա. 8, Առակ. Զ 21-23)

Ամեն օր ընթերցելով՝ Աստվածաշունչը՝
մարդը մտնում է նրա ճշմարտությունների ծի-
րի մեջ, հարազատանում դրանց ու դարձնում
դրանք ամեն ինչի մասին իր դատողություննե-
րի հենակետը, և ի վերջո նրանում ձևավորվում
է սուրբքրային ոգուն համապատասխան տրա-
մադրությունն. «Ո՞վ է հիշում Աստծու խոսքը և
չի շտկվում, հարցնում է ո. Եփրեմ Ասորին և
պատասխանում. միայն թույլ ու թշվառ մար-
դը»:

«Աստվածաշնչի անդադրում ուսումնասի-
րությունը, կարդում ենք ո. Եփրեմ Ասորու
մոտ, լույս է հոգու համար, քանզի հոգուն հի-
շեցնում է զգուշանալ կրքերից, հարատեղ առ
Աստված սիրո և անաղարտ աղոթքի մեջ. այն
նաև ցույց է տալիս սրբերի հետքերով ընթա-
ցող խաղաղ ճանապարհը»:

«Աստվածաշնչի վրա մի հայացքն իսկ ինք-
նին մեզ ետ է պահում մեղքից, ասում է ո.
Հովհաննես Ռսկեբերանը: Եթե նույնիսկ հա-
մարձակվենք և օրինազանց լինենք, պղծենք
ինքներս մեզ և ապա, տուն վերադառնալով,
տեսնենք Ս. Գիրքը, խղճմտանքը մեզ առավել
կդատապարտի: Եթե այս բանին միանա նաև
մեծ ուշադրությամբ ընթերցանությունը, այդ-
ժամ հոգին, որն ասես դեղերում է սուրբ վայ-

ըերում, կմաքրագործվի ու կբարելավվի, քանզի Գրքերի միջոցով մեզ հետ խոսում է ինքն Աստված»¹:

Արեգակը ծագելիս թող քեզ գտնի Սուրբ Գիրքը ձեռքիդ (Եվագր Պոնտացի):

Մարդու բնությունը կրող է խրատի ու օրենքների. թեև բնականից նույնն ունի, սակայն սրա մեջ ևս վարժմամբ է առաջադիմում: Առանց վարժման մարդիկ դժվարությամբ են կարողանում ճշմարիտ վարք ձեռք բերել (Ներսես Լամբրոնացի):

Եթե քննես Գրվածքները, միշտ նախանձախնդրուն սովորես նրանցից և ձգտես գործել նրանց համաձայն, ապա քո ճանապարհին կհայտնվի Հիսուսը և կմեկնի Գիրքը, այնպես որ դու էլ կբացականչես. «Մեր սրտերն էլ միթե չէի՞՛ ճմլվում մեր մեջ, մինչ նա ճանապարհին խոսում էր մեզ հետ. և ինչպես էր մեզ բացատրում Գրքերը» (Ղուկ. ԻԴ 32): Նա մոտ է նրանց, ովքեր միշտ հիշում են նրան և զօր ու գիշեր քննում նրա պատվիրանները (Որոգինես Ալեքսանդրացի):

Ուժերիդ չափով պարտադրի՛ր քեզ ըստ կարելվույն հաճախ ընթերցել Աստվածաշունչը, որ ի մի բերի մտքերդ, որոնք ցրել էր թշնա-

¹ Անդ, էջ 7:

մին՝ իր խաբեպատիր հնարքներով չար խորհություններ ներշնչելով։

Աստվածաշունչ Մատյանի գրքերի ընթերցանությունը կարգի է բերում ցրված միտքը և աստվածդիտություն պարզեցնելում։ Ուստի ջանաւոր եղիր ու վարժի՛ր անձու ընթերցանությամբ ու աղոթքով, որպեսզի միտքդ լուսավորվի (ս. Եփրեմ Ասորի)։

Ինչպես գեղանկարիչները որևէ նկար արտանկարելիս, ուշադրությամբ զննելով այն, ջանում են նրա գծերը փոխանցել իրենց ստեղծագործությանը, այդպես էլ առաքինության բոլոր մասերի մեջ նախանձախնդրորեն կատարելություն տենչացողը պետք է ամեն առիթով ուշադրությամբ զննի աստվածաշնչական սրբերի՝ իբրև շարժվող և գործող արձանների վարքը և, ընդօրինակելով ինչ որ բարի է, յուրացնի դրանք (ս. Բարսեղ Կեսարացի)։

Սուրբ Հայրերը, կատարելապես ընթերցելով Սուրբ Գիրքը, այնուհետև իրենց խոսքերով ու գործերով հոժարությամբ նմանվում էին իրենց սկզբնատիպին՝ Աստծուն։ Եվ կերտվում էին աստվածային այդ հիմքի վրա բարվոք շնությամբ, այսինքն՝ ընտիր առաքինությամբ, որի գլուխն է ինքը Քրիստոս (Հարանց վարք)։

Հարկ է ավետարանական պատգամներն ուսումնասիրել այնպես, որ դառնան գիտակցության սեփականությունն ու փաստը. միայն այդ ժամանակ է հնարավոր նրանց ճշգրիտ և մշտական կատարումն այնպես, ինչպես Տերն է պահանջում (ս. Իգմասի Ստավրոպոլսկի):

Աշխատիր մտքով ու սրտով այնպես յուրացնել Ավետարանը, որ միտքդ ասես լողանրանում, ապրի նրանով. այդժամ և գործերդ շահեկանորեն ավետարանական կդառնան: Այդ բանին կարելի է հասնել Ավետարանի հարատեերկյուղալից ընթերցանությամբ և ուսումնասիրությամբ:

Ս. Պախոմիոս Մեծը՝ հռչակավոր հին հայրերից մեկը, անգիր գիտեր Ավետարանը և Աստծու հայտնությամբ անվերապահորեն պարտավորեցնում էր վանականներին սերտել այն: Այդպիսով, Ավետարանը ուղեկցում էր նրանց ամենուր, միշտ առաջնորդում էր նրանց:

Ինչո՞ւ քրիստոնյա դաստիարակները այսօր էլ անմեղ երեխաների հիշողությունը չզարդարեն Ավետարանով՝ փոխանակ աղտոտելու այն եզոպոսի առակներով ու այլ ոչընչություններով (ս. Իգմասի Բյրյանչանիանվ):

Հնում շատ քրիստոնյաներ անգիր գիտեին Աստվածաշունչ Մատյանի գրքերի մեծ մասը.

օրինակ՝ պաղեստինյան նահատակներից մեկը՝ կույր Հովհաննեսը։ Եվսեբիոս պատմիչը նրա մասին գրում է. «Սրբազն Գրքերը ոչ թե մագաղաթի ու թղթի վրա էին գրված, որոնք բոլորն էլ ժամանակի ընթացքում մաշվում են, այլ՝ նրա լուսավոր հոգում և մաքուր մտքում, այնպես որ նա, երբ կամենում էր, անդիր հատվածներ էր ասում Մովսեսի և մարգարեների կամ էլ պատմական գրքերից, Ավետարանից կամ Գործք առաքելոցից»։

Ե. ՄԻՆՉԵՎ ԵՐԲ ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ՊԵՏք Է ԸՆԹԵՐՑԻ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

Նրանով է, որ դուք էլ լուցիք ճշմարտության խոսքը՝ ձեր փրկության Ավետարանը, որին հավատաղով կհրվեցիք խոստացված Սուրբ Հոգով, որ մեր ժառանգության առհավատչյան է միջև այն օրը, երբ կատարելապն կտիրանար փրկությանը՝ ի գովություն նրա փառքի։

(Եփես. Ա. 13-14)

Քանի դեռ մարդը չի ընդունել Միսիթարիչին, Սուրբ Գրքերի կարիքն ունի, որպեսզի բարու մտապահումը դրոշմվի նրա մտքում, հարատե ընթերցանությամբ նրա մեջ նորոգվի ձգտումն առ բարին, և նա պահպանի հոգին

մեղսալից ճանապարհների աննկատ որոգայթներից մինչև մոլորությունները փարատող Հոգու զորությունները ստանալը... իսկ երբ Հոգու զորությունն իջնի մարդու հոգեկան զորության վրա, այնժամ Գրքի օրենքի փոխարեն նրա սրտում կարմատավորվեն Հոգու պատվիրանները, և նա գաղտնաբեար կողմորի Հոգուց և զգայական ձեռնարկի կարիք չի ունենա (ա. Իսահակ Ասորի):

Զ. ԱՍԾՈՒ ԽՈՍՔԸ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ահա թե ինչո՞ւ, դեմ գցելով ամենայն աղտեղություն և չարիքի ավելցուկ, հեզությանը ընդունեցեք ձեր մեջ սերմանված խոսքը, որ կարող է փրկել ձեր հոգիները: Խոսքը կատարողները եղեք, այլ ոչ թե միայն այն լսողներ համարեցեք դուք ձեզ, քանի որ, եթե մեկը միայն լսող լինի խոսքը և ոչ կատարող, նա նման է մի մարդու, որ ակնապիշ դիտում է հայելու մեջ իր բնական դեմքը: Նայելով տեսանում է ինքն իրեն, անցնում գնում է և անմիջապես մոռանում, թե ինչպիսին էր ինքը: Իսկ ով աչքերը հատած նացում է ազատության կատարյալ օրենքին և դրա մեջ էլ հարատևում, նա լուսն է, չի մոռանում, այլ այն կատարում է. այդպիսի մեկը իր արածի մեջ երանություն կգտնի:

(Հակոբ. Ա. 21-25)

Անօգուտ է Աստծու խոսքը առանց գործերի կարգալը կամ լսելը: Քրիստոս երանի է

տալիս ոչ թե նրանց, ովքեր լսում են Աստծու խոսքը, այլ նրանց, ովքեր լսում են ու պահում. «Մանավանդ երանի՝ նրանց, որ լսում են Աստծու խոսքը և կպահեն» (Ղուկ. ԺԱ 28): Ի՞նչ օգուտ այն ցանված սերմից, որը պտուղ չի տալիս: Ոչ մի: Ո՞րն է սննդի օգուտը ստամոքսին, եթե այն ավիշի ու արյան չի փոխակերպվում: Միանգամայն անօգուտ է այդպիսի սնունդը: Այդպես է նաև Աստծու խոսքի՝ աստվածային սերմի պարագայում, որն օգտավետ չէ, եթե լսողները չեն վերափոխվում: Ինչպես որ մարմինն է հյուծվում և մահանում, երբ ստամոքսը, սնունդ ընդունելով, չի մարսում և ավիշի ու արյան չի փոխակերպում այն, այդպես էլ հոգին, որը թեպետ լսում է Աստծու խոսքը, որ հոգեոր սնունդ է, բայց ավիշի ու արյան չի փոխակերպում, այսինքն՝ հոգեոր առումով չի զորացնում լսած խոսքը, ուժասպառ է լինում ու կործանվում: Այս պատահում է մարդուն այն ժամանակ, երբ նա Աստծու խոսքը լսելով՝ դրա համեմատ չի շտկում իր վարքը, չի դառնում Աստծուն, ի սրտե չի ապաշխարում, մեղքերից չի հրաժարվում և իր սրտում հոգեոր մխիթարություն չի գտնում:

Աստծու խոսքը մեզ շնորհվել է հենց նրա համար, որ լսելով այն՝ ուղղենք ինքներս մեզ՝

ըստ Նրա խրատի: Իսկ եթե այդպես չանենք, այն մեզ ոչ մի օգուտ չի տա: Ճիշտ այնպես, ինչպես հիվանդը չի ապաքինվի, եթե չկամենա համապատասխան բուժում ստանալ, այդպես էլ մեր հոգեոր ախտերը բուժելու համար Աստծուց շնորհված խոսքը, ինչպես վերը նշեցինք, անօգուտ կլինի, եթե դրանով չըրւժենք մեր ախտերը: Ինչպես անօգուտ է վարպետի հմտությունը, եթե այն չի գործադրվում (նա անպայման կաղքատանա), այդպես էլ Սուրբ Գրքի քաջատեղյակությունն ու Տիրոջ կամքի իմացությունը շահ չեն, եթե Աստծու խոսքի ու Նրա կամքի համաձայն չջանանք ուղել մեր վարքը (ս. Տիխոն Զադոնսկի):

Երբ կարդում ես աստվածային Գրվածքների խոսքերը, նախ աղոթի՛ր Աստծուն, որ բացի սրտիդ աչքերը, որպեսզի չբավարարվես գրված բառերը կրկնելով, այլ կարողանաս նաև գործադրել դրանք երկյուղով. գուցե թե քո իսկ դատապարտության համար ես ընթերցում Աստվածաշնչի կենարար խոսքերը (ս. Հովհաննակես Ուկերերան):

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի բոլոր գործերն ու խոսքերը կրոն են բարեպաշտության ու առաքինության. սրա համար նա մարմնա-

ցավ՝ ցույց տալով մեզ առաքինություն և բարեպաշտություն։ Որպեսզի յուրաքանչյուր ոք, ըստ կարողության տեսնելով, նախանձախնդրորեն ձգտի նախատիպին։ Քանզի սրա համար մարմին հագավ, որպեսզի և մենք, ըստ մեր կարողության, նմանվենք Նրա վարքին (ս. Բարսեղ Կեսարացի)։

Տե՛ր, Դու իմ աղոթքով միշտ հաղթում ես իմ միջի դժոխքին, և եթե ես ցայժմ դեռ դժոխքում չեմ, այդ Քո՝ դժոխքը Հաղթողիդ ողորմությունն է, Տե՛ր։ Փա՛ռք Քեզ՝ Բարերարիդ և մեր Փրկչիդ։ Ի՞նչ կլինեինք մենք առանց Քեզ. իսկական գաղաններ, որոնք հոչոտում են իրար։ Ե՞րբ ենք մենք խորապես գիտակցելու ըստ Ավետարանի ապրելու անհրաժեշտությունը մեր իսկ ժամանակավոր և հավիտենական բարիքի համար։ Իսկ այսօր ինչքա՛ն քիչ են նույնիսկ Ավետարան ընթերցողները (ս. Իոան Կրոնշտադտսկի)։

Սուրբ Հայր Պամփոն գրաճանաչ չէր. և մի օր գնաց մի վարդապետի մոտ՝ սաղմոս ուսանելու։ Երբ լսեց ՅԵՐՊ սաղմոսի առաջին համարը. «Ասացի՝ զգուշանամ իմ ճանապարհին, որ լեզվովս չմեղանչեմ», այլևս չկամեցավ իմանալ շարունակությունը։ Նա ասաց. «Եթե սա գոր-

ծով կատարեմ, այս համարն էլ ինձ բավական է»: Իսկ այն վարդապետին, ով հանդիմանեց նրան վեց ամիս իրեն չայցելելու համար, պատասխանեց. «Դեռևս գործով չեմ կատարել»: Իսկ երբ բազում տարիներ անց նրա ծանոթներից մեկը հարցրեց նրան, թե սովորե՞լ է արդյոք այդ սաղմոսը, պատասխանեց. «Քառասունինը տարում թերևս կարողացա սովորել այն» (Հայելի վարուց):

Հոգեոր կյանքում Գրքերը միայն առաջնորդում են: Բուն ճանաչողությունը գործով է ձեռք բերվում: Նույնիսկ այն, ինչն ընթերցանությամբ է ճանաչվել, պարզ ու հանգամանալից կդառնա, երբ փորձարկվի գործով, և այլ կերպ կընկալվի (ս. Ֆեռֆան Զատվորնիկ):

Այստեղ հարկ է նշել Աստծու խոսքի բեղմնավոր ընթերցանության ամենաանհրաժեշտ պայմանը: «Ճաշակելով» Աստծու՝ որևէ խրատ պարունակող խոսքը՝ պետք է ջանալ անհապաղ կատարել այն, քանի դեռ սիրտը չի սառել: Իսկ կատարելով մեկ անգամ՝ հաջորդ անգամ այն կատարելն ավելի դյուրին կլինի, քանզի այդպես բարի գործերի հմտություն ու վարժանք է ձեռք բերվում (Եբր. Ե 14): Եվ ընդհակառակը, հաջորդ օրվան հետաձգվող բարի մտադրությունը սովորաբար չի կատարվում,

քանզի Աստծու խոսքի՝ մարդուն հաղորդած
բարոյական ուժը՝ Նրա ներշնչանքին հետևե-
լու այդ ուրախ վճռականությունը, մնալով
անգործ, աստիճանաբար թուլանում է ու ան-
հետանում: «Միանգամայն անօդուտ է, - գրում
է ս. Տիխոն Զաղոնսկին, - կարդալ ու չպահել
այն, ինչ սովորեցնում է Գիրքը: Եթե կամքդ
չուղղես, ապա այդ ընթերցանությունից ավելի
չար կդառնաս, քան եղել ես»: Բացի այդ, նմա-
նօրինակ գործնական վերաբերմունքը Աստծու
խոսքի նկատմամբ լավագույնս հավաստիաց-
նում է Փրկչի վարդապետության աստվածա-
յին լինելու իսկությունը. «Եթե մեկն ուզում է Նրա
կամքը կատարել, կիմանա այդ ուսուցման մասին, թե
Աստծու՞ց է արդյոք» (Հովհ. Է 17):

Մնում է ասել այն մասին, թե որն է մարդու
համար լավն ու բարին: Նա՛ է իմաստուն, ով
ջանասիրաբար չարչարում է իր մարմինը քաղ-
ցով և ծարավով, որպեսզի վարժեցնի նրան
գործունեության համար. ո՛վ իր անձը ուղղում
և կրթում է Ս. Գրքի ընթերցանությամբ: Նա՛
է հոգով և մարմնով գեղեցիկ, ով բովում է
իրեն այս երկու քուրաներում: Ինչքան զտում
է իրեն դրանցում, այնքան ընդգծվում է նրա
գեղեցկությունը:

¹ Անդ, էջ 11:

Մարմնական աշխատանքները միջոց են հանդիսանում առողջության պահպանման և ծուլության հաղթահարման համար. նրա օգնությամբ հոգին էլ է դառնում զգոն, զսպում և հաղթահարում է ցանկությունները: Այս նաև մեր համար հոգացող Բարերարի՛ն է հաճելի: Նրա խրատները բոլորիս համար թող լինեն՝ որպես հզոր գարշապար, որը ոտնակոխ է անում մեր բոլոր մեղքերը (ս. Եփրեմ Ասորի):

Ում թագավորը կամենում է արքունի պարզեագրերի ու ընծաների արժանացնել, նախ իր ուղերձներն է հղում, որոնցով նրանց բոլորին ծանուցում է. «Փութով փութացեք իմ առաջ կանգնելու և ինձանից արքայական պարզեներ ստանալու»: Եվ եթե չներկայանան ու չստանան, ապա այդ ծանուցագրերի ընթերցանությունը նրանց ոչ մի օգուտ էլ չի տա, ավելին. մահապարտ կճանաչվեն այն բանի համար, որ չկամեցան դալ ու արքայի ձեռամբ մեծարվել: Այդպես է նաև աստվածային գրվածքների պարագայում. Աստված-Թագավորը իր ուղերձների միջոցով մարդկանց առաջարկում է՝ նրանց ազդարարելով, որ իրեն կանչողներն ու հավատացողները խնդրեն և երկնային պարզե ստանան՝ անմասն չմնալով իր աստվածային էությունից: Քանզի գրված

Է. «որպեսզի հաղորդակից լինենք աստվածային բնությանը» (Բ Պետր. 1. 4): Իսկ եթե մարդը չգա, չխնդրի ու չստանա, ապա նրա համար Գրքերի ընթերցանությունն անօգուտ կլինի, ավելին. մահապարտ կճանաչվի այն բանի համար, որ չկամեցավ երկնային թագավորից կյանքի պարզեն ընդունել, առանց որի անհնար է հավիտենական կյանք գտնել, այսինքն՝ Քրիստոսին: Նրան փառք հավիտյանս: Ամեն (և Մակար Եղիպտացի):

Է. ԱՂԹՔՈՎ ԿՐԴԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Բա՛ց իմ աչքերը, որ տեսմեն Քո օրենքի հրաշալիքները:
(Սալմ. ԾԺԸ 18)

Ի՞նչ պետք է անի քրիստոնյան, որպեսզի Աստծու խոսքի սերմերը պտուղ տան իր մեջ: Քրիստոս ասում է. «Խնդրեցե՛ք Աստծոց, և Նա կտա ձեզ. փառքեցե՛ք և կգտնեք. բախեցե՛ք, և կրացվի ձեր առաջ. որովհետև ով որ ուզի, ստանում է. ով որ փառի, գտնում է. և ով որ բախի, նրա առաջ կրացվի» (Մատթ. Է 7-8): Քանի որ ինքներս տկար ենք, առանց Քրիստոսի ոչինչ անել չենք կարող, ինչպես և Նա է վկայում. «Առանց ինձ ոչինչ անել չեք կարող» (Հովհ. ԺԵ, 5): Ուստի ջերմեռանդ

աղոթքով է անհրաժեշտ ամեն ինչ փնտրել Նրա մոտ։ Պետք է Սուրբ Հոգին, Ով խոսեց մարդարեների և առաքյալների հետ, գործի մեր մեջ՝ լուսավորելով, հանդիմանելով, խրատելով և առաջնորդելով մեզ, եթե ցանկանում ենք Նրա օրենքով ապրել¹:

Երբ նստում ես կարդալու կամ լսելու Աստծու խոսքը, նախապես աղոթի՛ր Աստծուն։ Հանապազ խնդրի՛ր Նրան, որ լուսավորի միտքդ և բացահայտի քեզ համար իր խոսքերի զորությունը, քանզի շատերը, ապավինելով իրենց հասկացողությանը և չհասկանալով գրվածը, սրբապղծության մեջ ընկան և կործանվեցին։ Արդ, եթե ընթերցելիս դժվար հասկանալի տողերի հանդիպես, վերագրի՛ր այդ քո տկարամտությանը (ս. Եփրեմ Ասորի):

Բազում աղոթքներ են մեզ պետք, բազում արտասուրքներ, հաճախակի պաղատանքներ և մեծագույն ճգնութամբ հայցել Աստծուց, որպեսզի արժանի լինենք լուսավոր միտք ստանալու, որով կբորբոքվեն մեր մեջ աղոթքի բաղձանքն ու Աստվածային Գրքի վերծանությունը (ընթերցանությունը)։ Եվ մեր մտքի ճաշակելիքում կհամեղանա այդ հիանալի ուտեստնե-

¹ Անդ, էջ 47:

ըի խոհարարությունը, և կճանաչենք հոգեոր
երկունքի օգտակարությունն ու անսպառ
բարիքների արդյունարարությունը (Խոսրով
Անձնացի):

Սուրբ Գրքի խորախորհուրդ խոսքերին
մի՛ մոտեցիր առանց աղոթելու և Աստծուց օգ-
նություն հայցելու, այլ ասա՛. «Տո՛ւր ինձ,Տե՛ր,
զգայաբար ընկալել նրանցում ամփոփված զո-
րությունը»: Համարի՛ր աղոթքը Սուրբ Գրքում
արտահայտված ճշմարիտ իմաստի բանալի (ս.
Իսահակ Ասորի):

Կարդա՛ ջանասիրաբար ու փութեռանդո-
րեն՝ համակ ուշադրությամբ կանգ առնելով
յուրաքանչյուր բառի վրա:

Երբ նստես կարդալու կամ կարդացողին
լսելու լինես, նախապես աղոթի՛ր Աստծուն՝
ասելով. «Տե՛ր Հիսուս Քրիստոս, բա՛ց արա
սրտիս ականջներն ու աչքերը, որ լսեմ Քո
խոսքերն ու կատարեմ Քո կամքը: Բա՛ց իմ աչ-
քերը, որ տեսնեմ Քո օրենքի հրաշալիքները:
Հույս ունեմ, Աստված իմ, որ կլուսավորես իմ
սիրտը»: Միշտ այդպե՛ս աղաչիր Աստծուն, որ-
պեսզի լուսավորի միտքդ և քեզ ճանաչել տա
իր խոսքերի զորությունը: Շատերն իրենց հաս-
կացողությանն ապավինելով՝ մոլորվեցին (ս.
Եփրեմ Ասորի):

Ս. Հովհ. Ոսկեբերանի աղոթքը Աստծու խոսքը կարդալուց և լսելուց առաջ

Տե՛ր Հիսուս Քրիստոս, բա՛ց սրտիս աչքերը՝ լսելու Քո խոսքը, հասկանալու և կամքդ կատարելու, քանզի պանդուխտ եմ ես այս աշխարհում: Մի՛ ծածկիր ինձնից Քո պատգամները, այլ բա՛ց իմ աչքերը, որ հասկանամ օրենքիդ հրաշալիքները. հայտնի՛ր ինձ Քո իմաստության անհայտն ու ծածուկը: Ես Քեզ եմ ապավինում, Աստվա՛ծ իմ. Թող Քո մտքի լույսով լուսավորվի նրա իմաստը, որ ոչ միայն գրվածը կարդամ, այլև կատարեմ, որպեսզի մեր կարդացած խոսքերն ու սրբերի վարքը մեզ ի վնաս չլինեն, այլ ի նորոգություն, ի լուսավորություն, ի սրբագործություն, ի փրկություն հոգու և ի ժառանգություն հավիտենական կյանքի:

Զի Դու ես լուսավորում խավարի մեջ նստածներին, և Քեզնից է ամենայն բարիք ու ամենայն կատարյալ շնորհ: Ամեն:

Ա. Գրիգոր Տաթևացու աղոթքը

Արարի՛չ անճառելի և Աղբյու՛ր ճշմարիտ
լույսի ու իմաստության, լուսավորի՛ր իմ միտ-
քը պայծառ նշույլներով և հեռացրո՛ւ իմ միջից
մեզն անգիտության: Դու, որ մանուկների լե-
զուները պարզախոս ես ստեղծել, վարժի՛ր իմ
լեզուն և շուրջերս Քո շնորհների օրհնությա՛մբ
լցրու: Սրությո՛ւն տուր ինձ՝ հասկանալու, ըն-
դունակություն՝ պահելու, կորովամտություն՝
բացատրելու, դյուրընկալություն՝ ուսանելու,
ինչպես նաև առատ շնորհ՝ խոսելու: Պատ-
րաստի՛ր ու հարդարի՛ր մուտքն իմ այս կյանք,
կյանքիս ընթացքն ուղղի՛ր և ավարտի՛ն հասց-
րու Տիրոջով՝ Հիսուս Քրիստոսով: Ամեն:



ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

Ա. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՆԿԱՏՄԱՄՔ

Ով Աստծոց է, Աստծու խոսքերն է լսում:

(Հովհ. Ը 47)

Ռուս Ուղղափառ Եկեղեցու ժամանակակից մի հոգևորական Նոր Կտակարանի ընթերցման կարգին վերաբերող՝ համայնքին ուղղված իր հովվական քարոզում ասում է. «Ընդունի՛ր այս սրբազան Գիրքն իբրև պարգև՝ առաքված քեզ երկնքից՝ Տիրոջ կողմից... Ընթերցելիս մի՛ մոռացիր, որ տեսնում ես իրեն՝ Տիրոջը, Ով իր առաքյալների հետ միհասին Ավետարաններում, Գործք առաքելոցում և առաքելական թղթերում խոսում և գործում է քո առջև»: Ահա՛ մարդու ճշմարիտ վերաբերմունքը «հավիտենական և կենդանի» խոսքի նկատմամբ:

Յուրաքանչյուր պատմական անձի գործունեությունն ավարտվում է նրա մահվամբ, և այնժամ իրապես այն մեզ համար դառնում է անցյալի պատմություն: Այդպիսին չէ Հիսուս

Քրիստոսի անձն ու գործունեությունը: Նա մեռած չէ, այլ ողջ է և «մոտ է բոլոր Արանց, ովքեր կանչում են Իրեն, բոլոր Արանց, ովքեր կանչում են Իրեն ճշմարտապես» (Սաղմ. ԾԽԴ 18): «Եվ ահա Ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ միաչեւ աշխարհի վախճանը» (Մատթ. ԻՀ 20): «Ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն Իմ անունով, այնուեղ եմ Ես, Արանց մեջ» (Մատթ. ԺՀ 20): Ուստի և մենք Ավետարանն ընթերցելիս կարող ենք խոնարհ ու հավատավոր սրտով տեսնել Տիրոջն իր առաքյալների հետ գործելիս, լսել նրա խոսքը...

«Հիսուս Քրիստոսը՝ մեղավորների Բարեկամը, քայլում է Աստվածաշնչի այգիներով, ինչպես մի ժամանակ՝ Պաղեստինի լեռներով ու Հովհաններով։ Դուք կարող եք հիմա էլ տեսնել Նրան, եթե բաց աչքերով նայեք հին մարդարեություններին, ավելի հստակ կտեսնեք Նրան չորս Ավետարաններում։ Նա բացահայտում է մեզ գաղտնիքներով լեցուն իր հոգին առաքելական թղթերում և լսել տալիս իր քայլերը Հայտնության գրքի խորհրդանիշերում։ Լսել է տալիս, թե ինչպես է մոտենում իր գալուստը։ Ողջ է Քրիստոս իր Գրքում. դուք Նրան տեսնում եք գրեթե ամեն էջում, լսում նրա խոսքը. ասես ինքն անձամբ խոսում է ձեզ հետ։ Քրիստոս ցայժմ խոսում է իր Գրքի մեջ «Երա-

նիների» լեռից. Աստված, Ով ասաց՝ եղիցի
լոյս, շարունակում է իր Գրքի էջերում նույն
պատգամները տալ: Անկաշառ ու անփոփոխ
ճշմարտությունն է իր ողջ զորությամբ բնակ-
վում Գրքում և Նրան կենդանի պահում: «Խո-
տը չորանում է, ծաղիկն էլ թափվում, բայց Տիրոց խոսքը
մնում է հավիտյան» (Ա. Պետ. Ա. 24):

Ինչպես որ կարդում ու վերընթերցում ենք
մեզ համար թանկագին մարդու նամակի տո-
ղերը՝ կանգ առնելով յուրաքանչյուր բառի
վրա, խորամուխ լինելով նրա մեջ և բավա-
կանություն ստանալով, մեր միտքն ու զգաց-
մունքներն ուղղելով նրան, ումից ստացել ենք
նամակը, այդպես էլ պետք է կարդանք Աստծու
խոսքը: Պետք է կարդալ երկյուղալից ուշադ-
րությամբ, թոթափելով ամեն մի կասկած ու
կենցաղյին բոլոր հոգսերը, վեր բարձրացնե-
լով սեփական միտքն ու սիրտն առ Նա, Ով իր
Հայրական հոգատարությամբ «առաքեց իր խոսք
ու բուժեց մեզ» (Բմմտ. Սաղմ. ՇԶ 20)¹:

Աստված Հայտնվում է Սուրբ Գրքում՝
կարծես քայլելով ու խոսելով, ուստի և մարդը
Սուրբ Գիրքը կարդալիս ասես լսում է Աստծու
ձայնը: Մենք խոսում ենք Քրիստոսի հետ, երբ
աղոթքի ենք կանգնում. մենք լսում ենք նրան,

¹ Անդ, Էջ 8-9:

Երբ կարդում ենք Սուրբ Գիրքը (և Ամբողջության Միջամի եպիսկոպոս):

Եթե դու երկրավոր թագավորից նամակ ստացած լինեիր, մի՞թե մեծ ուրախությամբ չէիր կարդա այն: Իհարկե, մեծ ուրախությամբ և սրտատրով ուշադրությամբ: Այնինչ ստացած նամակը ոչ թե երկրավոր, այլ երկնային թագավորից է, իսկ դու գրեթե արհամարհում ես այդ շնորհը՝ այդ անգին գանձը:

Ամեն անգամ կարդալով սուրբ Ավետարանը՝ դու լսում ես Քրիստոսի՝ քեզ հասցեագրված խոսքերը: Ընթերցելիս դու և՛ աղոթում ես Նրան, և՛ զրուցում Նրա հետ (և Տիխոն Զադոմակի):

Ոմանք պարծենում են ազնվագարմ իշխանների ու արքաների հետ ունեցած զրույցով, իսկ դու պանծա՛, որ Սուրբ Գրքում զրուցում ես Սուրբ Հոգու հետ, քանզի Սուրբ Հոգին է Նրա միջոցով խոսողը:

Զանա՛ ընթերցել Սուրբ Գիրքը և հարատեել աղոթքի մեջ: Քանզի ամեն անգամ, երբ Գրքերի միջոցով խոսում ես Աստծու հետ, սրբագործվում են մարմինդ ու հոգիդ: Իմանալով այս՝ ջանա՛ հարատեել ընթերցանության մեջ (եպիսկոպոս Ֆեռֆան):

Բ. ՄԵՐԸ ՍՈՒՐԲ ԳՐՁԻ ՆԿԱՏՄԱՄՔ

Աքանձելի են Քո վկայությունները.

Դրա համար հոգիս սիրեց դրանք:

Քո խոսքերի հազտնությունը լուսավորում

և իմաստնացնում է պարզամիտներին:

(Սաղմ. ԾԺԸ 129-130)

Ինչպե՞ս է պետք մեզ սիրել Աստծու խոսքը:
Մենք՝ քրիստոնյաներս, ոչ մի այլ բանով չպետք
է այնպես միխթարվենք և ուրախանանք, ինչ-
պես նրա սուրբ խոսքով: Աստծու խոսքը նրա
բերանի խոսքն է, ինչպես վկայում է Դավիթ
մարգարեն. «Քո բերանից ելած օրենքն ինձ համար
ավելին է, քան հազարներով արծաթ ու ոսկի» (Սաղմ.
ԾԺԸ 72): Հետևաբար, ի՞նչ ջանասիրություն,
սեր ու անհագ ծարավ պետք է ունենալ այն
ընթերցելու և լսելու համար: Ամեն անգամ, երբ
կարդում կամ լսում ենք Աստծու սպասավորի
ընթերցումները, լսում ենք մեզ հետ զրուցող
մեր Տեր Աստծուն: Եվ եթե սիրով ենք լսում
մեզ հետ զրուցող երկրավոր թագավորին (յու-
րաքանչյուր ոք սա մեծ պատիվ է համարում),
ապա առավել սիրով և հոժարությամբ պետք է
լսել մեզ հետ խոսող Աստծուն՝ երկնքի և երկ-
րի թագավորին: Նա պատվել է անարժաննե-
րիս իր ողորմությամբ, և պատշաճ չէ, որ մենք
անտեսենք նրա այդ մեծ ողորմությունը, այլ

մանավանդ սիրահոժար ունկնդրությամբ կամ
Նրա խոսքի ընթերցանությամբ մեր երախտա-
գիտությունը հայտնենք Նրան և հավատանք
այն ամենին, ինչ հայտնում ու խոստանում է
խոսքը, կատարենք, ինչ հրամայում է, խոլյս
տանք այն ամենից, ինչ արգելում է:

Այստեղից էլ ակնհայտ է, թե ինչ անիմաստ
և մանավանդ անօրեն բան է, երբ քրիստոնյա-
ները խուսափում են Աստծու խոսքից: Շատերն
այս կենդանարար ու սուրբ աղբյուրը թողած՝
զվարճանում են անպիտան գրքերով, որոնք ու-
րախացնում են մարմինը, բայց այլասերում հո-
գին, և նմանօրինակ ընթերցանությամբ կործա-
նում են սեփական անձը, այլ ոչ թե կերտում:
Ոմանք ջանում են իմանալ, թե ինչ է կատար-
վում Ամերիկայում, Աֆրիկայում, Ասիայում և
այլ հեռավոր երկրներում, բայց իրենց անձեռին
ու իրենց մեջ նայել չեն ուզում: Աստծու
խոսքի լույսով չեն ձգտում ճանաչել, թե ինչ է
կատարվում իրենց հոգու հետ, ինչ վիճակում
է այն: Ոմանք էլ խոտերի, բույսերի, ծառերի
և մնացածի բնությունն են ցանկանում զննել,
բայց իրենց՝ մեղքով պղծված բնությունը Աստ-
ծու խոսքով քննել չեն ուզում: Մյուսներն աստ-
ղերը հաշվել, հողը չափանշել են սովորում,
բայց իրենց կարծ կյանքի օրերն ու անհամար

հանցանքները, որոնցով ամեն օր մեղանչում են Տիրոջ առջև («Իր հանցանքներն ո՞վ կարող է մտքում պահել» (Սաղմ. ԺՂ 13)) Աստծու խոսքով տեսնել չեն ուզում: Ուրիշները զօր ու գիշեր սովորում են, որ հարստություն ձեռք բերեն, որը մարմնի հետ միասին թողնելու են այս աշխարհում, բայց հոգեշահ հարստություն Սուրբ Գրքից կուտակել չեն կամենում և հոգու հետ այն աշխարհ գնացող հարստությունն արհամարհում են: Ոմանք ձգտում են ողջ ու առողջ պահել վաղ թե ուշ աճյուն դարձող մարմինը, իսկ անմահ հոգու նկատմամբ անհոգ են և նրա ախտերն Աստծու խոսքով ճանաչել ու բուժել չեն ուզում: Մյուսներն այլ բան են խորհում ու անում, իսկ այն, ինչ անհրաժեշտ է ըստ Քրիստոսի վարդապետության, անտեսում են: Բոլոր սրանք և սրանց նմանները նման են այն մարդուն, ով գրոշները պահում է սնդուկի մեջ, բայց անփույթ է հազար ոսկեդրամի նկատմամբ, կամ էլ՝ նրան, ով խեղդվում է ջրում, սակայն, չմտածելով իր անձի մասին, ուզում է իր իրերը փրկել (ս. Տիխոն Զադոնսկի):

Անհագորեն և առանց ձանձրանալու Սուրբ Գիրք ընթերցեք, խոկացեք այդ մասին, սովորեցրեք և կրթեք նաև ականջները՝ սիրելու և ունկնդրելու աստվածային պատվիրանները,

աղքատներին ու զրկվածներին և բոլոր նրանց, ովքեր կարիքի մեջ են, անհրաժեշտ պետքերի հետ միասին նաև այդ մատուցեք նրանց լսելիքին (Հովհաննես Սարկավագ):

Գ. ՄՐՏԻ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ

Իմաստությունը չի մտնի չարանենազ անձի մեջ և ոչ էլ կրակվի այն մարմահի մեջ, որ մեղք է գործում:

(Իմաստ. Ա, 4)

Աստվածաշունչը հասկանալ կամեցողը ոչ այնքան պետք է տրվի մեկնությունների ընթերցմանը, որքան՝ մարմնական արատներից սրտի մաքրագործմանը։ Եթե այս արատներն արմատախիլ արվեն, ապա կրքերի ծածկոցը վերցվելուն համապատասխան հոգեւոր աչքերը պարզ կտեսնեն Ս. Գրքի գաղտնիքները։ Քանզի Սուրբ Հոգին հայտնել է այն, որպեսզի մենք այն ճանաչենք։ Իսկ չենք տեսնում այն պատճառով, որ մեր հոգեւոր աչքերը ծածկված են արատների ծածկոցով։ Իսկ եթե նրանց վերադարձի իրենց բնական առողջությունը, ապա միայն Ս. Գրքի ընթերցանությունն էլ բավարար կլինի նրա ճշմարիտ իմաստն ընկալելու համար, և մեկնիչների գրքերի կարիք չի զգացվի, ինչ-

պես մարմնական աչքերը տեսնելու համար ոչ մի գիտելիքի կարիք չունեն, եթե միայն մաքուր են, ու խավար չկա նրանցում (Ա. Իռան Կասիան):

Երբ Տերն ամենայն աշխարհիկ բաներից ու վարդապետություններից մաքուր սիրտ է տեսնում, ապա նրա վրա, ինչպես մաքուր փողը տախտակի, գրում է իր վարդապետությունը: Այս բանը ասում եմ նրա համար, որ որևէ մեկը չկարդա ոչ աստվածահաճո գրքեր:

Սուրբ Գրքում անթեղվածը ճանաչելու համար պետք է սրբակենցաղ կյանքով ապրել: Սակայն, մաքուր կենցաղավարությունից զատ, պետք է հարատեել Աստվածաշնչի ուսման մեջ, որպեսզի անդադրում ընթերցանության միջոցով Աստծու կարենոր ու խորհրդավոր խոսքերը դաջվեն մեր հոգիներում (Ա. Բարսեղ Կեսարացի):

Բոլոր երգերն էլ Սաղմոսարանի մի-մի կտակ են՝ մարդկության համար կենդանագրված, որ, սակայն, միայն տեսանելի են մաքուր սրտերին (Ա. Գրիգոր Նարեկացի):

Քրիստոնյա՛, երկյուղածությամբ ընթերցելով Սուրբ Հոգու խոսքերը՝ հիշի՛ր, որ մեր տկար, մեղավոր միտքն ի զորու չէ պարփակել Աստծու խոսքի մեջ ամփոփված իմաստության բովանդակ խորությունը: Գրված է. «Իմաստու-

թյունը չի մտնի չարանենգ անձի մեջ և ոչ էլ կրնակվի այն մարմնի մեջ, որ մեղք է գործում» (Իմաստ. Ա. 4), քանզի ինքն իմաստությունը մարդու համար նախ և առաջ բարեպաշտություն է. «Աստվածաշատությունն է իմաստություն» (Հոր Ի՛՛ 28) (ս. Իգնատի Բոյանչանինով):

Թո՛ղ մեղսալից կյանքը, թո՛ղ աշխարհասեր մոլություններն ու հաճույքները, ուրացի՛ր անձդ, այդժամ Ավետարանը քեզ համար մատչելի ու հաճելի կղառնա:

Տերն ասում է. «Ով այս աշխարհում իր անձն ատում է, այն կպահի հավիտենական կյանքի համար» (Հովհ. ԺԲ 25) (այն անձը, որի համար անկումից ի վեր մեղսասիրությունը բնական ապրելակերպ դարձավ): Փակ է Ավետարանը նրա համար, ով սիրում է իր անձը, ով չի վճռում ինքնուրաց լինել: Նա կարդում է տառը, բայց կյանքի խոսքը, ինչպես Հոգին, նրա համար մնում է անթափանց ծածկոցի տակ:

Երբ Տերն իր սուրբ մարմնով աշխարհում էր, շատերն էին տեսնում նրան, բայց միաժամանակ և չէին տեսնում: Ո՞րն է օգուտը, երբ մարդը նայում է այն մարմնավոր աչքերով, որոնցից կենդանիներն էլ ունեն, բայց ոչինչ չի տեսնում հոգու աչքերով՝ մտքով և սրտով: Այսօր էլ շատերը ամեն օր կարդում են Ավե-

տարանը, բայց միաժամանակ երբեք չեն կարդացել, ամենևին ծանոթ չեն նրան (ս. Իգնատի Բոյանչանինով):

Դ. ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆ

Լավ է, որ Դու խոնարհ դարձրիր ինձ, որպեսզի
Քո արդարադատությունը սովորեմ:

(Սահմ. ԾԺԸ 7-72)

Եթե կամենում ես հասնել Սուրբ Գրքի
ճշմարիտ գիտությանը, ապա պետք է ջանաս
ձեռք բերել սրտի անսասան խոնարհություն,
որը, սիրո մեջ կատարելության հասնելով, կա-
ռաջնորդի քեզ այնպիսի իմացության, որը չի
հպարտացնում, այլ լուսավորում է: Քանզի
անմաքուր հոգու համար անհնար է հոգեոր
գիտության շնորհ ձեռք բերել: Ուստի ամե-
նայն զգուշությամբ խուսափի՛ր, որ ընթերցա-
նության մեջ վարժվելիս քեզ մոտ գիտության
լույսի ու հավերժական փառքի փոխարեն
պիղծ հպարտությունից չառաջանան կործան-
ման պատճառ հանդիսացող հատկություններ
(ս. Իուան Կասիան):

Աստվածաշունչը քննելու սերը հանուն
նանիր հետաքրքրության թշնամություն և վեճ

է առաջացնում, իսկ լացը սեփական մեղքերի համար խաղաղություն է պարգևում: Իր խցում նստած վանականի համար Ա. Գրքի այդպիսի սին քննությունը մեղք է, մանավանդ երբ այն ուղեկցվում է սեփական մեղանչումների անտեսմամբ: Ուստի մեկը Ա. Գրքում ուշադրություն է դարձնում երկրորդական բաների յուրացմանը և հարց տալիս՝ այդպե՞ս է, թե՞ ոչ, և դեռ իրեն չգտած, նանիր սիրո ունենալով՝ մեղքի ծանր ու երկարատև գերության մեջ է հայտնվում: Մյուսը զգոնությամբ խուսափում է այդ գերությունից և սիրում է երեսն ի վայր ընկնել Աստծու առաջ: Մեկ ուրիշը աճապարելով Աստծու նմանությունն է փնտրում, սակայն աստվածանարգության մեջ է ընկնում: Մեկն էլ ձգտում է պաշտել նրան՝ սիրելով մաքրությունը Աստծու երկյուղի մեջ. նա պահում է Աստծու խոսքերը ու պարտադիր համարում դրանք իր համար և ձեռք բերում աստվածագիտություն: Հետևաբար, աստվածային վեհբարձունքներ մի՛ փնտրիր, այլ աղերսի՛ր, որ նա գա և փրկի քեզ մեղքից: Զէ՞ որ Աստծու շնորհներն իրենք իրենց են դալիս, եթե նրանց տեղը մաքրված և նվիրականացված է: Ով հաստատվում է սոսկ սեփական իմացության մեջ և հետևում միայն իր կամքին, նա չի կարող խու-

սափել սիրտը տրտմեցնող ոգուց: Ով քննում է Աստվածաշնչի խոսքերը՝ տեղ տալով միայն իր գիտությանը և հենվելով այդ խոսքերի վրա, որ ասի. «Դա այդպես է», նա չի ճանաչում իր իրական փառքը և իր իրական հարստությունը: Եվ ընդհակառակը, ով կարդալով Ս. Գիրքը՝ ասում է. «Զգիտեմ, քանզի մարդ եմ», նա փառավորում է Տիրոջը: Եվ նրա մեջ ըստ կարելվույն Աստծու հարստությունն է ամբարվում (ս. Ամ-մուհ):

Ե. ԶԳՈՒՇՈՒԹՅՈՒՆ ՉԱՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԻՑ

Եվ այս բոլորի վրա առե՛ք հավատի վահանը, որով պիտի կարողանաք հանգնել չարի բոլոր մխացող մետերը: Եվ առե՛ք փրկության սաղավարտն ու Հոգու սուսերը, որ է Աստծու խոսքը:

(Եփես. Զ. 10)

Երբ ցանկանում ես ընթերցել, զգո՛ւյշ եղիր,
որ թշնամին չխանգարի քեզ՝ վհատության մեջ
գցելով կամ մտացրություն առաջացնելով կամ
էլ ասելով. «Նախ այս կամ այն գործն արա,
որովհետեւ չնչին բան է, իսկ հետո հանգիստ
խղճով կկարդաս...»: Մի՛ հավատա նրան, այլ
նմանվի՛ր ծարավ եղջերուին, որ փափագում է
գալ ջրի ակունքների մոտ, այսինքն՝ դարձի՛ր

դեպի աստվածային Գրքերը, ուր և կհագեցնես
կրքերից տոչորվող ծարավդ (ս. Եփրեմ Ասորի):

Ամո՛ւր փակիր դուռը և սկսի՛ր ընթերցել
Սուրբ Գիրքը: Բայց անգիտաբար մի՛ կարդա,
որ զուր չչարչարվես՝ նմանվելով սանդի փայ-
տի, որով ցորեն են ծեծում, ինչը թեև բյուր
անգամ մտնում ու ելնում է սանդի մեջ, բայց
ցորենի ոչ մի հատիկ նրան չի կպչում. թափուր
մտնում ու թափուր դուրս է գալիս:

Բնավ հոգ մի՛ տար Գիրքը վարժ կարդալու
մասին, որ շուտ վերջացնես գործդ: Եղբա՛յր,
առանց տարակուսելու իմացի՛ր, որ սա դեկից է.
Նա չի կամենում հոգուդ լուսավորումը սուրբգ-
րային բարի իմաստներով, որ իմաստնանալով՝
ճանաչես իր չարությունը և գիտությամբ ու
առաքինությամբ դյուրությամբ հալածես իրեն
քեզնից: Որովհետև ինչպես առյուծն է սարսա-
փելի բոլոր կենդանիների համար, այդպես էլ
Աստվածաշնչի գիտությամբ զարդարված առա-
քինի հոգին՝ դեկից համար:

Իսկ նա, ով անսում է դեկին, աճապարան-
քով կարդալով՝ ջանում է բովանդակ Գիրքը
վերջացնել, նման է կարկտաբեր և հեղեղաբեր
անձրեի, որից օգուտ չկա հողին, բացի մեծ
վնասներից: Նույնպես և արագ ընթերցելն է
անօդուտ և վնասակար հոգու համար: Այլ դու

մեղմ անձրկի նման հանդարտորե՛ն կարդա՝
ուշադրություն դարձնելով յուրաքանչյուր
բառի, քննի՛ր նրա մեջ պարփակված իմաստը,
քանզի սա է հաճելի Աստծուն և օգտակար՝ հո-
գուդ։ Շատ օրեր քիչ խոսքերի վրա աշխատելն
է օգտավետ, քան բազում էջեր մի օրում ըն-
թերցելը, որն ապարդյուն աշխատանք է։

Եվս մի բան. սնափառության դեռ հափշ-
տակում է վարժ ընթերցողների միտքը. ընթեր-
ցողը, անփորձ լինելով, չի գիտակցում, որ իր
մեջ առաջացած ուրախությունը դեմք է, որը
մղում է նրան մարդկանց առջև պարծենալ, թե
այս Գիրքն այսքան օրում է կարդացել-վեր-
ջացրել։ Պարծենալու դրդած նույն դեռ միա-
ժամանակ առաջացնում է լսողների զարմանքը
և փութով գովեստի մղում նրանց, որ ընթեր-
ցողն առավել ուրախանա իր անմիտ գործով և,
սովորություն ձեռք բերելով, ամեն օր այդպես
ընթերցի ու գովասանքի արժանանա։ Նաև ա՛յս
իմացիր, որ դեռ այդպես կարդացողին երկակի
վնաս է պատճառում. քանի որ հոգին զրկվում
է իմաստների ճաշակումից և վարձքից, որը պի-
տի ստանար Աստծուց իր աշխատանքի համար,
քանզի խոսեց այդ մասին և գովեստի արժա-
նացավ։ Բայց դու, եղբա՛յր, ընթերցի՛ր, ինչպես
հարկ է և օգտակար (Գրիգոր վարդապետ)։

Հոգիդ միշտ և հանապազ վարժի՛ր ըստ կարելվույն խորհրդածել սրբազան գրքերի շուրջ, իսկ խորհրդածությունից հետո ջերմեռանդորեն լացի՛ր ու աղոթի՛ր: Եվ եթե հարատես այդպիսի մտայնության մեջ, որ ասես անդադրում պաշտամունք կատարելիս լինես, ապա դեերը սրտումդ տեղ չեն գտնի քեզ չար խորհուրդներ ներշնչելու համար (ս. Ամնո՞ւ):

Աստվածային գիտությունը պետք է մշտապես լսել և ուսանել, մտապահել ու խոկալ, որպեսզի դիվական խորհուրդներ չմտնեն մեր մեջ: Ինչպես ջրով լի ամանն այլ բան չի ընդունում իր մեջ, այնպես էլ բարի խոկում ունեցող միտքը չի ընդունում սատանայի չար խորհուրդը (ս. Գր. Տաթևացի):

Զ. ԵՐԿՅՈՒՂԱԾՈՒԹՅՈՒՆ

Ես ու՞մ եմ Շայելու, եթե ոչ՝ հեզերի՛ ու խոհարհների՛ և մրանց, ովքեր դողում են իմ խոսքից:

(Ծայի ԿԳ. 2)

Մեծ երկյուղով, երբ մտնելու լինենք, երկրպագենք Թագավորին, որ այնտեղ է, քանզի այնտեղից առաջին իսկ հայտնությունը կարող է զարմացնել տեսնողին. Փակված են այժմ դռները մեզ համար, իսկ երբ բաց տեսնենք

դրանք (որ փնտրողների նպատակն է), պիտի տեսնենք ներսում մեծ լուսավորություն:

Այսուհետև ամբոխով ու խռովությամբ չմտնենք, այլ՝ խորհրդական լուսավորությամբ, քանզի եթե թատրոններում այն ժամանակ են կարդում թագավորների հրովարտակները, երբ մեծ լուսություն է տիրում, ապա որչափ առավել այս քաղաքում է պետք, որ ամենքը խոնարհվեն և ուշադիր լինեն հոգով ու լսելիքով: Եվ եթե այսպես անձներս պատրաստենք, Հոգու շնորհները բացում ճշմարտությամբ կառաջնորդեն մեզ, և այնտեղ արքունական աթոռին կհասնենք: Եվ այնտեղի բոլոր բարիքներին հասնում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով ու մարդասիրությամբ (ս. Հովհան Ոսկեբերան):

Է. ՀՆԱԶԱՄՆԴՈՒԹՅՈՒՆ

Լսեցե՛ք, ունկնդի՛ր եղեք և մի՛ հպարտացեք, քանզի Տերը խոսեց:

(Երեմ. ԺԳ 15)

Աստծու խոսքին հնազանդվել ցանկացողներին ու բարի պտուղ տվողներին ուղեկցում են հետեւյալ հատկությունները՝ հեծեծանք, խոնարհ հայացք, աղոթք, լուսություն, մի տեղում մնալ, ցավագին լաց, բարեպաշտ լինելու

սրտացավություն, և գործերը՝ հսկում, պահք, ժուժկալություն, հեղություն, մեծահոգություն, հարատես աղոթք, Սուրբ Գրքի սերտում, հավատ, խոնարհություն, եղբայրասիրություն, հնազանդություն, աշխատանք, չարչարանք, սեր, բարություն, ազնվություն, և բովանդակլույսը, որ է Աստված:

Կյանքի պտուղներ չտվողներին ուղեկցում են հետեւյալ հատկությունները՝ հուսահատություն, մեծամտություն, թափառիկ հայցք, մտացրություն, տրտունջ, անհասկացողություն, և գործերը՝ շատակերություն, բարկություն, դյուրագրգռություն, բամբասահրություն, ամբարտավանություն, անտեղի խոսասիրություն, անհավատություն, անկայունություն, մոռացկոտություն, հուզմունք, շփոթություն, ագահություն, արծաթասիրություն, նախանձ, խարդախություն, արհամարհանք, դատարկախոսություն, անտեղի ծիծաղ, քմահաճություն և բովանդակ խավարը, որ է սատանան (ս. Մակար Եգիպտացի):

Նա է հոգեոր ճարտարապետ, ով Սուրբ Գրքի հոգեոր ուսմունքներից կառուցում և վեր է խոյացնում մի կոթող, որն իր լաելիքի համար դառնում է պատսպարան՝ զերծ պահելով նրան մոլորություններից:

Նա կարողանում է վերականգնել համա-

ձայնությունը Ս. Գրքի այն հատվածների միջև, որոնք անմիտ մարդկանց թվում են հակասական. Հաշտեցնում է իր խորագիտությամբ՝ վերացնելով հակասությունները, կապակցում է իր խոհականությամբ՝ ի չիք դարձնելով տարածայնությունները. և խաղաղություն է հաստատում բորբոքված ունկնդիրների մեջ, ովքեր իրենք իրենց հետ պայքարի մեջ լինելով՝ հակասություններ էին գտնում նաև Ս. Գրքի ամենեին էլ իրար չհակասող տեղերում: Եվ երբ հաշտվում են ունկնդիրները՝ հաշտվում են իրար հետ և Ս. Գրքի տարբեր հատվածներ:

Աստծո խոսքերը նման են բոլոր հիվանդությունների համար պիտանի դեղամիջոցի: Արտաքուստ նրանք տարբեր են թվում, բայց ներքուստ նման են իրենց բուժիչ զորությամբ: Սակայն մեր բանավեճերով մենք աստվածային գիտության մեջ էլ ենք տարածայնություններ մտցնում, որի հետևանքով մեր բերաններում այն դառնում է ներհակ: Վիճաբանություն սիրողների բերաններում նույնիսկ Աստծո խոսքերն են սկսում իրար հակասել (ս. Եփրեմ Ասորի):

Ը. ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ¹

Ինչ որ ձեզ եմ ասում, ամենքին եմ ասում:
(Մարկ. ԺԳ 37)

Ո՞ր խոսքերն են մեզ համար ավելի թանկ,
քան մեր Փրկչի խոսքերը: Եվ եթե ոչ այդ, ապա
ո՞ր խոսքերով կարելի է լավագույնս սրբա-
գործել մեր միտքն ու հիշողությունը: Սուրբ
Պախոսմիոսն իր վանականներից պահանջում
էր անգիր իմանալ Սաղմոսարանն ու Ավետա-
րանները կամ էլ բովանդակ նոր Կտակարանը:
Հստ սահմանված կարգի՝ ազատ լինելուն պես

¹ Սուրբ Գրքի ուղղափառ և արդյունավոր ընկալման մյուս կարևորագույն պայմանը ընթերցանության խորապես անձնական բնույթն է: Աստվածաշունչը, իբրև Աստծո խոսք՝ ուղերձ, հասցեա-գրված է յուրաքանչյուրիս և նաև հայելի է (տե՛ս Ղակ. Ա 23, 24), որի մեջ մարդը, շնորհիվ պատվիրանների, օրենքների, պատումների, հերոսների վարքերի, պետք է տեսնի նախ և առաջ իրեն, իր սրտի մեղքերը, արատները, աշխարհասիրությունը, հպարտությունը և մյուս նահացու մեղքերը: Օրինակ՝ փարիսեցիությունը պատմության գիրկն անցած երևույթ չէ, այլ հոգևոր ծանր հիվանդություն՝ բնորոշ բոլոր ժամանակներին: Կամ մի՞թե Աստվածաշունչը, որ ընավ չի սքորում իր հերոսների թերություններն ու մեղքերը, չի սովորեցնում Սողոմոնի կռապաշտության, Դավթի մերսագործության, Պետրոսի ուրացության մեջ տեսնել մեր անձերը, կամ հակառակը՝ նրանց առաքինության, անկեղծ ապաշխարության և աստվածասիրության մեջ տեսնել մեր պատիր ու կեղծ աստվածապաշտությունը:

նրանք ասում էին հիշողությամբ յուրացված նյութը խորհրդածությամբ հանդերձ: Հրաշալի կարգ էր: Պետք է միայն սերտածը գործադրել սեփական անձի նկատմամբ, օրինակ՝ Տերն ասում, պատվիրում է այս կամ այն բանը. ես ինչպե՞ս կարող եմ դա իրագործել իմ դեպքում: Եթե սերտվածը վերապրեք սրտով ու կյանքով, ապա ձեր մտքով իսկ չի անցնի պարծենալ Ս. Գրքի ձեր իմացությամբ: Հոգին դրա ժամանակը չի ունենա, քանզի, ինչպես հայելու մեջ, միշտ կտեսնի իր ոչինչ լինելը, տկարություններն ու մեղքերը (Եպիսկոպոս Ֆեռֆան):

Մտքով խոնարհն ու հոգեոր շավդով ընթացողը Ս. Գիրքն ընթերցելիս ամեն բան կվերագրի իրեն և ոչ թե մերձավորին (ս. Մարկոս Ծգնավոր):

«Հարկ է, որում է մի հեղինակ, ջանալ մտքով տեղափոխվել դեպի այն ժամանակն ու

Սուլը Գիրքը գինում է մարդուն ճշնարտությամբ, երևոյթները գնահատելու և արժևորելու ճշնարիտ ունակությամբ, իմաստությամբ և այլ հոգևոր շնորհներով, որոնք կոչված են մարդուն ապաշխարության մղելու, այլ ոչ թե սոսկ ընդլայնելու սեփական ճանաչողության սահմաններն ու այն ի չարս գործադրելու, օրինակ՝ ուրիշներին դատելու. «Ինչո՞ւ քո եղբոր աչքի մեջ շյուղը տեսնում ես, իսկ քո աչքի մեջ գերանը չես տեսնում. կամ ինչպե՞ս քո եղբորն ասում ես՝ թո'դ, որ հանեմ այդ շյուղը քո աչքից, և ահա քո աչքում գերան կա: Կեղծավո՞ր, նախ հանի՞ր քո աչքից այդ գերանը և ապա հստակ կտեսնես՝ քո եղբոր աչքից շյուղը հանելու համար» (Մատթ. Է 3-5):

այն տեղը, ուր տեղի են ունեցել Ավետարանում նկարագրված իրադարձությունները, ընդորում՝ լինել ոչ թե հասարակ հանդիսատես, այլ դրանց մասնակիցը՝ կարդացածը սեփական անձին առնչելով այնպես, ասես թե այն հենց իրեն է վերաբերում. «Ինչ որ ձեզ եմ ասում, ամենքին եմ ասում»,- ասաց Տերն իր աշակերտներին (Մարկ. ԺԳ. 37): Հենց այդ ժամանակ և միմիայն այդ ժամանակ, երբ կարդացածն առնչում ենք սեփական անձին, զգում ենք այն հրաշագործ վերակենդանացնող զորությունը, որն ամփոփված է Աստծու խոսքում, ինչպես սերմում»:

Կարդալով Տիրոջ կողմից բժշկված բորոտների, տկարների, կույրերի, կաղերի և դիվահարների մասին՝ խորհի՛ր, որ մեղքերի բազմապիսի խոցեր ստացած և դևերից գերեվարված հոգիդ նման է այդ հիվանդներին: Ավետարանից սովորիր հավատալ, որ Տերը՝ նրանց Բժշկողը, կապաքինի նաև քեզ, եթե ջերմեռանդորեն նրանից ապաքինություն խնդրես:

Չեռք բեր հոգու այնպիսի տրամադրություն, որ ունակ լինես ապաքինություն ստանալու: Իսկ ապաքինություն կարող են ստանալ նրանք, ովքեր ընդունում են իրենց մեղավորությունը և որոշել են հեռանալ դրանից: Հպարտ արդարին, այսինքն՝ մեղավորին, որ չի

տեսնում իր մեղավորությունը, Փրկիչ պետք չէ, նա Փրկչի կարիք չունի¹: Մեղքերը տեսնելը, մարդկային ցեղի անկումը տեսնելն առանձնահատուկ աստվածային շնորհ է: Աղերսի՛ր, որ ստանաս այդ շնորհը, և քեզ համար ավելի հասկանալի կլինի երկնավոր Բժշկի գիրքը՝ Ավետարանը²:

Զգտելով ապրել բարեպաշտ կյանքով՝ պետք է հիշել և երբեք չմոռանալ, որ կարդացածը և հասկացածը անհրաժեշտ է վերագրել սեփական անձին, այլ ոչ թե ուրիշներին: Սեփական անձի նկատմամբ լինել խելամտորեն խիստ, իսկ ուրիշների հանդեպ՝ ներողամիտ: Լինել խելամտորեն խիստ՝ նշանակում է զուր տեղը չհուզվել: Այս բանի օրինակը մենք կարող ենք տեսնել տարբեր տարիքի երեխաների մեջ, որոնց նկատմամբ ներողամտություն է ցուցաբերվում նրանց հասկացողության համեմատ (Ամբրոսի Օպտիհանկի):



¹ Անապատական հայրերն ասում են. «Ավելի լավ է իր մեղքերը գիտակցող և ապաշխարող մեղավորը, քան իր արդարության մասին մեծ կարծիք ունեցող արդարը»:

² Անդ, էջ 10:

ՄԱՍ ՀՈՐՇՈՐԴ

Ա. ՍՈՒՐԲ ԳՐՁԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետամտի՞ր Աստծու խոսքն ընթերցել, հորդորել և ուսուցանել հավաստացյալներին: Զանց մի՛ առ ազն շնորհը, որ քո մեջ է, որ տրվեց քեզ մարգարեությամբ, երեցների ձեռնադրումով: Այդ բանի վրա մոռածի՞ր և հարատևի՞ր դրանում, որպեսզի քո առաջադիմությունը հապտվի լինի բոլորին: Զգո՞վշ եղիր քո ձկատմամբ և քո ուսուցման ձկատմամբ և հարատևի՞ր դրանում: Եթե այդ բանն անես, կփրկես և՛քեզ, և՛ ճրանց, որ լսում են քեզ:

(Ա. Տիմ. Դ 13-16)

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, խրախուսելով ու պահանջելով իր զավակներից ընթերցել և սերտել Սուրբ Գիրքը, Փիլիպպոս առաքյալի օրինակով հարցնում է. «Հասկանո՞ւմ ես արդյոք, ինչ որ ընթերցում ես» (Գործք Հ 31):

Մեր մեղավոր միտքն անզոր է առանց առաջնորդության ընդգրկել Աստծու խոսքում պարփակված ան-ընդգրկելի աստվածային իմաստությունը. «Այս պատճառով, ~ գրում է ս. Գրիգոր Լուսավորիչը, ~ Աստված տվեց մարգարեներ, առաքյալներ, հայրապետներ ու

վարդապետներ՝ որպես ուսուցիչներ, որպեսզի
տեղյակ և հմուտ դարձնեն մեզ Աստծու բարի
կամքին»:

Հետեւաբար նրանք, ովքեր ուզում են ուղ-
ղափառորեն ընկալել Ս. Գիրքը, քննել նրա խո-
րին խորհուրդները, պետք է դիմեն Եկեղեցու
սրբազն ավանդությանը՝ հայրերի ու վարդա-
պետների մեկնողական գրականությանը, քան-
դի Եկեղեցին է Սուրբ Գրքի միակ պահապանն
ու մեկնիչը. «Միայն Եկեղեցում է պահպում,-
գրում է ս. Կղեմես Աղեքսանդրացին, - ճշմարիտ
գիտությունը. ով մեկնում է Ս. Գիրքը հակա-
ռակ Եկեղեցական ավանդության, նա կորցրել
է ճշմարտության չափանիշը»: Իսկ ս. Իլարին
գրում է. «Եթե մեկը Եկեղեցում չէ, անհնար է,
որ նա հասկանա Աստծու խոսքը»:

Եվ ինչպես որ մայրերն են նախքան իրենց
մանուկներին կերակրելը կակղեցնում կոչտ
կերակուրները, այնպես էլ «Եկեղեցու վար-
դապետներն առաքելական և մարգարեական
խորին ու ծածուկ խոսքերը նախ իրենք են
որոնում և ապա, դյուրըմբռնելի դարձնելով,
կերակրում են հավատացյալներին, այսինքն՝
իմաստնացնելով տգետներին՝ խորհրդագգաց
են դարձնում աստվածային օրենքների ուսմա-
նը», - գրում է Սարգիս Շնորհալին:

Իսկ հպարտությամբ սեփական մտավորու հոգևոր կարողություններին ապավինելը և ինքնահաճ քննությունն ու եզրահանգումները հղի են բազում վտանգներով. «Ինչքա՞ն մոլոր վեցին վարքով և վարդապետությամբ, երբ կուրաբար հետևեցին Ա. Գրքի այս կամ այն պատգամին և ականջ չղրեցին նախնիների կողմից մեկնված ու բացատրված պատգամներին... Շատ հերետիկոսություններ այսպես են ծագել՝ նկատելով միայն ճշմարտության մի մասը» (Մեկն չորից Աւետարանաց):

Մովսեսն ընդունեց Տասնաբանյա օրենքը Հոգուց... և նրան վկա մարգարեները գրեցին՝ դյուրացնելով այն: Նույն Հոգով և առաքյալները գրեցին և առավել հայտնապես ճանաչեց-րին: Նույն Հոգով նույն բանը վարդապետները թարգմանեցին և մեկը մյուսից դյուրըմբռնելի դարձրին (Հովհաննես Մանդակումի):

Ո՞չ խիստ խորությամբ թաքցնել անիմանալի բաները, ո՞չ էլ չափազանց պարզաբանությամբ Աստծու խորհուրդները դյուրալուր դարձնել, այլ միջակ ուսմամբ տալ Գրոց իմացությունը, որպեսզի ո՞չ դյուրընկալությամբ արհամարհվի, ինչպես դյուրագյուտ իրը, և ո՞չ էլ ուսանել կամեցողներն անիմացության պատճառով կորցնեն ճանաչելու հույսը, այլ սակավ

ջանքով ժողովեն Սուրբ Գրոց խոսքերը սրտի հիշատակարանում (և Գրիգոր Նարեկացի):

Մեր մեջ խոսողները շատ են, կարդացող-ները՝ քիչ: Սակայն ոչ ոք չպետք է իր հաճույ-քի համար աղավաղի Աստծու խոսքը: Ավելի լավ է խոստովանել սեփական անզորությունը՝ չսքողելով Աստծու ճշմարտությունը, որպեսզի պատվիրանազանցությունից բացի չմեղանչենք նաև Աստծու խոսքի խեղաթյուրմամբ՝ սիսալ մեկնաբանությամբ (և Մաքսիմ Խոստովանող):

Ով Ավետարանն ու բովանդակ Աստվածա-շունչը մեկնում է կամայականորեն, նա դրա-նով իսկ մերժում է սուրբ Հայրերի՝ Սուրբ Հո-գով մեկնությունը: Ով մերժում է Սուրբ Գրքի մեկնությունը Սուրբ Հոգով, նա, անկասկած, մերժում է նաև Ս. Գիրքը: Եվ Աստծու խոսքը՝ փրկության խոսքը, հանդուգն մեկնիչների հա-մար դառնում է մահվան հուր և երկսայրի սուր, որով այդպիսիք իրենց սրախողինող են անում հավիտենական կորսույան համար (Բ Պետ. Գ 16, Բ Կորած. Բ 15-16): Սրանով իրենց հավիտենա-պես սպանեցին Արիոսը, Նեստորը, Եվտիքեսը և մյուս հերետիկոսները, որոնք Ս. Գրքի իրենց ինքնահաճ և հանդուգն մեկնությամբ աստվա-ծանարդ դարձան:

«Եսու ու՞մ եմ Աայելու, եթե ոչ՝ հեղերին ու խոհարհնե-

րի՛ և մրանց, ովքեր դողում են իմ խոսքից» (Եսայի ԿԶ 2), - ասում է Տերը: Այդպիսի՞ն եղիր Ավետարանի և նրանում ներկա Տիրոջ հանդեպ (ս. Իգաւատի Բրյանձամինով):

Բ. ՍՈՒՐԲ ԳՐՁԻ ՄԱՏԶԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԵՐՏԵՐԸ

Գաղտնի բաները մեր Տեր Աստծուն են, իսկ հաղտնիները՝ մեզ ու մեր որդիներին հավիտլան, որպեսզի կատարենք այս օրենքների բոլոր խոսքերը:

(Բ Օրենք ԽԹ 29)

Սուրբ Գրքի ընկալումն առհասարակ իրենից անհաղթահարելի դժվարություններ չի ներկայացնում: Զկա մի մարդ, որի համար այս Գիրքը բոլորովին անհասանելի ու անհասկանալի լինի: «Սուրբ Հոգու շնորհը, - արդարացիորեն նկատում է ս. Հովհ. Ոսկեբերանը, - հենց նրա համար ընտրեց մաքսավորին, ձկնորսներին, վրանագործին և հովիվներին՝ հասարակու անուս մարդկանց՝ գրելու այս Գրքերը, որպեսզի անուսներից ոչ մեկը չտրտնջա ընկալման խրթնությունից, որպեսզի բոլորն էլ հասկանան, թե ինչ են ասում այս Գրքերը, որպեսզի արհեստավորն ու ծառան, այրին ու ամե-

նատգետ մարդը Սուրբ Գիրքը լսելուց օգուտ
և խրատ ստանա»: Այդուհանդերձ, չի կարելի
ասել, թե Աստվածաշնչում ամեն բան հասկա-
նալի է յուրաքանչյուրի համար¹:

Այն ամենը, ինչ Աստվածաշունչը կամենում
է ուսուցանել մեզ, և ինչ-որ բան՝ նաև նրանց,
ովքեր սուր միտք չունեն, այնքան պարզ ու
ակնհայտ է արտահայտում, որ ոչ միայն ծածկ-
ված չէ գաղտնի իմաստի շղարշով, այլև արտա-
հայտելով իր իսկ հասկացություններն ու մտքե-
րը բառերի բուն իմաստով՝ բնավ մեկնողական
գրականության կարիք չունի: Իսկ որոշ հատ-
վածներ այնքան են պատված և ասես մթնեցված
խորհրդավորությամբ, որ դրանց քննությունն
ու ըմբռնումը մեր առջև հառնում է իբրև վար-
ժանքների ու հոգսերի մի անծայրածիր դաշտ:
Աստված է կարգել այս բանը բազում պատ-
ճառներով. նախ՝ որ հոգեսոր ըմբռնման համար
բոլորովին անմատչելի աստվածային գաղտնիք-
ները չբացահայտվեն բոլոր մարդկանց՝ նույն
գիտելիքի և ունակության տեր թե՛ հավատաց-
յալներին և թե՛ անհավատներին: Երկրորդ՝ որ
հավատացյալների մեջ ի հայտ գան անհոգնե-
րի գաղջությունը և ջերմեռանդների նախան-
ձախնդրությունն ու ջերմեռանդությունը, երբ

¹ Անդ, էջ 23:

վերջիններիս առջև հառնում է հասկանալու անծայրածիր դաշտը։ Ուստի Աստվածաշունչը լավագույնս բաղդատվում է բերրի, պտղաբեր դաշտի հետ, որն աճեցնում ու պտղաբերում է բազմապիսի պտուղներ, որոնց մի մասը մարդու սննդի համար պիտանի է հում վիճակում, մյուսները, եթե կրակի վրա եփվելով ու կակղելով չկորցնեն իրենց տտիպության խստությունը, մարդու սննդի համար կհամարվեն անպիտան կամ վնասակար։ Իսկ ուրիշներն հարմար են և՝ այս, և՝ այն ձեռվ օգտագործվելու համար և հում՝ տտիպ վիճակում էլ զզվելի ու վնասակար չեն, սակայն կրակի վրա եփվելով՝ ավելի օգտակար են դառնում…

Նման բան նկատում ենք նաև հոգեոր գրվածքների այս բերրի այգում, որտեղ որոշ մասեր փայլում են հստակ, ակնառու, տառացի նշանակությամբ, այնպես որ կարիք չունեն խոր մեկնաբանության և պարզ, տառացի իմաստով էլ սնում են լսողներին, օրինակ՝ «Հսի՛ր, հսրալե՛լ, մեր Տեր Աստվածը մեկ Տեր է։ Քո Տեր Աստծուն պիտի սիրես քո ամրող հոգով, քո ամրող էությամբ ու քո ամրող ուժով» (Բ Օրենք Զ 4-5)։

Իսկ որոշ խոսքեր, եթե այլաբանական մեկնությամբ չճշտվեն և հոգեոր հրի բովում չփափկացվեն, ապա առանց վնաս պատճառե-

լու բնավ չեն կարող ներքին մարդու համար փրկարար սնունդ ծառայել, և դրանց ընդունումից ավելի շատ վնաս կլինի, քան որևէ օգուտ: *Օրինակ՝* «Թող ձեր գոտիները մեջքներիդ պնդված լինեն, և ճրագներդ՝ վառված»: Կամ՝ «Թող վաճառի իր վերարկում և իր համար սուր գնի» (*Ղոկ. ԺԲ 35, ԻԲ 36*). Ա՝ «Ով որ իր խաչը չի վերցնում և իմ հետևից չի գալիս, ինձ արժանի չէ» (*Մատթ. Ժ 38*):

Չափազանց խստակրոն որոշ վանականներ՝ նախանձախնդիր Աստծուն, բայց ոչ՝ խոչեմությանը, բառացիորեն հասկանալով այս բանը, փայտե խաչեր էին պատրաստում և միշտ կրում ուսերի վրա, ինչը տեսնողների ոչ թե շինությանն էր ծառայում, այլ ծիծաղն էր շարժում:

Իսկ որոշ խոսքեր հարմարորեն և անհրաժեշտաբար տարածվում են թե՛ տառացի և թե՛ այլաբանական ըմբռնման վրա, այնպես որ և՛ այս, և՛ այն բացատրությունը հոգուն կենսական ավիշ է մատակարարում: *Օրինակ՝* «Եթե մեկը քո ազ ծնոտին ապտակ տա, նրան մյու՛սն էլ դարձրու» (*Մատթ. Ե 39*). Կամ՝ «Եվ երբ ձեզ հալածեն այս քաղաքում, կփախչեք դեպի մեկ ուրիշը» (*Մատթ. Ժ 23*), Ա՝ «Եթե կամենում ես կատարյալ լինել, գնա վաճառի՛ր քո ունեցվածքը և տո՞ւր աղքատներին. և երկնքում գամձեր կունենաս. և դու արի՛ իմ հետևից» (*Մատթ. ԺԹ 21*) (ս. Իոնան Կասիան):

Առակի այն խոսքը, որ ասում է. «Կաթ կթիր,
և յուդ կլիճի, բայց եթե պտուկները շատ ճմլես, արյուն
կգա» (Առակ. I, 33), այս է ասում. կաթ կթիր Սուրբ
Գրքից, և յուղ կլինի քեզ համար՝ գործեր կա-
տարելով: Իսկ եթե «պտուկները շատ ճմլես,
արյուն կգա», այսինքն՝ չի կարելի առավել
«ճմլել» խոսքը և քննել, որպեսզի զազրատես
արյուն չհոսի: Այստեղ կարող է թվալ՝ ինչոր
երկիմաստություն կա, քանզի Սողոմոն իմաս-
տունն ասում է՝ առավել մի՛ քննիր խոսքը, իսկ
Տերը սաստում է հեղգերին՝ քննեցե՛ք Գրքերը:
Ասենք, որ չեն հակասում իրար. Սուրբ Գրքե-
րը նույն Սուրբ Հոգուց են թելադրված, բոլորը
համահունչ են իրար և ճշմարտությամբ են աս-
ված: Տասը կետով բացահայտենք այս բանը:

Առաջին միտքն այն է, որ բոլոր խոսքերը
երեք տեսակի են լինում, այսինքն՝ դյուրա-
հասկանալի, դժվար ըմբռնելի և անըմբռնե-
լի: Դյուրահասկանալին խոսքի մեջ է, դժվար
ըմբռնելին՝ խոսքից դուրս, իսկ անըմբռնելին
գերիվեր է խոսքից: Արդ, դյուրահասկանալին
ուսանելի է առանց քննության, դժվար ըմբռ-
նելիին քննությամբ են հասնում, իսկ անհա-
սանելիին և անճառին լուսվածյամբ պատվի՛ր:
«Քննեցե՛ք Գրքերը» ասելով՝ Տերը նկատի ունի
դժվար հասանելին, իսկ Սողոմոն իմաստունը՝
անհասանելին ու անճառը:

Երկրորդ՝ Արարչին ու արարածներին վերաբերող խոսքեր. այն խոսքը, որ Արարչի մասին է, ճանաչելը կյանք է, քննելը՝ հանդգնություն, հավատալը՝ փրկություն. իսկ արարածներին վերաբերողը քննությամբ ճանաչիր:

Երրորդ՝ խոսքը երկու տեսակի է լինում՝ հայտնի և գաղտնի: Հայտնին մեզ է շնորհված Աստծուն ճանաչելու համար, իսկ գաղտնին միայն ինքը գիտե, «Ում մոտ ծածկված են իմաստության և գիտության բոլոր գանձերը» (Իմմտ. Աթագ. Բ 3): Ինչպես ասում է Մովսես մարգարեն, «գաղտնի բաները մեր Տեր Աստծունն են, իսկ հայտնիները՝ մեզ ու մեր որդիներին» (Բ Օրենք ԻԹ 29): Արդ, եթե դու ամեն բան քննես, ապա Աստծուն քննելու համար ի՞նչ ես թողնում: Այդ նկատի ունի Սողոմոն իմաստունը, երբ ասում է՝ մի՛ քննիր գաղտնին, իսկ Տերը հրամայում է քննել հայտնին և ճանաչել:

Չորրորդ՝ Սուրբ Գրքի որոշ տեղերում իմաստի ըմբռնումը ամփոփված է խորքում, որոշ տեղերում՝ երեսին, ինչպես որ ջրհորներում է. մի տեղ ջուրը լինում է խորքում, իսկ ուրիշ տեղ՝ երեսին: Արդ, այն, որ ջուրը երեսին է, չպետք է խոր փորել ու իջնել, որովհետև ջուրը կկորչի, նույնպես և երեսին ամփոփված խորքի իմաստի դեպքում է. չպետք է խոր քննության ենթարկել, թե չէ կկորչի միտքը. այս իմաստով

է ասում՝ առավել չճմլել, որ արյուն չելնի:

Հինգերորդ՝ ասում է, թե դու, ո՞վ տգետ մարդ, որ անվարժ ես ու մտքով տկար, մի՛ քննիր Գրքերի խոսքերը և մոլորության մեջ մի՛ ընկիր, ինչպես աշխարհական մարդիկ և ուամիկները։ Դու միայն կթիր հավատի կաթը, ինչ որ ասում է քեզ օրենքը, հավատա՛ և կլուսավորվես։ Եվ դու, որ կարող ես քննել և վարժ ու կիրթ ես մտքովդ, մի՛ քննիր երկբայությամբ և թյուրությամբ ամենայն խոսք։ այլ որը կարող ես, ուղղությա՛մբ իմացիր, որը չես կարող, մի՛ քննիր և երկբայության ու թյուրության մեջ մի՛ գցիր խոսքն ու միտքդ։ Քանզի այսպիսի թյուր և երկբա քննությունը հուսահատ ու թերահավատ կդարձնի քեզ խոսքի պատճառով, և կկործանվես (ս. Գրիգոր Տաթևացի):

Ճշմարիտ անգիտությամբ և անհասությամբ հավատում ենք, որ ամենայն մարդ Աստծո պատկերն է, սակայն ինչպե՞ս, միայն Աստծուն է իմանալի։ Բայց զարմանում եմ նրանց վրա, ովքեր ավելի, քան իրենց չափն է, ջանում են և ձգտում ըմբռնել անհասն ու անըմբռնելին։ Բայց մեր՝ տգետներիս կարծիքն է, որ այդպիսիներն ամենեին չգիտեն Սուրբ Գիրքը, ոչ էլ Հոգու զորությունը, որ Գրքում է (Գիրք Թղթոց):

Գ. ՍՈՒՐԲ ԳՐքԻ ԱՆՍՊԱՌ ՀԱՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Երբ ես մտքիս աչքերը Գրքերի խորհրդով վեր բարձրացրի՝ տեսնելու շնորհների գիտության անքննելի խորքը, բացեցի սիրտս՝ հավաքելու ներսում դժվար տեսնվածը և քննելու, տեղեկանալու և հասու լինելու նրա գիտության խորքին, իմ տկար մտքի հասողությունից դուրս մնացածն այնպես զարհութեցրեց ինձ, որ կարծես թե այն ճանաչելու համար պատրաստ էի մոռանալ այն գիտությունը, որը ստացա բացելու պահին:

Ինչպես որ հարբածը որքան խմում, այնքան ավելի է ծարավում, նույնպես և նա, ով Աստվածաշնչի խորհուրդների շուրջ խորհում է և խոկում, որքան ուսանում է, այնքան առավել է ցանկանում ուսանել, քանզի գիտե, որ չի հասնի Սուրբ Գրքի գիտության լրմանը, և մտքի այդ ցանկությունն այրում է, ինչպես հոգեմաշ ցավը, քանզի սակավ հասողության միջոցով ճանաչում է մնացած անբավելին և այդ գիտության ցանկությամբ վարակվում, ինչպես ցավով։ Սակայն այդ ցավերն ու հոգսերն առողջության պատճառ են լինում (ս. Գրիգոր Նարեկացի):

Ինչպես որ անուշահոս նյութերն ինչքան շատ են հարվում մատների մեջ, այնքան ավելի են բուրում, այնպես էլ Սուրբ Գիրքն է. որքան շատ ես ջանում խորասուզվել նրա մեջ, այնքան շատ գանձեր ես գտնում:

Աստվածաշնչի ընթերցանությունը նման է գանձի: Ինչպես որ գանձի մի փոքրիկ մաս կարող է շատ հարստացնել ստացողին, այդպես էլ Սուրբ Գրքի կարճ ասույթում կարելի է մեծ զորություն և մտքերի անճառելի հարստություն գտնել: Ա. Գրքում ոչինչ չի ասված հենց այնպես և առանց պատճառի, այլ նույնիսկ ամենակարճ խոսքը մեծ գանձ է պարունակում: Աստծու խոսքը նման է ոչ միայն գանձի, այլև հարահոս ջրառատ աղբյուրի (Ա. Հովհաննես Ուկերերան):

Կարելի է մի ամբողջ դար ապրել և անդադրում կարդալ միայն Ավետարանը կամ Նոր Կտակարանը և այդպես էլ մինչև վերջ չյուրացնել: Թեկուզ հարյուր անգամ կարդա, բայց կարդալու շատ-շատ բան կմնա (եպիսկոպոս Ֆեոֆան):

Եթե կարդալ չգիտես, մի՛ հեռացիր այնտեղից, որտեղ կարելի է լսել և օգուտ ստանալ, քանզի գրված է. «Եթե իմաստուն մարդ տես-

Աես, առավոտից մրա մո՞ւ եղիր, և թող քո ոտքը մաշի
մրա դում սեմը» (Սիրաք Զ 36): **Սա օգտակար է ոչ**
միայն կարդալ չիմացողների, այլև իմացողների
համար, քանզի շատերն են կարդում և չգիտեն,
թե ինչ են կարդում (ս. Եփրեմ Ասորի):

Պետք չէ կարծել, թե որոշ չափով ճանաչե-
լով ավետարանական ճշմարտությունը՝ կարելի
է հանգստանալ՝ համարելով այն լավագույնս
սերտված, և այլևս չկարդալ սուրբ Ավետարա-
նը:

Առաջին՝ մեր հիշողությունը մտապահում
է միայն այն, ինչը միշտ կրկնում ենք և ինչով
միշտ հետաքրքրվում ենք:

Երկրորդ՝ ճշմարտությունը նույնքան անս-
պառ է, որքան անսպառ է աստվածգիտությու-
նը:

Ինչպես գրում է ս. Իսահակ Ասորին. «իմաս-
տության շավիղը վերջ չունի. նա անընդհատ
վեր է ընթանում մինչեւ իրեն հետեղին Աստ-
ծու հետ միավորելը: Նրա հայտանիշը հենց
այն է, որ նրա ճանաչողությունն անսահման է,
քանզի իմաստությունն ինքն Աստվածն է»:

Ս. Գրքում, անշուշտ, խորություններ կան,
բայց՝ այնպիսիք, որոնց մեջ փղերը ընկղմվում
են, իսկ գառնուկները լողում, ինչպես գիպուկ
ասել է Օգոստինոս Երանելին՝ կամենալով

զուգահեռ անցկացնել Ա. Գրքի վրա մեծագույն ամբարտավանությամբ հարձակվող այս աշխարհի իմաստունների և Քրիստոսի որդիների միջև, որոնք խոնարհ և ուսանելու պատրաստ հոգով են ձեռնամուխ լինում Աստվածաշնչին:

Եվ որքան առավել է մարդը հարստանում ճշմարտությամբ, այնքան առավել է ձերբազատվում մեղքից, այնքան առավել է լուսավորվում նրա բանականությունը և մաքրագործվում նրա սիրտը, այնքան առավել է մերձենում Աստծուն արդեն այս աշխարհում¹:

Օպտինյան մենաստանի ծերերից մեկն ասում է. «Բովանդակ Աստվածաշունչը գաղտնիքներով է պարուրված: Նա խորություն ունի: Նրա իմաստն անսպառ է: Անկարելի է հասկանալ ամբողջը: Ինչպես մեկը մյոււսի հետեւից կարելի է հանել սոխի կեղևները, այնպես էլ Սուրբ Գրքի պարագայում է. մարդը հասկանում է մի իմաստ, որի տակ անթեղված է մեկ ուրիշը՝ ավելի խորը, երկրորդին հաջորդում է երրորդը, և այդպես շարունակ:

Ահա այդպես է Տերը լուսավորում իրեն փնտրողների բանականությունը: Աստվածաշնչում բացի արտաքին երեսից կա նաև ներքի-

¹ Какую духовную литературу читать. М., 1998, стр.14

նը, այսինքն՝ բացի առանձին փաստերից կա
նաև այդ նույն փաստերի խոր նախօրինակա-
յին իմաստը։ Այդ իմաստը բացահայտվում է
մարդու մտքի մաքրագործման համապատաս-
խան»։



ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ա. ԱՍՏԾՈՒ ԽՈՍՔԸ ՄԵԶ ՎՐԱ ԹՈՒՅԼ ՆԵՐԳՈՐԾԵԼՈՒ ՊԱՏճԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իսկ առակը այս է Աշամակում. սերմը Աստծու խոսքն է: Որոնք որ ճանապարհի եզերքին են, այդ պահը են, որ լուսն են, և ասպա սատանան գալիս համում է խոսքը պահց սրտից, որպեսզի չհավատան և չփրկվեն: Եվ որոնք որ ապառաժի վրա են, այդ պահը են, որ երբ լսեն, խնդությամբ են ընդունում խոսքը, բայց արմատ չեն բռնում. պահը միասնամակ հավատում են, իսկ փորձության ժամանակ՝ հեռանում: Իսկ այն, որ փշերի մեջ ընկավ, այդ պահը են, որ երբ լուսն են խոսքը, աշխարհի հոգսերով, հարստությամբ և զվարճությամբ զրադշած լինելով՝ խեղիվում և անպատուղ են լինում: Իսկ այն, որ պարարտ հողի վրա է, պահը են, որ բարի և զվարժագին պրով լսելով խոսքը՝ ընդունում են այն և հարատևելով պսուի են տալիս:

(Ղոկ. Ը 11-15)

Ինչո՞ւ է այսօր Աստծու խոսքը թույլ ներգործում մեզ վրա: Ինչո՞ւ հնում քրիստոնյաներն ավելի զգայուն էին նրա նկատմամբ: Առաջին խոչընդոտը, որը թույլ չի տալիս, որ Աստծու խոսքն ածի և հասունանա մարդու սրտում, ծուլությունն ու անփութությունն են: Հիսուս Քրիստոս իր սերմնացանի առակում

այս մասին ասում է. «Մի մաս սերմ ընկավ ճանապարհի եզերքին» (Ղուկ. Ը. 5): Ճանապարհը խորհրդանշում է ծույլ ու անբան մարդու սիրտը (ըստ ս. Հովհ. Ռսկեբերանի մեկնության): Ինչպես ճանապարհին թափված սերմն է անցորդների ոտքի կոխան դառնում, այդպես էլ ծույլ ունկնդիրը ուշադրություն չի դարձնում Աստծու խոսքին: Նրա համար դատարկ և ունայն պատմություններն ավելի ախորժելի են, քան իրեն քրիստոնեական կյանքի մեջ հաստատող խրատները: Ահա նման անփութության մի օրինակ:

Մի հույն վարժապետ չէր կարողանում հասնել այն բանին, որ ժողովուրդն իրեն ունկնդրեր, երբ խոսում էր պետական կարեորագույն գործերի մասին: Այդժամ նա սկսում է պատմել մի մտացածին պատմություն այն մասին, թե ինչպես մի պատանի ամռանը մի մարդու ավանակ է վարձում, որ մի քաղաքից մյուսը գնա: Երբ կեսօրին արել սկսում է կիզել, երկուսն էլ ցանկանում են չոգից պատապարվել ավանակի ստվերի ներքո, սակայն վիճելով՝ սկսում են հրմշտել իրար ստվերի համար: Պատանին ասում է, որ ինքն է վարձել ավանակը, ուստի նրա ստվերը ևս իրեն է պատկանում, իսկ տերը, թե՝ վարձով է տվել առանց ստվերի: Պատմելով

այսքանը՝ վարժապետը թողնում է իր տեղը, որ հեռանա, սակայն ժողովուրդը ետ է պահում նրան՝ պահանջելով, որ ավարտի պատմությունը և ասի, թե ինչպես լուծվեց վեճը։ Այդժամ վարժապետը ծիծաղում է և ասում. «Ի՞նչ մարդիկ եք դուք։ Ավանակի ստվերի մասին լսելուզում եք, իսկ հայրենիքի փրկության մասին՝ ոչ»։

Այդպիսին են որոշ քրիստոնյաներ. երբ նայում են, լսում կամ կարդում ունայն բաներ, բնավ չեն ձանձրանում, թեկուզ այն տեի մի ամբողջ օր։ Իսկ Աստծու խոսքը կարդալու կամ լսելու ժամանակ չունեն։

Մյուս խոչընդոտը, որը թույլ չի տալիս, որ Աստծու խոսքն արմատավորվի մարդկանց սրտերում և պտղաբերի, խստասրտությունն է։ Հիսուս Քրիստոս խստասիրու մարդկանց նմանեցնում է քարերի. «Եվ ուրիշ մի մաս ընկապ ապառաժի վրա. երբ բուսավ, չորացավ խոնավություն չլինելու պատճառով» (Ղուկ. Ը 6): Ինչպե՞ս է մարդը դառնում քարի նման։ Մեղքի մեջ հարատևելով։ Իմաստունն ասում է. «Ամբարիշտն արհամարհում է չարիքները, երբ հասնում է դրամց խորքերը» (Առակ. ԺԸ 3), այսինքն՝ երբ մարդը վարժվում է անօրեն գործերի, չի լսում ո՛չ խղճի խայթոցները, ո՛չ էլ քարոզիչների հանդիմանությունները։

Երրորդ խոչընդոտը կենցաղային հոգսերն ու հաճույքներն են: Փրկիչը այս ամենը արտահայտեց «փշեր» բառով. «Եվ ուրիշ մի մաս ընկալ փշերի մեջ, ու փշերը նրա հետ բուսելով՝ այն խեղդեցի՛» (Ղուկ. Ը 7): Քիչ չի պատահում, երբ մարդիկ խանդաղատանքով, երբեմն էլ արցունքով են իրենց մեջ ընդունում Աստծու խոսքը, թվում է՝ ուզում են մաքրագործվել մեղքերից ու ճշմարիտ ուղի գտնել: Հետագայում, սակայն, չցանկանալով զրկվել որևէ ժամանակավոր բարիքից կամ էլ ցանկանալով առավել բազմապատկել հարստությունը, իրենց հոգեսոր տկարության պատճառով մնում են այնպիսին, ինչպիսին եղել են: Ուստի Տերն ասում է. «Չեք կարող ծառայել Աստծուն և մամոնայի՛» (Մատթ. Զ 24): Մանավանդ մարմնական կրքերն ու արծաթասիրությունը թույլ չեն տալիս, որ Աստծու խոսքը պտղաբերի մարդու սրտում: Սրանք են փրկարար սերմերի՝ Աստծու խոսքի ընդունման և հոգում պահելու հիմնական խոչընդոտները¹:

¹ Как читать Библию?, Москва, 1996, стр. 12-14

Բ. ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ՉԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իմ ժողովուրդը նմանվեց պրամ, ով իմացություն չունի.
քանի որ դու մերժեցիր իմացությունը, Ես էլ քեզ կմերժեմ:
(Օսեն Դ 6)

Ինչո՞ւ ենք անփույթ հոգեւորի նկատմամբ և
Սուրբ Գրքի ընթերցվածքներին ուշադրություն
չենք դարձնում, որի պատճառով Աստված հա-
կառակվելով՝ տանջում է մեզ: Որովհետև մենք
օտարութի հոգով ծանրաբեռնեցինք մեր միտքը
և խարխափում ենք, ինչպես խավարում: Մեկը
որովայնին է ծառայում իբրև խուժուղուժ տիկ-
նոջ և սպասավորում է անառակությամբ, ուրիշը չի
ճանաչում պոռնկության տոփանքը և, մարմնի
ցանկությամբ գերված, խոզի օրենքով թափալ-
վում է ցեխի մեջ, մեկ ուրիշը ծառայում է կոա-
պաշտությանը և կործանող արծաթին, իբրև
տիրոջ՝ հարկ է տալիս, իսկ ոմանք էլ, հետեւլով
ատելությանը, ոխակալությանը, նախանձին,
եղբորը զրպարտելուն կամ էլ անօրինություն-
ներին, անձնատուր են լինում մարմնականին՝
զրկվելով ճշմարիտ Հոգուց, այսինքն՝ Սուրբ
Գրքի ընթերցանությունից: Եվ չեն իմանում,
որ բոլոր չարիքներն անուսությունից են ներս
թափանցում և ապականում հոգին: Այսպիսի

ժանտ մարդիկ ոչ միայն չեն ընթերցում, այլև
Ա. Գիրք ընթերցելն ավելորդ գործ են համա-
րում:

Արդ, այսպիսիք ողբի ու արտասուքների
են արժանի, քանզի, կույր լինելով, զրկվում են
արդարության Արեգակի ճառագայթներից և
պատժվում (Սարգիս Շնորհալի):

Ինչպես որ արհեստն իր գործերով է կատար-
յալ լինում, և արհեստավորը, որքան էլ հմուտ
լինի, առանց գործերի ոչնչի չի կարող հասնել,
այդպես էլ քրիստոնեությունը, որ ամենամեծ
արհեստն է, իր գործերով կարող է կատարյալ
լինել: Իսկ քրիստոնեության գործիքը Աստ-
վածաշունչ Մատյանի խոսքերն են. պետք է և
պատշաճ է բոլորին դրանք այնքան իմանալ, որ
ուրիշներից սովորելու կարիք չզգացվի, քան-
զի անսուտ է Քրիստոսի խոսքը. «Փատրեցե՛ք և
կգտնե՛ք, բախեցե՛ք, և կրացվի ձեր առաջ» (Մատթ. Է
7): Սակայն շատերը բազում պատճառներ են
բերում, ինչպես՝ երեխաներին մեծացնելը, կա-
նանց հոգսերը հոգալը, թագավորական հար-
կերը, և այդ իսկ պատճառով հանձն չեն առ-
նում այդպիսի աշխատություն:

Ուստի աղաչում ենք, որ երբ ուրիշներից
խոսքերը լսեք, հոժարությա՛մք մտապահեք,
գեթ այնչափ, որչափ հոգ եք տանում նյութա-

կան բաներ կուտակելու մասին: Թեպետ անհարիր է այս համեմատությունը, սակայն նույնքան սեր ցուցաբերեք խոսքը լսելու հանդեպ, քանզի Սուլբ Գրքի չիմացության պատճառով բյուրավոր չարիքներ են պատահում: Ինչպես որ ոչ ոք չի կարող առանց լույսի ուղիղ գնալ, այդպես էլ նրանք, ովքեր չեն հայում աստվածային Գրքերի ճառագայթներին, հանապազմեղանչում են (Բարսեղ Վարդապետ Ծո՛ն):

Ավետարանը նկարագրությունն է նոր Մարդու հատկությունների, որը երկնավոր Տերն է (Խմնտ. Ա Կորանթ. ԺԵ 47-48): Այս նոր Մարդը ընությամբ Աստված է: Իր սուրբ ցեղի մարդկանց, ովքեր հավատում են իրեն և իրենով կերպարանափոխվում, նա չնորհով դարձնում է աստվածներ:

Դուք, որ թափալվում եք մեղքերի գարշահոտ ու կեղտոտ ճահճում, հաճելի եք գտնում այն: Բարձրացրե՛ք ձեր գլուխները, նայե՛ք ջինջ երկնքին. այնտեղ է ձեր տեղը: Աստված ձեզ պարզեցում է աստվածների արժանապատվություն, իսկ դուք, մերժելով այն, ընտրում եք այլ բան՝ կենդանիների արժանապատվություն, այն էլ՝ ամենապիշտ: Ուշքի՛ եկեք: Թողե՛ք ժանտահոտ ճահիճը, սրբագործվե՛ք մեղքերի խոստովանությամբ, մաքրագործվե՛ք ապաշ-

խարության արտասուքներով, զարդարվե՛ք խանդաղատանքի արցունքներով, վե՛ր կացեք հողից, բարձրացեք երկի՛նք. ձեզ այնտեղ կտանի Ավետարանը: «Քանի դեռ լույսը ձեզ հետ ունեք», այսինքն՝ Ավետարանը, որտեղ Քրիստոսն է, «հավատացե՛ք լուսին, որպեսզի լուսի որդի մեր լինեք» (Հովհ. ԺԲ 36) (ս. Իգմատի Բրյանչանինով):

Արդյոք մաքո՞ւր եք դուք, արդյոք սուրբ և կատարյա՞լ եք առանց Ավետարանն ընթերցելու և այս հայելու մեջ նայելու կարիքը չունե՞ք: Թե՞ շատ այլանդակ եք հոգով և վախենում եք ձեր այլանդակությունից: «Մոտեցե՛ք Տիրոջն ու լո՛յս առեք, և թող ձեր երեսը չամաչի» (Սաղմ. Լ Գ 6) (ս. Իովան Կրոնշտադտսկի):

Անմիտ է նա, ով չի իմանում Աստծու կամքը և ըստ իրեն իմաստուն է, ով գործում է սեփական մտածողությամբ՝ հավատով չհամապատասխանեցնելով իր գործերը Տիրոջ խոսքերին:

Նախ՝ նրա մտածողության մեջ ոչինչ չի համարվի բարի, և նա ոչինչ չի խորհի սկզբունքների մասին, եթե նախապես Տիրոջ պատվիրաններով չիմաստնանա Աստծու կամքին համապատասխան թե՛ խոսքերի և թե՛ գործերի մեջ... Քանզի «մենք անձամբ մեզնից որևէ բան խորհելու կարող չենք, այլ Աստծուց է մեր կարողությու-

Աղ» (Բ Կորնթ. Գ.5), Ով մարդուն գիտությունը սովորեցրեց (ս. Բարսեղ Կեսարացի)¹:

Սիրով ջամբենք հոգեւոր ստինքների խոսքի կաթը և հոժարությամբ զմայլվենք Սուրբ Հոգու պարգևներով, որպեսզի չմնանք ինչպես մի անմշակ ու անարդյունք անդաստան, որ միշտ սերմանվում է և սերմնակորույս լինում. զուր աշխատանք և ընդունա՛յն հոգնություն:

Այսպիսին են ցրված միտք ու զբաղված բարք ունեցողները, որոնց մոտ սպառվել է աստվածային Կտակարանների ունկնդրության սերը, որոնք շրջում են աշխարհում, ինչպես կույրն ու ակնազուրկը: Քանզի կա՛մ բնավ չեն ընթերցում և կա՛մ ինչ որ ընթերցում են, ոչ թե՝ սիրով ու փափագով, այլ՝ որպես հարկադիր մի բան և պարտքերի հատուցում: Քանզի ոչինչ ավելի ողորմելի չէ, քան Սուրբ Գրքի հանդեպ սիրո և աստվածային պատվիրանների վերծանության բաղձանքի սպառումը (Խոսրով Աճճացի):

«Արմատավորված նախապաշարումներից է այն կարծիքը, ըստ որի՝ Աստվածաշունչը ծայ-

¹ «Ինչպես վկայում են սուրբ հայրերը, Ծմարտապես Աստծու կամքը փնտրող քրիստոնյայի առաջին հատկանիշն է, սեփական մտածումներն ու կարծիքները մի կողմ դրած, Աստծու խոսքի հավատարիմ սերտմանն ու յուրացմանը տրվելը» (Տիգրան Խաչատրյան, Գանձասար, Ա հատոր, Էջ 143):

ըեծայր կարդալը և՝ ձանձրալի է, և՝ անօգուտ, գրում է մի հեղինակ։ Այս նախապաշարման ազդեցության ներքո ես մինչև 35 տարեկան դառնալս չէի համարձակվում ձեռնամուխ լինել Կենաց Գրքի ուսումնասիրությանը, թեպետ այդ ընթացքում ընթերցել էի բազում գրքեր, որոնք իսկապես և՝ ձանձրալի էին, և՝ անօգտակար։ Հիմա, երբ արդեն կարդացել եմ, համոզված կերպով ասում եմ, որ Սուրբ Գիրքն ընթերցելը ձանձրալի չէ և ծայրաստիճան օգտակար է, որ Կենաց Գրքի չիմացությունը ամոթալի տգիտություն է քրիստոնեական ժողովուրդների մտավորականության համար, և որ հենց այստեղ է ամփոփված մարդկային բանականությանը մատչելի ամենակուռ աշխարհայացքը, ամենավսեմ տեսլականը և ամենակատարյալ բարոյականությունը»¹:

Աստծու խոսքի ունկնդրությունն ու ընթերցանությունը թե՛ անցյալում և թե՛ այսօր դիմագրության է հանդիպում, այն է՝ լսողներն ու ընթերցողները չեն կատարում Աստծու խոսքը, չեն ուղղվում, որով առավել են դատապարտվում. «Այն ծառան, որ գիտե իր տիրոջ կամքը, բայց նրա կամքի համաձայն չի պատրաստի, շատ ծեծ կուտի» (Ղուկ. ԺԲ 47): Նման թյուրիմացության

¹ Անդ, էջ 22:

դեմ առարկել է դեռևս *Տիմոթեոս Ալեքսանդրացին*. «Եթե չենք էլ կատարում, ապա չենք էլ կարող մեր անձերը չհանդիմանել նրա համար, որ լսելով՝ չենք հնազանդվում: Սեփական անձի հանդիմանությունը փրկության մասն է: Հոգեոր ընթերցանության օգտակարությանը կասկածողներն անտեսում են այն հանգամանքը, որ խոսքը հազվադեպ է գործում շոշափելի, տեսանելի կերպով, այլ գրեթե միշտ՝ քիչ-քիչ, աստիճանաբար, աննկատ, ինչպես սնունդն ու օդն են կազդուրում հիվանդին: Հեթանոսական խավարի երկրում Դանիել մարգարեն սիրում էր բացել դեպի երուսաղեմ նայող պատուհանը: Այնպես էլ մենք, որ նանրությամբ գերված հոգի ունենք, պետք է ուղղենք աչքն այնտեղ, որտեղ փայլում է Աստծու լույսը, և խոնարհեցնենք ականջը դեպի Աստծու խոսքը»¹:

Ասացե՛ք ինձ՝ ձեզնից ո՞վ է, որ քրիստոնեական Գիրքը տանը ձեռքն առնելով՝ ուշադրությամբ կարդում և ջանում է ճանաչել Աստվածաշունչը: Ոչ ոք չի կարող այդ բանն ասել իր մասին: Շաշկի ու զառեր շատ-շատերի մոտ կդտնեմ, իսկ Աստվածաշունչ ոչ ոք չունի, բացառությամբ քչերի: Վերջիններս էլ նման են Գիրքը չունեցողներին. նրանք թաքցնում են

¹ Անդ, էջ 22-23:

այն ինչ-որ տեղ կամ պահում պահարանում և հոգ չեն տանում այն կարդալու մասին։ Ո՞րն է դրա օգուտը, ասացե՞ք ինձ։ Աստվածաշունչը մեզ չի շնորհված նրա համար, որ ունենանք այն որպես գիրք, այլ՝ որպեսզի դրոշմենք այն մեր սրտերում։

Իսկ ինչպե՞ս են նրանք արդարացնում իրենց այս հանցանքը։ «Ես, ասում է, վանական չեմ, կին ունեմ, երեխաներ, տան հոգսերն եմ քաշում»։

Ահա թե ինչն է ամեն բան վարակում և կործանում. դուք կարծում եք, թե միայն վանականնե՞րն են պարտավոր կարդալ Աստվածաշունչը։ Ընդհակառակը, դուք նրանցից առավել դրա կարիքն ունեք։

Հատկապես ձեզ՝ աշխարհականներիդ է հարկավոր այս բժշկությունը, քանզի ապրում եք աշխարհում և ամեն օր հարվածներ ստանում. մեկ կինդ է քեզ զայրացնում, մեկ՝ տղադ վրդովեցնում ու ցասումդ առաջ բերում, մեկ՝ հետապնդում է հակառակորդդ, մեկ՝ նախանձում ընկերդ... Հաճախ կամ սպառնում է դատավորը, կամ աղքատությունն է ընկճում, կամ հարազատիդ կորուստն է վշտացնում, կամ երջանկությունն է հպարտացնում, կամ էլ դժբախտությունն է ճնշում քեզ։ Կարճ

ասած՝ մեզ ամեն կողմից պաշարում են բազում պատուհասներ ու անախորժություններ, որոնք անխուսափելիորեն մղում են հոգսերի, չփոթվելու, վշտանալու, անհանգստանալու, մեծամտանալու։ Ամեն կողմից մեզ վրա են սուրում այնքան նետեր, որ անընդհատ Սուրբ Գրքի զրահի կարիքն ունենք, ...քանզի անհնար է, անհնար է, ասում եմ, որ որևէ մեկը փրկված լինի կամ կարողանա փրկվել առանց Ս. Գրքի ընթերցանության։

Եթե հարցնելու լինեմ, ասացեք ինձ, թե ո՞վ այստեղ ներկաներիցդ կկարողանա թեկուզ մի սաղմոս կամ որևէ այլ սուրբգրային հատված անգիր ասել։ Ոչ ոք։ Եվ զարմանալին միայն դա չէ, այլև այն, որ դուք՝ հոգեսոր գործերում պղերգներդ, սատանայականի նկատմամբ ավելի արագավազ եք, քան հուրը։ Եթե հանկարծ մեկի մտքով անցնի հարցնել ձեզ դիվական երգերի, անառակ ու տոփալի եղանակների մասին, ապա կհամոզվի, որ շատերն են քաջատեղյակ ու հաճույքով երգում են դրանք։ Իսկ ինչպես են արդարանում, եթե մեղադրում ես այդ բանում։ Ես, ասում է, վանական չեմ, կին ու երեխաներ ունեմ և տան հոգսերն եմ հոգում։ Ողջ չարիքն էլ հենց նրանից է, որ կարծում եք, թե իբր Ս. Գրքի ընթերցանությունը վա-

յել է միայն վանականներին, այնինչ դուք նրա կարիքն անհամեմատ ավելի շատ ունեք: Այս բժշկությունը մանավանդ հարկավոր է աշխարհականի համար, ով ապրում է աշխարհում և ամեն օր նորանոր հարվածներ ստանում: Ուստի Աստվածաշնչի ընթերցանությունն ավելորդ համարելը անհամեմատ ավելի վատ է, քան այն չընթերցելը: Այդպիսի միտքը սատանայական ներշնչանք է (ս. Հովհաննես Ոսկերերան):

Գ. ԱՍՏՎԱԾԱՇՈՒՉԸՆ ԵՎ ՄՅՈՒ ԳՐՔԵՐԸ

Եղբայրներ, ձեզ համար այս բանը օրինակ բերեցի իմ ամձով և Ապողոսի ամձով, որպեսզի մեզնից սովորեք ավելի բամ չիմանալ, քան ինչ որ կա Գրվածքներում, որպեսզի ոչ մի մարդ, ավելի բամ ըմկերը, չգոռողանա ըմկերոց վրա:
(Ա. Կորնթ. Դ. 6)

Թող ոչ ոք, բացի Աստվածաշունչ գրքերից, բնավ որևէ բան չկարդա: Ինչի՞ համար է պետք Սուրբ Հոգու փոխարեն պիղծ հոգով լցվել: Որովհետեւ ով ինչ խոսքի մեջ որ վարժվում է, դրա հոգին էլ ընդունում է, թեև այդ բանում նա վտանգ չի տեսնում, ինչպես որ տեսնում են փորձառուները (ս. Բարսեղ Կեսարացի):

Նախնիների օրենքներն ամբողջությամբ պահենք. չփորձենք լուծարել Աստծու օրենքները և հաստատել մեր ավանդությունը... Երուսաղեմի՝ ավետարանիչներ, բարձրացրե՛ք ձեր ձայները, մի՛ վախեցեք ավանդություններից (Ա. Ներսես Լամբրոնացի):

Գիտելիք ձեռք բերելու համար կարդալը մի բան է, իսկ խրատի համար կարդալը՝ մեկ այլ բան: Առաջին դեպքում շատ է ընթերցվում, իսկ երկրորդ դեպքում շատ ընթերցել պետք չէ. Հենց որ կարդացածից ինչ-որ բան ընկնում է սրտիդ մեջ, կա՞նգ առ և մտածի՛ր՝ փորձելով նաև պարզել և ավելի խորացնել այդ միտքը սրտիդ մեջ: Սա նույնն է, ինչ այն դարձնել Աստծու մասին խոկալու առարկա: Այս եղանակով կսնուցեք և կաճեցնեք ձեր հոգին, ոչ թե պարկի պես կլցնեք այն (Ա. Ֆեռֆան Զատվոր-Ահկ):

Ավետարանը տարբեր է այլ գրքերից, որովհետև կրթում է սիրտն ու հոգին: Կաթից ավելի սննդարար կերակուր է այն, Գողգոթայի խաչի փեթակի մեջ պատրաստված մեղրն է՝ իբրև նոր մանանա (Խորիմյան Հայրիկ):

Ավետարանն այն Գիրքն է, որից ավելի բարձր մտավորական արտադրություն լույս եկած չէ (Մաղաքիա արք. Օրմանյան):

Այստեղ է փիլիսոփայությունը, քանզի ամեն կեցության պատճառները Արարիչ Աստծու մեջ են: Այստեղ է բարոյագիտությունը, որովհետև լավ և ազնիվ կյանքը ամբողջանում է այն ժամանակ, երբ սիրում են այն, ինչ հարկ է սիրել, այսինքն՝ Աստծուն և մերձավորին, և այնպես, ինչպես հարկ է սիրել: Այստեղ է տրամաբանությունը, քանզի բանական հոգու ճշմարտությունն ու լույսը Աստվածն է: Այստեղ է նաև առավել գովելի պետական բարօրությունը, քանզի պետությունը լավագույնս պահպանվում է հավատի և կայուն համաձայնության հիմքով ու միությամբ, ընդորում սիրո նպատակը համընդհանուր բարիքն է, իսկ վսեմագույն և ճշմարտագույն բարիքը Աստվածն է: Եվ արդեն այս դարում ոմանք ապացուցել են, որ բոլոր փիլիսոփայական գիտությունների և արվեստների հիմքը ավելի շատ Ս. Գրքում է, քան որևէ այլ տեղ: Սուրբ Հոգու տեսչությունը պարզապես զարմանք է հարուցում. ճիշտ է, նա ամենից առաջ ձգտում է լուսավորել անտեսանելին ու հավիտենականը, բայց և միաժամանակ տեղ-տեղ բացահայտում է բնականի և արհեստականի հիմքերը՝ առաջնորդելով յուրաքանչյուր խոհեմ խորհուրդ և արարք: Հեթանոս փիլիսոփաների մոտ հազիվ

թե հանդիպի այս ամենի ստվերը (Օգոստինու Երամելի):

Եղբայրնե՛ր, սրտի լսելիքով որսացե՛ք Փրկ-չի յուրաքանչյուր ավետարանական խոսքը և պահե՛ք սրտում. դա մարդկային խոսք չէ, որը հաճախ լինում է սուտ, դատարկ, անզոր և մո-լորեցնող, այլ Աստծու խոսք է, ճշմարտության խոսք, ամենազոր խոսք: Տիրոջ յուրաքանչյուր խոսքը կյանք է մեզ համար, և Փրկչի շուրթե-րով ասված բոլոր խոսքերը կկատարվեն մինչև վերջին հովտը¹. ոչինչ չի անցնի:

Կարդալով աշխարհիկ ստեղծագործու-թյուններ, ամսագրեր ու թերթեր՝ դու հե-տաքրքրվում ես արտաքին աշխարհի իրադար-ձություններով: Մի՛ անտեսիր ներաշխարհդ ու հոգիդ. նա ավելի մոտ է քեզ ու ավելի թանկ: Ամենից շատ ու ամենից հաճախ ընթերցիր Ավետարանն ու սուրբ Հայրերի գրվածքները, քանզի քրիստոնյայի համար Աստվածաշունչ Գրքեր չընթերցելը մեղք է (ս. Իոան Կրոնշտադտս-կի):

Անհրաժեշտ է նշել, որ կրօնին նվիրված բոլոր գրքերը չեն, որ նույն նշանակությունն ունեն քրիստոնյայի հոգու և կյանքի նպատա-

¹ Յովտ, նշանախեց՝ Եբրայերենի փոքրագույն նշանագիրը: Փիսք՝ կետ, նշան:

կի համար, որն է Սուրբ Հոգու ստացումը։ Կարելի է մտքերով սնել գիտակցությունը առանց սրտի զգացմունքներին դիպչելու, սակայն այդ այնքան էլ օգտակար չէ քրիստոնյայի համար սիրտը կըքերից ու մոլություններից մաքրագործելու և սրտում քրիստոնեական առաքինություններ հաստատելու առումով։

Հարկ է հիշել Պողոս առաքյալի խոսքերը։ «Գիտությունը հպարտացնում է, բայց սերը՝ հաստատում» (Ա. Կորնել. Ը 1):

Սրտի նշանակությունը մոռացող և աստվածաբանական հարուստ ու բազմակողմանի գիտելիքներ ձեռք բերել տենչացող քրիստոնյաներին պետք է զգուշացնել, որ այստեղ զուտ մտահայեցողական կյանքի վտանգ կա։ Վարդապետ Սոֆրոնին ծեր Սիլուանի մասին իր գրքում քրիստոնյայի հոգու համար հաճախ ամուլ այս աշխատանքի մասին ասում է. «Խորագիտակ աստվածաբանը ծերի գրվածքների մասին թերևս ասի. «Ես այստեղ աստվածաբանական մտքերի հարստություն չեմ տեսնում, ինչպես նաև՝ դավանաբանական իմացություն»։ Նա այդպես կարտահայտվի այն պատճառով, որ նրա ոգեղինությունը պատկանում է հոգեստը կյանքի այլ անդաստանի»։

Աստվածաբան ուացիոնալիստը զբաղված է

բազում խնդիրներով և փորձում է դրանց լուծումը գտնել բանական մտահայեցողության ոլորտում։ Նրա իրական հոգեւոր փորձառությունը մեծ չէ. այն բանականության ոլորտից է, ոչ թե՝ Աստծու հետ կենդանի հաղորդակցությունից։

Իր լայն գիտական էրուղիցիան և խոր մտածական փորձառությունը նա համարում է հոգեւոր հարստություն և այնքան բարձր է դասում, որ ամեն մի ուրիշ փորձառություն նրա աչքում մղվում է երկրորդ պլան։

Աստծու հետ հաղորդակցություն փնտրող, Աստծով ապրող իրապես հոգեւոր մարդու համար ակնհայտ է ռացիոնալիստի հրապուրանքի միամտությունը։ Նա ինչ-որ առումով տարակուսում է, չի հասկանում, թե ինչպես խելացի մարդը կարող է բավարարվել սեփական անհիմն կռահումներով և վերացական կառույցներով։

Այստեղ անհրաժեշտ է հիշել նաև այն, թե որքան խիստ էր արտահայտվում ծեր Վարսահանովի *Օպտինսկին* այն աստվածաբանական գիտությունների մասին, որոնք դասավանդվում էին իր ժամանակի (XX դ. սկզբի) ճեմարաններում և հոգեւոր ակադեմիաներում։ Նա ասում էր. «Հոգով ընթացեք, տեսեք, թե ճեմա-

բաններում ու հոգևոր ակադեմիաներում ի՞նչ անհավատություն, նիհիլիզմ ու մեռելություն կա. և այս ամենը առանց զգացմունքի ու հասկանալու անգիր անելու պատճառով է: Սանի համար տարօրինակ է, անհասկանալի է միայնակ եկեղեցի գնալը, մի անկյունում կանգնելը, լաց լինելը, խանդաղատվելը. այդ ամենը խորթ է նրան» (Նիկոն Օպտիմակի):

Դ. ԱՍՏՎԱԾԱՇՈՒԶԸ ԵՎ ԱՂԱՄԴՆԵՐԸ

Այժմ էլ ձեր մեջ կարող եմ լինել սուսուցիչներ, որոնք, սպրեցնելով կորատաքեր հերձվածներ եմ ներմուծելու և, որանալով Տիրոջը, որ իրենց գմեց, իրենց վրա արագահաս կորուստ են բերելու:

(Բ. Պետ. Բ. 1)

Մենք նույնպես ամենից առաջ սկսում ենք բոլոր բարիքների գլխից՝ հավատից, և այն լսողներիդ ենք ներկայացնում՝ ոչ թե նոր բան ավելացնելով, այլ առաքյալների, մարգարեների, սուրբ հայրերի հիմքի վրա համառոտ խոսքով կառուցելով, որպեսզի որևէ մեկը չշեղվի ճշմարտությունից՝ անուս տգետների խոսքերն ունկնդրելով, որոնք ոչ թե ուղղափառ եկեղեցու վարդապետության համաձայն են, այլ

Աստվածաշունչ Մատյանից դուրս բաներ են և դեպի կործանում են առաջնորդում լսողներին (ս. Ներսես Շնորհալի):

Խմենք Աստծուխոսքիկաթը Աստվածաշունչ Մատյանի ստինքներից... Եվ կրթենք մեր մտքի քիմքը Աստվածաշունչ Մատյանի գիտությամբ, որպեսզի մեզ և մերընկերներին փրկենք հերձվածողների հրապուրանքներից... Աստվածաշունչ Մատյանի գիտությամբ քննենք այլաղանդների բազմաթիվ վարդապետությունները և տեսնենք, թե նրանց դավանած վարդապետությունը ընդհանրական առաքելական Եկեղեցունն է... Իսկ մենք միմիայն սուրբգրային վարդապետությամբ այս ամենը պահենք, այլև Աստծուն աղոթենք (Սարգիս Շնորհալի):

Մենք, երբ հերձվածողների¹ դեմ ենք

¹ Եթե նախկինում աղանդների գաղափարական առանցքը կազմում էր սուրբգրային այս կամ այն գաղափարի թյուր մեկնությունը՝ հակառակ Եկեղեցու ուղղափառ դավանանքի և ավանդության, ապա այսօր աղանդները որդեգրել են նոր՝ չլսված հանդուզն գործելակերպ: Ի տարբերություն մեր սահակ-մեսրոպյան և առհասարակ բոլոր հին ավանդական թարգմանությունների՝ բնագրի լեզվին և ոգուն հարազատ մնալու հիմնարար սկզբունքի, նրանք խմբագրում են Աստվածաշունչն ըստ իրենց դավանանքի՝ անճանաչելիորեն աղավաղելով Սուրբ Գրքի խորագրերն ու սրբազն բնագրերը: Այսպես, Եհովայի վկաների Սուրբ Գրքի «Նոր աշխարհ» թարգմանությունը Դին և Նոր Կտակարանների փոխարեն գործածել է համապատասխանաբար «Եբրայական գրություններ» և «Քրիստոնեական հունական գրություններ»: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի և Սուրբ Հոգու Աստվածությունը փաստող վկայություն-

մարտնչում, այստեղից Սուրբ Գրքից ենք սպառագինվում: Պողոս առաքյալը ասում է. «Աստծու շնչով գրված ամեն գիրք օգտակար է ուսուցման, հանդիմանության...»: **Պետք է ստուգությամբ քննել ամեն ինչ, քանզի Աստվածաշունչ Գրքերի խոսքերը հոգևոր գենքեր են...** Զգիտե՞ք, որ Գրքերը միայն առաջին մարդկանց համար չգրվեցին, այլև՝ մեզ համար: Զե՞ք լսել Պողոսի խոսքը. «Բայց որպես խրատ գրվեց մեզ համար, մեզ, որոնց համար հասել է հավիտյանների վախճանը» (Ա Կորնթ. Ժ 11), կամ՝ «որպեսզի համբերությամբ և Գրքերի պարզևած միսիթարությամբ հուզան ընդունեաք» (Հոռմ. ԺԵ 4): **Այսուհետև փութանք ստուգությամբ քննել Գրքերը, քանզի չենք կա-**

ները կամայականորեն նենգափիութել են, անհետացել են դժոխք և դրախտ հասկացությունները. նահվանից հետո, ըստ նրանց, հոգին մեռնում է, և այլն: Ս. Մայիսյանն իր «Ժամանակակից աղանդները Դայաստանում» գրքում այս թարգմանության առնչությամբ գրում է. «Ըստ Էտիւյան՝ Ս. Գիրք չէ և կապ չունի Սուրբ Գրքի հետ այն առունով, ինչպես ընկալում են այդ քրիստոնյաները: «ԱԱ» թարգմանությունը ոչ թե Աստծու խոսքն է մարդկությանը, այլ՝ Կառավարության դեկավար ճարմնի հրահանգները ճարդկությանը»:

Արհասարակ պետք է խաստագույնս գգուշանալ աղանդների և մասնավոր հրատարակչությունների («Գեղենն», «Կենաց խոսք», «Կենաց ջուր», «Կենդանի հոսք» և այլն) բոլոր հրատարակություններից և կարդալ միայն մայր Եկեղեցու հրատարակած Աստվածաշունչ Մատյանը՝ լինի այն գրաբար թե աշխարհաբար, իսկ ռուսերեն՝ միայն Ռուս Ուղղափառ Եկեղեցու սինոդական հրատարակությունները:

Նշենք նաև, որ բողոքականների հրատարակած Սուրբ Գրքի ցանկում բացակայում են ինը երկրորդականոն գրքերը:

ըող մեր փրկությանը հասնել, եթե հարաժամ չզբաղվենք Գրքերի ընթերցանությամբ, ուղիղ ավանդությամբ և ստույգ վարքով (ս. Հովհաննես Ոսկերերան):

Պետք է և պատշաճ է, որ ամենաաննշան բանն իսկ առանց սուրբգրային վկայության չլինի: ... Արդ, ինձ էլ՝ այս ասողիս, հենց այն-պես մի՛ հավատա, եթե այդ բանը Սուրբ Գրքից ցույց չտամ, որովհետև մեր այս հավատի վկայությունը ոչ թե բանիմացությունից է, այլ Սուրբ Գրքի հանդիմանությունից (ս. Կյուրեղ Երուաաղեմացի):

Պետք է քննել, խորհել և կատարել այն, ինչ աստվածահաճո է՝ Սուրբ Գրքի ծամարիտ վկայությամբ, և չզբաղվել բազմախույզ խնդիրներով, որոնք հեռացնում են սուրբ հավատից (ս. Գրիգոր Լուսավորիչ):

Ուսանելով և լսելով ստացիր հավատը և պահիր միայն այն հավատը, որ ուսուցանված է սուրբ Եկեղեցուց և հաստատված բոլոր Սուրբ Գրքերով: Արդ, որովհետև ոչ բոլորը կարող են կարդալ Սուրբ Գիրքը. ոմանք՝ տգիտության, ոմանք էլ՝ իրենց ներսի տգիտությունը խափանել չջանալու պատճառով: Եվ որպեսզի հոգիները չկործանվեն, հակիրճ կարգադրությամբ ամփո-

փեցինք հավատի ուսուցումը։ Փութալով կամենում եմ ավելին ուսուցանել՝ սրտերի մեջ մեծուշադրություն արձանագրելով։ Զգուշացե՞ք՝ դրա մեջ կանխապես հաստատվելով… ամուր պահեք սա՝ որպես պաշար դարձնելով ձեր կյանքի ընթացքում, և սրանից բացի այլ բան չընդունեք։ Նույնիսկ եթե մենք, մեր խոսքերը փոխելով, հակառակը ուսուցանենք, կամ թե մի թշնամի հրեշտակ, լուսո կերպարանք առնելով, կամենա խարել ձեզ։ «Եթե մենք կամ երկնքից իշած հրեշտակ ավետարանի ձեզ ավելին, քան այն, որ մեզնից ստացաք, նզովյա՛լինի» (Գաղ. Ա, 8-9)։ Եվ նախ նույն խոսքերի վրա ամրանալով՝ պահի՛ր մտքումդ հավատի համար, սակայն իր ժամանակին այդ խոսքերի ապացույցը սպասիր Սուրբ Գրքից ստանալ։ Քանզի հավատի հաստատությունը դրվեց ոչ թե այնպես, ինչպես հաճո է մարդկանց, այլ ամբողջ Գրքից ամենահարմար խոսքերը հավաքված լինելով՝ ամբողջանում են հավատի հաստատության մեկ վարդապետության մեջ (Ա. Կյուրեղ Երուսաղեմցի):

Ե. ԱՍՏՎՃԱՇՆՉԻ ՆՀԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ Ի ՊԵՏՍ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Որովհետև մանկուց գիտես Սուրբ Գրքերը, որոնք կարող են են իմաստում դարձնել քեզ փրկության համար այն հավատի միջոցով, որ Քրիստոս Հիսուսի մեջ է:

(Բ Տիմ. Գ 15)

Ուզո՞ւմ ես, որ զավակդ բարեբարո լինի. սկզբից ևեթ դաստիարակի՛ր նրան համաձայն առաքյալի Հորդորի՝ «Տիրոջ խրատով և ուսումով» (Եփես. Զ 4): Մի՛ կարծիր, թե նրա համար ավելորդ բան է Սուրբ Գիրք լսելը. քանզի նա նախ և առաջ այնտեղից է լսելու. «Պատվի՛ր քո հորն ու մորը»: Հետեւաբար սա հենց քեզ օգտակար կլինի: Մի՛ ասա. «Այդ վանականների գործն է. մի՞ թե ես իմ որդուն վանական պիտի դարձնեմ»: Նրան վանական դարձնելու կարիք չկա, սակայն ինչո՞ւ ես վախենում այն բանից, ինչը նրա համար այնքան օգտակար է: Որպես քրիստոնյա՛ դաստիարակիր նրան:

Աշխարհականներին հատկապես անհրաժեշտ է իմանալ Սուրբ Գրքի վարդապետությունը և առավելապես՝ երեխաններին, քանզի այդ տարիքին է հատուկ ծայրահեղ անխոհեմությունը: Ամոթ չէ՞ արդյոք երեխաններին ուղարկել արվեստներ ու գիտություն սովորե-

լու և չհոգալ «Տիրոջ խրատով և ուսումով» նրանց կրթելու մասին։ Այդ իսկ պատճառով մենք առաջինն ենք ճաշակում նմանօրինակ դաստիարակության պտուղները, քանզի երեխաներին դաստիարակում ենք հանդուգն, անժուժկալ, անհնազանդ ու ստոր։ Չանե՛նք այդ բանը, այլ անսանք երանելի Պողոսի հորդորին, օրինակ ծառայենք՝ մանուկ հասակից նրանց ստիպելով ընթերցել Ս. Գիրքը։

Ոչ ոք թող չասի ինձ, թե մենք երեխաներին Աստծու խոսքով զբաղեցնելու կարիքը չունենք։ Ոչ միայն պետք է զբաղեցնել, այլև՝ միմիայն այդ մասին հոգալ։ Սակայն ձեր տկարությունների պատճառով է, որ չեմ պնդում այդ. բնավետ չեմ պահում նրանց այլ զբաղմունքներից, ինչպես նաև ձեզ՝ հասարակական գործերից։ Հստ իս՝ միանգամայն արդարացի է յոթ օրերից մեկը բոլորիս Տիրոջը նվիրել։ Քանզի որքա՛ն անհարիր է ծառաներից պահանջել, որ զօր ու գիշեր ծառայեն մեզ, իսկ մեզ կարճ ժամանակ իսկ Տիրոջը չտրամադրել։ Ընդ որում, մեր ծառայությունը նրան ոչինչ չի տալիս, քանզի Աստված ոչ մի բանի կարիք չունի, այլ հենց մեր օգտի համար է։ Զեր երեխաներին հանդեսների տանելիս գիտությունն ու որևէ այլ բան խոչընդոտ չեք համարում։ Իսկ հոգեոր օգուտ

ստանալուց խորշում եք՝ այն սին անվանելով։
Ել ինչպես չզայրացնեք Աստծուն, երբ ամեն
ինչ սովորեցնում եք երեխաներին՝ այդ բաների
համար ժամանակ գտնելով, իսկ նրանց՝ Աստ-
ծուն նվիրելու գործը նկատում եք վաղաժամ
ու դժվարին։ Ո՞չ, այդպես չէ, եղբայրնե՛ր։ Հենց
այս տարիքն է, որ առավելապես նմանօրինակ
հորդորների կարիքն ունի։

Հասակը մատաղ է. փութով յուրացնում է
այն, ինչ ասում են իրեն, և ինչպես կնիքն է
դրոշմվում մեղրամոմի վրա, այնպես էլ երեխա-
ների հոգում՝ այն, ինչ լսում են։ Ընդ որում,
նրանց կյանքը հենց այդ ժամանակից արդեն
սկսում է հակվել կամ արատին, կամ առաքի-
նությանը։ Ուստի, եթե սկզբից ևեթ, այսպես
ասած, սեմից հեռացնենք նրանց արատից և
առաջնորդենք ուղիղ ճանապարհ, ապա հե-
տագայում դա արդեն նրանց սովորությունը
և ասես էությունը կդառնա։ Այլևս այնքան էլ
քմահաճորեն չեն շեղվի դեպի վատը, քանզի
սովորությունը կմղի բարի գործերի։ Այդժամ
նրանք ծերերից առավել հարգարժան կլինեն և
քաղաքացիական գործերի համար՝ պիտանի՝
պատանեկան հասակից դրսեորելով մեծահա-
սակների հատկություններ։ Քանզի անհնար է,
ինչպես առաջ էլ ասել եմ, որ Ա. Գրքի խոսքերը

ունկնդրելուց բավականություն ստացողներն ու նրա վարդապետությունն ըմբռնողները հեռանան այստեղից առանց որևէիցե իրական, մեծ բարիք ստանալու՝ դրանց հաղորդակցվողը լինի այր, կին թե պատանի:

Եթե մենք, մեր խոսքերին վարժեցնելով, ընտելացնում ենք գազաններին, ապա մի՞թե այս հոգեոր վարդապետությամբ ավելիով չենք կարողանա ուղղել մարդկանց, մանավանդ որ մեծ տարբերություն կա այստեղի ու այնտեղի, բժշկությունների ու բժշկվողների միջև։ Մեր միջի վայրենությունն էլ այնպիսին չէ, ինչպես գազաններինը. Նրանցը ըստ բնության է, իսկ մերը՝ ըստ քմահաճության։ Խոսքերի զորությունն էլ տարբեր է. այնտեղ այն բխում է մարդու մտքից, իսկ այստեղ՝ Հոգու զորությունից ու շնորհից։ Այսպիսով, ով անձնատուր է լինում հուսահատությանը, թող խորհի գազաններին վարժեցնելու մասին և այլևս չի հուսահատովի։

Թող հանապազ այցելի այս հիվանդանոցը, թող հանապազ լսի Հոգու օրենքները և, վերադառնալով տուն, մտապահի լսածը։ Այսպիսով նա բարի հույսի ու խաղաղության մեջ կհաստատվի՝ սեփական փորձով զգալով հաջողությունը։ Իսկ սատանան հենց որ տեսնի, որ

մարդու հոգում Աստծու օրենքն է գրված, իսկ
սիրտը վերածվել է այդ օրենքի քարե տախ-
տակների, այլևս չի մոտենա նրան: Քանզի, ուր
երկնային գրերը դրոշմված են ոչ թե պղնձե
սյան վրա, այլ Սուրբ Հոգով՝ աստվածասեր
սրտերում և ճաճանչում են Նրա շնորհներով,
այնտեղ նա նույնիսկ հայացք նետել չի կարող
և հեռու կփախչի: Սատանայի և նրա ներշնչած
խորհուրդների համար ավելի սարսափելի բան
չկա, քան աստվածային ճշմարտություններով
կլանված միտքը և միշտ այդ աղբյուրին կառ-
չած հոգին: Աշխարհում ոչինչ ի զորու չէ այս-
պիսի հոգուն սասանել, թեկուզ տհաճություն
պատահի, ոչ էլ կհպարտացնի ու կպանծացնի
նրան հաջողությունը, այլ փոթորիկների ու
խռովքի մեջ էլ խաղաղություն կվայելի: Եվ իս-
կապես էլ, մեր խռովահուզության պատճառը
դրսում չէ, այլ՝ մեր հոգու տկարություննե-
րում: Եթե մեր հոգու տառապանքը պայմանա-
վորվեր հանգամանքներով, ապա բոլոր մարդիկ
էլ պարտադիր կճաշակեին այդ բանը: Քանզի
բոլորս էլ նավարկում ենք միենույն ծովով, հըն-
թացս որի անհնար է խույս տալ ալիքներից ու
փոթորիկներից: Եվ եթե կան այնպիսիք, ովքեր
չեն ենթարկվում ալեկոծության ու փոթորիկ-
ների, ապա ակներև է, որ փոթորիկն առաջաց-

նում է ոչ թե այս կամ այն հանգամանքը, այլ մեր հոգու վիճակը։ Հետևաբար, եթե մենք մեր հոգին տրամադրենք այնպես, որ դյուրությամբ տանի ամեն ինչ, ապա մեզ համար ո՛չ փոթորիկ կլինի, ո՛չ էլ խորտակում, այլ միշտ բարենպաստ անդորր կլինի (ս. Հովհաննես Ոսկեբերան)։

Հնում բարեպաշտ քրիստոնեական ընտանիքներում երեխաներն¹ իրենց մտավոր կրթությունը սկսում էին Ս. Գրքի ուսումնասիրությունից։ Այսպիսով, նրանց մտավոր կրթությունն ընթանում էր բարոյականի հետ միասին, ինչն իմաստնացնում էր նրանց մանկական ըմբռնումները, խրատում նրանց մատաղ սրտերը, և, բնականաբար, սերը Գրքի նկատմամբ խոր արմատներ պիտի արձակեր նրանց հոգում։

¹ Որոգինեսի հայրը ամեն օր Ս. Գիրքը կարդալ և պատմել էր տալիս իր որդուն, որն առանձնակի սեր էր ցուցաբերում այդ պարապմունքների նկատմամբ և իր աստվածաբանական հարցերով զարմացնում հորը։ Նրա հայրը վկայում էր, որ հաճախ էր գիշերը գաղտնի համրուում իր որդու կուրծքը՝ իբրև «Սուրբ Յոգու տաճար»։ Մանկուց Ս. Գիրքը սերտում էին և Գրիգոր Աստվածաբանը, ս. Յովհան Ոսկեբերանը, ս. Մակրինան և այլք։

Յերօնիմոս Երանելին այսպիսի խորհուրդ է տալիս այրի Լիդիային նրա դատեր դաստիարակության առնչությամբ. «Թող ամեն օր քեզ հետ միասին մի քանի թերթ ընթերցի Ավետարանից և առաքելական թրեթրից։ Այսպիսով թող ամեն առավոտ քեզ ասես մի ծաղկեփունջ մատուցի՝ սրբազն Գրքերից քաղված։ Թող այդ լինի նրա ամենագլխավոր հոգսը, ամենասովորական գործը...»։

Նմանօրինակ դաստիարակություն էին որդեգրել նեռկեսարյան այն սուրբ ընտանիքում, որից սերում էր տիեզերական մեծ վարդապետ ս. Բարսեղը։ Մայրը Բարսեղի քույր Մակրինային դաստիարակելիս սերտել էր տալիս այն գրքերը, որոնք հասկանալի էին աղջկան (հատկապես՝ Սողոմոնի հմաստությունը)։ Իսկ այդ գրքերից՝ հատկապես այն, ինչն առաջնորդում էր առաքինի կյանքի։ Մակրինան սաղմոսները գիտեր այնպես, որ գրանք իր բոլոր գործերում, որպես բարի ընկեր, ուղեկցում էին նրան։ Մայրն արգելում էր դստերը կարդալ հեթանոսական ողբերգություններում ու կատակերգություններում հանդիպող կրքերի նկարագրությունները։ Հետագայում Մակրինան նույն ոգով դաստիարակեց իր եղբայր Պետրոսին։ Այդպես դաստիարակվեց նաև Բարսեղ Մեծը. «Աստծու ողորմությամբ ու մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհով,՝ ասում է նա,՝ դաստիարակվել եմ քրիստոնյա ծնողների կողմից՝ վաղ մանկությունից նրանցից սովորելով Սուրբ Գիրքը, որը և առաջնորդում էր ինձ դեպի ճշմարտության ճանաչողությունը»¹։

Հրեաների հին սովորությունն էր (որ պահպում են ցայսօր) իրենց երեխաներին նախ-

¹ Նույն տեղում, էջ 15:

քան արհեստներ սովորեցնելը դաստիարակել
աստվածային Գրքերի ուսուցմամբ։ Սա կա-
րևոր խրատ է բոլոր ծնողներին, որ անձամբ
կամ այլոց միջոցով հոգան նախկին բարվոք
դաստիարակությամբ որդիներին Սուրբ Գրքին
վարժեցնելու մասին, որը նրանց կյանքի բար-
եպաշտության հիմքն է (Գաբրիել Վարդապետ
Ավետիքյան)։



ՄԱՍ ՎԵՑԵՐՈՐԴ

Ա. ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԼ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ Է

Քանեցեք Գրքերը, քամի որ կարծում եք, թե մրանցով
հավիտենական լյանք կունենաք: Բայց այդ Գրքերն իսկ
վկայում են իմ մասին:

(Հովի. Ե 39)

Աստվածաշունչը ստվարածավալ գիրք է՝
կազմված շուրջ մեկուկես հազարամյակի ըն-
թագքում շուրջ քառասուն հեղինակների՝
մարդարեների ու առաքյալների ձեռամբ, տար-
բեր լեզուներով (հիմնականում՝ եբրայերեն և
հունարեն, մասսամբ էլ՝ արամերեն) և զանազան
գրական ժանրերով: Բայց և այնպես, Սուրբ
Գիրքը մեր առջև հառնում է որպես կուռ, բո-
վանդակությամբ անխորտակելի, միասնական
ամբողջություն՝ գրված Սուրբ Հոգու անմիջա-
կան ներշնչանքով:

Ո՞րն է կամ, ավելի ճիշտ, ո՞վ է այս միաս-
նության առանցքը: Մեր Տեր Հիսուս Քրիս-
տոսը: Առանց այս ճշմարիտ քրիստոնեական
աշխարհայացքի ըմբռնման սրբազան պատ-

մության կարևորագույն իրադարձություններն ու իրողությունները դժվար հասկանալի, նույնիսկ անըմբունելի են՝ սահմանափակված տեղի և ժամանակի մեջ, մինչդեռ նրանք տիեզերական, համամարդկային նշանակություն ունեն և բոլոր ժամանակների ու սերունդների համար են:

Ա. Գիրքը կազմված է երկու մասից՝ Հին և Նոր Կտակարաններից (Հին Կտակարան՝ 48 գիրք, Նոր Կտակարան՝ 27 գիրք), որոնց բաժանումը պայմանավորված է Հիսուս Քրիստոսի նկատմամբ դիրքորոշումով։ Հին Կտակարանում նա ներկա է որպես խոստացյալ Փրկիչ, Ում գալուստն ապագայում է կատարվելու, և դա կանխանշված է հատուկ մարդարեություններում, նախօրինակներում ու խորհրդանիշերում, իսկ Նոր Կտակարանում Հիսուսն իրականացնում է մարդու փրկությունը։

Ինքը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսը, բազմիցս հաստատում է այս իրողությունը. «Քննեցե՛ք Գրքերը, քանի որ կարծում եք, թե Արանցով հավիտեական կյանք կունենաք։ Բայց այդ Գրքերն իսկ վկայում են իմ մասին» (Հովհ. Ե 39), և «Սկսած Մովսեսից ու բոլոր մարդարեներից՝ մեկնում էր Արանց այն բոլորը, ինչ գրված էր իր մասին բոլոր Գրքերում» (Ղուկ. Ի Դ 27, տե՛ս մասն Հովհ. Ե 46, Ղուկ. Ի Դ 44):

Նոր Կտակարանում չկա Փրկչի կյանքի, առաքելության, չարչարանքների ու մահվան վերաբերյալ մի փաստ, անդամ աննշան մանրամասնություն, որը Հին Կտակարանում նախանշված չլինի: Առողք Աթանաս Աղեքսանդրացին գրում է, որ Հին Կտակարանը շարադրված է միասնական Հոգով և շարադրված է Փրկչի մասին: Ընդ որում, մարդարեությունները ոչ միայն կանխասում, այլև հաճախ լրացնելով՝ լույս են սփոռում նորկտակարանյան այս կամ այն իրադարձության վրա, օրինակ՝ Եսայի մարդարեի ԾԳ գլուխը ոչ միայն պարզաբանում է Քրիստոսի չարչարանքների ու քավչարար մահվան խորհուրդը, այլև բացատրում է Հովհաննես Մկրտչի խոսքը. «Ահա Գառն Աստծո» (Հովհ. Ա. 29): Իսկ մարդարեությունների շղթան սկսվում է Աղամով. այդ իսկ պատճառով կոչվում է Նախապետարան և հասնում է մինչև Հովհաննես Մկրտչի հայրը՝ Զաքարիան:

Նույն է նաև խորհրդանիշերի, նախօրինակների պարագան: Նախօրինակ են կոչվում այն անձինք, պատմական իրադարձություններն ու առարկաները, որոնք, բացի իրենց ժամանակներում իրողություն լինելուց, խորհրդավորապես վերաբերում են ապագային և արտահայտում կամ կանխանշում են մեսիական որևէ

Հատկանիշ: Օրինակ՝ ինքը Քրիստոս նշում է անապատում Մովսեսի հրամանով բարձրացրած պղնձե օձի (Հովհ. Գ 14), Հովնանի՝ կետի փորում երեք օր ու գիշեր գտնվելու (Մատթ. ԺԲ 40) իր նախօրինակ լինելը: Քրիստոսի նախօրինակներն են Աղամը, Նոյը, Մելքիսեդեկը, Իսահակը, Մովսեսը, Ահարոնը, Հեսու Նավեն, Դավիթը, Սողոմոնը, ինչպես նաև քահանայապետները և այլք, մանանան, ամպի սյունը, Հինկտակարանյան զոհերը, տաճարը և այլն: Պողոս առաքյալը գրում է, որ Հին Կտակարանի բոլոր արարողություններն ու ողջ պաշտամունքը «գալիք բաների ստվերներն են. բուն մարմինը Քրիստոսն է» (Կող. Բ 17), կամ՝ «Արդարեւ, գալիք բարիքների ստվերն էր օրենքը և ոչ թե իրողությունների բուն կերպարանքը» (Երր. Ժ 1), և որ այս ամենը «որպես խրատ գրվեց մեզ Համար» (Ա Կորնթ. Ժ 11), և այլն:

Մատթեոսի (Ա 1-16) և Ղուկասի (Գ 23-38) Ավետարանների Հիսուսի ազգաբանությունները ոչ այլ ինչ են, քան բովանդակ հինկտակարանյան պատմության համառոտագրություն:

Սա է Սուրբ Գրքի ուղղափառ ընթերցանության և մեկնության մյուս կարևորագույն պայմանը:

Բ. Ս. ԳԻՐՔՆ ԸՆԴՀԱՌՈՒԹ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՅՔԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ ԸՆԹԵՐՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հինկտակարանյան և նորկտակարանյան եկեղեցու կյանքի առանձին փաստերի իմացությունը բավարար չէ կուռ աշխարհայացք կազմելու համար։ Առանց իր ամբողջության մեջ քրիստոնեական աշխարհայացքի հստակ ըմբռնման, սրբագան պատմության ամենանշանակալից փաստերն իսկ կորցնում են իրենց անանց կենսական նշանակությունը։

Իրապես, եթե չհասկանալով քրիստոնեական աշխարհայացքը՝ ես չգիտեմ մարդու երկրային կյանքի իմաստը, աստվածային հայտնության ճշմարիտ նշանակությունը մարդկության համար, չեմ հասկանում Աստծու Որդու մարդեղացման փրկարանական իմաստը, ի՞նչ անանց կենսական նշանակություն կունենա ինձ համար հավատը առանձին փաստերի, օրինակ՝ ջրհեղեղի, եղիպտոսի հարվածների, Դավիթ թագավորի հանցագործության, կույս Մարիամից Փրկչի ծնունդի, մեր Տեր Հիսուս Քրիստոսի հրաշքների, հարության ու երկինք համբարձվելու և այլնի նկատմամբ։

Միայն Աստծու փրկագործության, մարդու

Երկրավոր կյանքի իմաստի և մարդկության համար աստվածային հայտնության հստակ ըմբռնումը կարող են հասկանալի դարձնել այս բոլոր փաստերի ճշմարիտ, անանց նշանակությունը։ Կարող են հնարավորություն ընձեռել խոհեմ վերաբերմունք ունենալու իմ և այլոց մեջ բնակվող չարի և բարու հանդեպ, գիտակցաբար համաձայնեցնելու կյանքը այս փաստերի նկատմամբ հավատի հետ։

Ընդհանուր քրիստոնեական աշխարհայցքն ամենեին չհասկացող կամ նրա մասին խիստ որոշակի պատկերացում չունեցող մարդու համար նույնիսկ կոթողային աստվածաբանական-դավանաբանական գրականության ընթերցանությունն է անպտուղ և վտանգավոր։ Միշտ վտանգ կա, որ նա կեղծ ու չափազանցված պատկերացում կկազմի այն հարցի մասին, որը պատահականորեն գիտե։ Նա հազիվ թե կարողանա այդ հարցն ընդհանուր հայտարարի բերել մյուս բազմաթիվ հարցադրումների հետ, որոնց գերն ու նշանակությունը բնավ չի հասկանում։ Եվ որքան շատ կարդա առանձին դատողություններ, այնքան ավելի նրա միտքը կիսճողվի բացարձակապես իրար չշաղկապված աստվածաբանական գիտելիքների բավիղներում։

Այդպիսի մեկը, բախվելով գիտական անհեթեթ հեքիաթիկներից ամենաանհեթեթի վրա հիմնված աշխարհայացքի հետևորդի հետ, կամ իրեն սթափ գնահատելու առաջին իսկ պահին դյուրությամբ կսասանվի, եթե արիություն չունենա խոնարհաբար խոստովանելու իր ամութալի տգիտությունը քրիստոնեական աշխարհայացքի ըմբռնման հարցում՝ անկախ աստվածաբանական առանձին հարցերի մասին իր գիտելիքներից:

Հոգեոր կյանքի մասին ճիշտ պատկերացում կազմելու և Սուրբ Գիրքն ուղղափառորեն հասկանալու համար անհրաժեշտ է կարդալ ուղղափառ Եկեղեցու սուրբ հայրերի երկասիրությունները, որոնց աղբյուրն ու հիմքը Սուրբ Գիրքն է, որը և նրանք մեկնում են: Քանզի այդ գրավոր հոգեոր ժառանգության հեղինակները՝ սուրբ և աստվածաշնորհ հայրերը, ներշնչվել են նույն Սուրբ Հոգուց, Ով ներգործում էր մարգարեների և առաքյալների վրա, որոնց ձեռքով էլ մարդկությանը շնորհվեց աստվածային Հայտնությունը՝ Սուրբ Գիրքը¹:

¹ Անդ, էջ 5, 6:

Գ. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թե ով, երբ և ինչ առիթով է հայտնել Աստծու այս կամ այն խոսքը, հավատացյալի համար էական չէ: Աստվածային ճշմարտությունը ճանաչելու համար դա չէ կարևորը: Հավատացյալի համար երբ, ինչ առիթով, ում միջոցով էլ որ երկրին հասած լինի աստվածային այս կամ այն ճառագայթը, բովանդակ Հայտնությունը Սուրբ Հոգուց է տրված: Եվ բխած լինելով անայլայլելի Աստծուց, Ում մեջ չկա «փոփոխման ստվեր»՝ այն չի կարող չունենալ համընդհանուր և հավիտենական նշանակություն՝ որպես կենդանի Աստծու անխախտելի կամք, աստվածային անփոփոխելի ճշմարտության երկրային արտացոլում:

Պատմական իրադարձությունները քրիստոնեական աշխարհայացքի համար ինքնին երկրորդական նշանակություն ունեն. առավել կարևորը նրանց ներքին, անանց իմաստն է, որը կարող է չնկատվել առաջին պլան մղված պատմական իրադարձությունների մեջ¹:

¹ Օրինակ՝ ջրհեղեղի պատմությունը նախ և առաջ մեղքի, դատատանի, փրկության և նոր կյանքի մասին է, մինչդեռ տապանի չափսերը, կենդանիների քանակը, ջրհեղեղի տևողությունը և այլն երկրորդական հարցերից են:

Այս պատմական հետազոտությունների մեծ մասն ի զորու է բավարարել ոչ թե գիտակ-ցության խոհեմ պահանջները, այլ ավելի շուտ՝ աննպատակ հետաքրքրասիրությունը։ Մեղսա-լից մարդկության կամքին այնքան հատուկ են թեթևամիտ հնարքները, որ յուրաքանչյուր նոր պատմական մանրամասնություն պատե-հություն է ընձեռում աստվածային հայտ-նության գանձը վերածել ոչ պիտանի պատմա-կան մի տեղեկատուի։

Հարկ է հստակ հասկանալ, որ Կենաց Գիր-քը Աստծու խոսքն է, որն ունի ոչ թե տեղա-յին և ժամանակավոր, այլ համամարդկային և հավիտենական նշանակություն, և որ այս հա-մամարդկայինն ու հավիտենականը հատուկ են աստվածաշնչյան յուրաքանչյուր անձի և Հայտնության ամեն մի խոսքի։

«Ավետարանը,՝ գրում է մի հեղինակ,՝ վա-ղուց տեղի ունեցած և պատմության գիրկն ան-ցած իրադարձությունների արձանագրություն չէ. այն միշտ արդիական է, այն հավերժ է, ինչ-պես նրանում ամփոփված ճշմարտությունները, որոնք անդադրում իրականանում են մարդ-կանց կյանքում սերնդեսերունդ»։

Աստվածաշունչ Մատյանի ներքին իմաստի հենց այս ընկալումն է, որ պատմական մանրա-

մասնությունների պատճառով խաթարվում է շատերի համար՝ շեղելով ուշադրությունը հավիտենականից դեպի ժամանակավորն ու անցողիկը:

Ահա թե ինչու է հնարավոր մեզ բոլորիս ծանոթ ցավալի երևույթը, երբ աստվածաբանությանն ու եկեղեցու պատմությանը քաջատեղյակ մարդիկ ի զորու չեն քրիստոնեաբար մտածել և զգալ¹:

Դ. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԳՐՔԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՏԶԵԼԻՈՒԹՅԱՆ

Աստվածաշնչյան բոլոր գրքերն էլ, թեպետ կուռ ամբողջություն են կազմում, սակայն տարբեր են թե՛ իրենց կարևորությամբ և թե՛ մատչելիությամբ, ինչն ինքնին ենթադրում է ընթերցանության՝ սրբազան գրքերի ընդհանուր ցանկից զանազանվող հերթականություն և առանձին գրքերի առավել խոր քննություն և սերտողություն:

Ա. Գրքի երկու անքակտելի մասերից առավելագույն հարգը նոր կտակարանինն է՝ իբրև

¹ Անդ, էջ 4-5:

Հնի լրումի¹: Իսկ նոր-կտակարանյան 27 գրքերի շարքում, բնականաբար, կարե-վորագույնները չորս Ավետարաններն են, որոնք նկարագրում են մեր Տեր Հիսուս Քրիստոսի կյանքը, առաքելությունը և քավչարար մահը, և շարադրում Նրա խոսքերն ու վարդապետությունը. «Աստված բազմապիսի ձևերով և այլազան օրինակներով նախապես խոսեց մեր հայրերի հետ մարգարեմերի միջոցով. այս վերջին օրերին մեզ հետ խոսեց իր Որդու միջոցով, Ում ժառանգ նշանակեց ամեն ինչի և Ում միջոցով ստեղծեց տիեզերքը» (Երր. Ա, 1, 2):

Իրենց կարեորությամբ Ավետարաններին հաջորդում են Գործք առաքելոցն ու առաքելական թղթերը:

Ավետարանների այս գերակա հարգն իր արտահայտությունն է գտել նաև Եկեղեցու ընդհանրական աստվածապաշտության մեջ: Սրբազն գրքերից միայն Ավետարանն է դրվում խորանում՝ սուրբ սեղանի վրա: Այն մատուցվում է հոգևորականներին ու հավատացյալներին՝ համբուրելու համար: Քահանան, իբրև մեծարանքի նշան, Ավետարանը բռնում է դաստառակով՝ թաշկինակով: Ավետարանական ընթերցվածքներն ընդգրկված են Մաշտոցի մեջ՝ իբրև հիվանդների բժշկության կանոն, և այլն:

¹Տե՛ս «Աստվածաշունչը Յիսուս Քրիստոսի մասին է» գլուխը:

Հինկտակարանյան գրքերից քրիստոնյաների համար ամենակարևորը Սաղմոսարանն է, որը լայնորեն կիրառվում է ընդհանրական և առանձնական աստվածպաշտության մեջ։ Սաղմոսները հոգեոր երգեր են, որոնք իրենց փառաբանական, գոհաբանական, պաղատական և ապաշխարական բնույթով նույնական են աղոթքների հետ, բայց այն առանձնահատկությունն ու տարբերությունն ունեն վերջիններից, որ հինկտակարանյան բովանդակ օրենսդրական, պատմական, իմաստության և մարգարեական գրքերի կատարյալ խտացումն են։

Նորկտակարանյան գրքերի և Սաղմոսարանի գերը առանձնական աստվածպաշտության մեջ մեծ է և կարևորվել է Եկեղեցու հայրերի կողմից։ Նշենք, որ նոր Կտակարանի գրքերի և սաղմոսների քաջ իմացությունն ու անգիր իմանալը պարտադիր է եղել միջնադարյան վանքերում։

Սակայն նորկտակարանյան գրքերի առանձնահատուկ գերն ու կարևորությունը չի նսեմացնում հինկտակարանյան մյուս գրքերի արժեքը, այլ միայն աստիճանակարգում է։ Հենց Հին Կտակարանի գրքերը նկատի ունի Պողոս առաքյալը, երբ ասում է. «Աստծու շնչով գրված ամեն գիրք օգտակար է ուսուցման, հանդիմանության,

ուղղելու և արդարության մեջ խրատելու համար, որպեսզի կատարյալ լիմի Աստծու մարդը և պատրաստ՝ բոլոր բարի գործերի համար» (Բ 8իմ. Գ 16-17)¹:

Սակայն Հինկտակարանյան գրքերի ընտրությունը մանավանդ սկսնակներից զգուշություն է պահանջում:

Այսպես, ըստ Որոգինեսի վկայության՝ Իսրայելում մինչև 30 տարին բոլորելը արգելված էր կարդալ Աստվածաշնչի սկիզբը, եզեկիելի մարգարենության սկիզբն ու վերջը և Երգ Երգոցը: Ա. Աթանաս Աղեքսանդրացին Երգ Երգոցի համար մասնավորապես ասում է. «Նրա մեջ ամեն ինչ սկզբից մինչև վերջ գրված է խորհրդաբար, առեղծվածային այլաբանությամբ. Նրա մեջ ամփոփված դավանական իմաստները ոչ թե տառի մեջ են, այլ խորապես ծածկված են նրա տակ... Ահա թե ինչու միայն կատարյալները կարող են կարդալ այս գիրքը, սակայն նրանք էլ կարդալիս պետք է նկատի ունենան այլաբանությունը, որպեսզի անիմաստների տգիտությամբ չծաղրվի նրա մեջ շարադրվածը»²:

Բանն այն է, որ այս գիրքը այլաբանորեն պատմում է Փեսայի՝ Հիսուս Քրիստոսի և Հար-

¹ Պողոս առաքյալի սույն տողերի գրության ժամանակ Նոր Կտակարանը դեռևս կազմված չէր:

² Երգ Երգոց՝ հանդերձ մեկնութեամբ նախնեաց, Երևան, «Գանձասար», 1993, էջ 9-10:

սի՝ Եկեղեցու՝ մեկմեկու նկատմամբ կատարյալ սիրո մասին, և այս սերը նկարագրված է իբրև աղջկա սեր իր սիրեցյալի նկատմամբ, ինչը կարող է գայթակղել շատերին:

Սիրաքի գիրքը միշտ օգտակար է համարվել պատանիների համար: Այս բանն, ի դեպ, վավերացվել է առաքելական ԶԵ կանոնով և ավելի ուշ՝ Սիրոն կաթողիկոսի օրոք՝ 768 թ. գումարված Պարտավի ժողովի կողմից, որն իր ԻԴ կանոնում այդ գիրքը շահեկան է համարում հատկապես պատանիների համար. «Առ յուսուցանելոյ զձեր մանկունս զուսումն բազմամասն»¹:

Հինկտակարանյան գրքերի մատչելիությունն ըստ տարիքի և հոգեոր հասունության փաստվում է նաև ս. Գր. Տաթևացու կողմից. «Պետք է իմանալ նաև, որ Սողոմոնի երեք գրքերը խրատ են մարդու երեք հասակի համար. Առակները՝ պատանիներին, ժողովողը՝ երիտասարդներին, իսկ երգ երգոցը՝ ծերունիներին: Առակները սովորեցնում են մեզ բարոյական առաքինությունները, ժողովողը՝ ստացականները, և երգ երգոցը՝ աստվածայինները: Առակները արտաքին սրահն են, մյուսը՝ սրբությունը, և երգ երգոցը՝ սրբություն սրբությունը»:

¹ Կանոնագիրը Հայոց, Բ, Երևան, 1974, էջ 18:

ցը: Առակներով գալիս ենք հավատի իմաստությանը, աշխարհի ունայնությամբ (այսինքն՝ ժողովողի գրքով)` երկնավոր հույսին, և Երդ երգոցով՝ Աստծու անախտ սիրուն, որը լրացնում է ամեն ինչ»¹:

Նշենք նաև, որ Հին Կտակարանում, ի թիվս Աստվածաշունչ Գրքերի, ընդգրկված են Երկրորդականոն կոչվող գրքերը, որոնց հեղինակները աստվածաշնորհ մարդարեները չեն: Այս գրքերը, որոնցում կան դժվար ըմբռնելի հատվածներ, կամ էլ ամբողջովին բացակայում է հոգեոր բովանդակությունը, այդուհանդերձ ընդգրկվել են Ս. Գրքի ցանկի մեջ՝ իբրև հավատի շինության համար օգտակար: Աստվածաշնչի արդի արևելահայերեն թարգմանության մեջ զետեղված են ինը երկրորդականոն գրքեր՝ Անգրաս, Հուդիթ, Տոբիթ, Մակաբայեցիների Ա, Բ, Գ, Իմաստություն Սողոմոնի, Սիրաք և Բարուք: Երկրորդականոն գրքերի թիվը տարբեր Եկեղեցիներում տարբեր է:

Ժամանակ առ ժամանակ առանձին գրքերով կամ ամսագրերում լույս են տեսնում պարականոն (ապոկրիֆ) անվանվող գրքերը: Բանն այն է, որ անցյալում այդ գրքերի հեղինակները, հետապնդելով ինչ-ինչ նպատակներ կամ

¹ Ս. Գր. Տաթևացի, Սոլոմոնի առակների մեկնությունը, Երևան, «Անկյունաքար», 2000, էջ 17:

փորձելով տարածել իրենց կեղծ ուսմունքներն ու կարծիքները, նենդաբար իրենց գրվածքներին տվել են սուրբգրային խորագրեր և տեսք: Քրիստոնեության առաջին դարերում ի հայտ եկան մի շարք պարականոն գրքեր, ինչպես՝ «Հակոբի Նախավետարանը», «Թովմասի Ավետարանը», «Պողոս առաքյալի Հայտնությունը» և այլն, որոնք կազմված էին երիոնության և գնոստիցիզմի ուսմունքների համաձայն: Կան նաև հինկտակարանյան պարականոն գրքեր, ինչպես՝ «Վերացումն Մուսիսի», «Եղիայի ծածուքն», «Ելդադ և Մովդադն» և այլն: Այս գրքերը մերժվում են եկեղեցու կողմից և համարվում են վտանգավոր ու վնասակար:

Ե. ԱՍՏՎԱԾԱՇԽԻ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՃԱՇՈՅ ԳՐՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում հաստատված կարգով ամեն օր ժամերգությունների, տոնական և կիրակի օրերին մատուցվող ս. պատարագի ընթացքում դպիրը, սարկավագը և քահանան Ս. Գրքից հատվածներ՝ ընթերցվածքներ են կարդում: Սուրբգրա-

յին հատվածներ ընթերցելու կարգը սկզբնաւորվել է իսրայելում հնագույն ժամանակներից։ Հիսուս իր առաքելության ընթացքում ժողովարանում ներկաների համար կարդաց և մեկնեց Ա. Գրքից մի հատված (տե՛ս Ղուկ. Դ 16-21):

Քրիստոնեության տարածումից հետո սուրբգրային ընթերցումները Եկեղեցու ընդհանրական աստվածպաշտության անքակտելի մասը դարձան, ինչը ժողովրդին «վարդապետությամբ խրատելու և բարին հորդորելու համար է, նաև՝ նախագուշակ և վկա Տիրոջ տնօրինության»¹։ Առաքելական Ը կանոնում կարդում ենք. «Առաքյալները կարգեցին և հաստատեցին, որ Եկեղեցում ընթերցվեն Գրքերը. Հին Կտակարանը՝ Օրենքը և Մարդարեները, և Նոր Կտակարանը (որոնք լինեն մեր Փրկչի չարչարանքների մասին), ավետարանիչների գործն ու խոսքը ճշմարիտ Բանի և Փրկչի աշակերտների վարդապետության մասին։ Սրանից ավելին թող չընթերցվի բեմից»։

Սուրբգրային այս ընթերցվածքները նախկինում կարդացվում էին Ճաշու ժամերգության ընթացքում, այդ պատճառով էլ ընթերցվածքների այս ժողովածուն կոչվեց Ճաշոց գիրք կամ պարզապես Ճաշոց։ Բացի Ճաշոցից, կազմվե-

¹ Հովհաննես Արծիշեցի, Մեկնություն պատարագի, 1999, էջ 47:

ցին նաև այլ գրքեր՝ Ատենի, Յուղաբերի, Ճաշու Ավետարաններ։ Ճաշոցի ընթերցվածքների հերթականությունը ներկայացված է հետեւյալ եռակարգությամբ՝ Հին Կտակարան, Առաքյալների թղթեր, ապա՝ Ավետարան։ Այս հերթականությունը խորհուրդ ունի։ Ա. Գր. Տաթևացին այսպես է մեկնում այդ կարգը. «Ասենք, որ մարգարեները, իբրև կանխասացներ, նախապես պատմեցին Բանի մարդեղության և մարդկանց փրկության մասին, իսկ առաքյալները, իբրև ականատեսներ, վկայեցին։ Իսկ կանխասելը նախորդում է վկայելուն։

Դարձյալ՝ մարգարեները՝ հեռվից, իսկ առաքյալները մոտիկից տեսան մարմնացած Բանին։ Այդ իսկ պատճառով փոխում ենք տեղերը՝ մարգարեներից կարդում ենք Եկեղեցու մեջ, իսկ առաքյալներից՝ բեմի մոտ։

Մարգարեները սերմանեցին, իսկ առաքյալները հնձեցին։ Մարգարեները կանխասեցին, իսկ առաքյալները կատարեցին։ Դարձյալ՝ նախ՝ օրինակը, ապա՝ ծմբարտությունն ենք սովորում այստեղ, ապա այնտեղ՝ անմիջականորեն Տիրողից, ինչպես որ ասվում է. «Եվ ամենքը Աստծոց ուսած կլիմեն» (Հովհ. Զ 45)»¹։

Այնուհետև Գր. Տաթևացին գրում է, որ

¹ Ա. Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, Երուսաղեմ, 1993, էջ 634:

միշտ կիրակի օրերին Եսայի մարդարեի գրքից է ընթերցվում, որովհետև մարդարեներից միայն նա աստվածաբան կոչվեց Քրիստոսի տնօրինությունների մասին մյուսներից առավել խոսելու պատճառով։ Այդպես է նաև Պողոս առաքյալի պարագայում։ Քանի որ Հրեաների և հեթանոսների քարոզիչը պատմում է Փրկչի բոլոր տնօրինությունների մասին, ուստի «բոլոր տոներին, պահքի, ուտիքի, շաբաթ և կիրակի օրերին նրանից ենք կարդում»¹։

«Ավետարանի ընթերցանությունը,՝ գրում է Հովհ. Արծիշեցին,՝ սովորեցնում է, թե որքան առատ և անչափ է Հոր սերը մարդկանց հանդեպ, քանզի տվեց ոչ միայն խաղաղություն, այլև իր Միածնին՝ պես-պես տնօրինություններով հանդերձ, որոնք են մարդեղությունը, վարդապետության խոսքերը, սքանչելի գործերը և այս բոլորից առավել՝ խաչելությունը, թաղումը և հարությունը։ Այս բոլոր երախտիքներն է պատմում Ավետարանը, որոնք լսելով՝ ամբողջ ժողովուրդը հիանալով փառք է տալիս Աստծուն՝ ասելով. «Փա՛ռք Քեզ, Տե՛ր Աստված մեր»։»

Ճաշոց գիրքը սկսվում է զատկական ընթերցումներով և ներառում ամբողջ Նոր Կտա-

¹ Անդ, էջ 644։

կարանը (բացառությամբ Հայտնության գրքի¹) և մասամբ՝ Հին Կտակարանը:

Բացի սուրբգրային այս հատվածները Եկեղեցում ունկնդրելուց, հավատացյալներին խորհուրդ է տրվում ընթերցել դրանք տանը: Այդ նպատակով «Տօնք, պահք և ընթերցուածք Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ» օրացույցում նշված են յուրաքանչյուր օրվա ընթերցվածքները:

Ընթերցանության այս շահեկան եղանակը ոչ միայն պատեհություն է ընձեռում խորունկ և ուղղափառ ձեռվ հասկանալ Ս. Գիրքն իր Հին և Նոր Կտակարանների միասնության մեջ, այլև տեսնելու նրա առնչությունը Եկեղեցու աստվածպաշտական տարեկան շրջանի յուրաքանչյուր օրվա հետ: Այսպես, ո. Հովհաննես Մկրտչի ծննդյան տոնին իր խորհրդով համահունչ են այդ օրվա ընթերցվածքները՝ Առակ. Ը 4-11, Մաղաք. Դ 5-7, Եսայի Խ 3-5, Գործք Ժ 25-33, Ղուկ. Ա 57-80: Իսկ Ավագ ուրբաթի թաղման կարգին համապատասխանող հատվածներն են՝ Երեմ. ԺԱ 18-ԺԲ 8, Եսայի ԾԲ 13-ԾԳ 53, Իմաստ. Բ 1-22, Զաքար. ԺԲ 8-14, Ա Պետ. Գ 17-20, Մատթ. ԻԵ 56-61:

¹ Հայտնության գիրքը Ընդհանրական Եկեղեցում Երկար ժամանակ չէր ընդգրկվում Նոր Կտակարանի մեջ: Հայերեն է թարգմանվել 12-րդ դարում Ներսես Լամբրոնացու կողմից:

Եպիսկոպոս Թեոֆանը այս կապակցությամբ գրում է. «Ամեն ոք չէ, որ կարող է անդիր անել Աստծու խոսքը, սակայն ամեն ոք կարող է կարդալ այն ամեն օր: Եկեղեցում ընթերցվում են կարճ հատվածներ կամ ընթերցվածքներ. տանը կարելի է ավելի շատ կարդալ: Հոգեշահն այն չէ, թե քանի էջ ես կարդում, այլ կարեռն այն է, որ կարդացվածը հոգու մեջ մտնի, սիրացարժի այնպես, որ ցանկանաս ավելի երկար մտապահել, նրանով քաղցրացնել սիրտը: Այդ պատճառով չպետք է փութով կարդալ: Ավելի լավ է հասկանաս և սրտով յուրացնես այն, ինչ սահմանված է ընթերցել Եկեղեցում: Ուստի լավ է նաև կարդալ կարգով հաստատված օրվա ընթերցվածքի մեկնությունը»:

Զ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, քրիստոնյաներն ի՞նչ տրամադրությամբ պիտի կարդան Աստծու խոսքը:

«Աստծու խոսքը,՝ գրում է մի հեղինակ,՝ մարդու խոսք չէ, հետեաբար չպետք է այն կարդալ այնպես, ինչպես սովորական գիրքն ենք կարդում: Աստծու խոսքում անթեղված է հրաշագործ «զորություն» ի փրկություն բոլոր հավատացյալների» (Հոռմ. Ա. 16):

Հետևաբար, եթե ցանկանում ես հոգեշահ կերպով կարդալ Աստծու խոսքը, ապա.

Ա. Ընթերցիր երկյուղածությամբ և աղոթքով: Ձեռնամուխ եղիր ընթերցանությանը՝ նախապես սիրտդ թոթափելով բոլոր կենցաղային հոգսերից, և ներքուստ աղերսիր Տեր Հիսուս Քիստոսին, որ բացի միտքդ Աստվածաշունչը հասկանալու համար:

Բ. Կարդացածը վերագրիր անձիդ այնպես, որ ասես այն հենց քեզ է վերաբերում. «Ի՞նչ որ ձեզ եմ ասում, ամենիցին եմ ասում»,- մի անգամ ասաց Տերն իր աշակերտներին (Մարկ. ԺԳ 37):

Գ. Կարդա առանց աճապարելու՝ ջանալով հասկանալ յուրաքանչյուր բառը: Եթե չհասկանաս որևէ խոսք, մտածիր, թե այն ինչ կարող էր նշանակել, և ներքուստ աղոթիր, որ Տերը հասկացնի քեզ. Եթե, այնուամենայնիվ, չհասկանաս, թո՛ղ և շարունակի՛ր ընթերցանությունը: Նշանակում է՝ դեռ չի եկել այդ խոսքը հասկանալու ժամանակը. կհասկանաս հետո:

Դ. Եթե հասկացել ես Աստծու խոսքի խրատը, ապա անմիջապես ջանա՛ կատարել այն՝ Տեր Հիսուսից խնդրելով օգնել քեզ այդ բանում, և կլինես «քո Տիրոջ հավատարին և երանելի ծառան» (Իմնոտ. Հովհ. ԺԳ 16, 17)¹:

¹ Как читать библию?, Москва, 1996, стр. 12

Գիրքն ընթերցելիս պետք է իմանալ հետեւյալը.

Ա. Զպետք է կարդանք բազում էջեր և թերթեր, որովհետեւ շատ ընթերցողն ի զորու չէ բուրը հասկանալու և մտապահելու:

Բ. Քիչ կարդանք և շատ խորհենք կարդացածի շուրջ, որովհետեւ այդպես ընթերցվածը ավելի լավ է հասկացվում և մտապահվում, և այսպես մեր միտքը լուսավորվում է:

Գ. Տեսնենք, թե կարդացածից ինչն է հասկանալի, ինչը՝ ոչ։ Երբ հասկանում ես կարդացածը, լավ է, իսկ երբ չես հասկանում, թո՛ղ և շարունակի՛ր ընթերցանությունը։ Անհասկանալին կա՛մ հաջորդ անգամ ընթերցելիս կպարզվի, կա՛մ էլ Աստծու օգնությամբ կրկնական ընթերցանության ժամանակ։

Դ. Ինչ որ սովորեցնում է Գիրքը՝ խույս տալու, փնտրելու և անելու, ջանա՛գործով կատարել։ Զարից փախի՛ր և բարի՛ն արա։

Ե. Եթե Գրքից միայն միտքդ հարստանա, իսկ կամքդ չուղղես, ապա ընթերցանությունից ավելի չար կդառնաս, քանի որ ուսյալ և խելացի հիմարները ավելի չար են լինում, քան հասարակ անուսները։

Զ. Հիշի՛ր, որ ավելի լավ է քրիստոնեաբար սիրել, քան շատ գիտենալ. լավ է աստ-

վածահաճո կյանքով ապրել, քան պերճաբանել.
«Գիտությունը հպարտացնում է, բայց սերը՝ հաստա-
տում» (Ա. Կորնթ. Հ 1):

Է. Ինչ որ ինքդ Աստծու օգնությամբ սո-
վորես, այն էլ հարմար առիթով սովորեցրու
ուրիշներին, որպեսզի ցանված սերմը աճի և
պտղաբերի (ս. Տիխոն Զաղոնակի):



ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՋԸ ԵՎ ՆԱՅԵՐԸ (համառոր ակնարկ)

Աստված, ողորմի՞ր մեզ և օրհնի՞ր,
ցու՞յց տոր երեսդ և գթա՞ մեզ,
որպեսզի երկրի վրա ճանաչեմ ճանապարհը Քո:
և բոլոր ազգերի մեջ՝ փրկությունը Քո:
Ժողովորդաները Քեզ գոհություն պիտի
մատուցեմ, Աստված,
գոհություն պիտի մատուցեմ Քեզ
բոլոր ժողովորդաները:

(Սաղմ. ԿԶ 1-4)

Հայոց եկեղեցական գլքերը՝ Կանոնագիրքն
ու Մաշտոցը, Հայսմավուրքն ու Վարք սրբոցը,
Հայրերի ու վարդապետների գրվածքներն ու
ճառերը և պատմիչների երկերն ու հիշատա-
կարանները այնքան հարուստ նյութ են տրա-
մադրում մեզ Սուրբ Գրքի ուսման և հայերի
կողմից առանձնահատուկ սիրով սիրված լինե-
լու մասին, որ բնավ հնարավորություն չունենք
այդ ամենը հիշատակելու մեր այս ակնարկում։
Փորձենք համառոտակի ցույց տալ աստվածա-
յին պատգամի իրականացումը և Սուրբ Գրքի

սերտողության ավանդությունը Հայոց երկրում։ Նշենք, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր հիմնադրման առաջին իսկ օրից իր առաքելության և ընդհանրական ու առանձնական աստվածպաշտության անկյունաքար է համարել Աստծու խոսքի քարոզության և այն լսելու, ընթերցելու, սերտելու անհրաժեշտությունը համայն ժողովրդի համար՝ իր բոլոր դասերով ու խավերով հանդերձ։

Հստ հայ մատենագրության առաջին ներկայացուցիչներից մեկի՝ Ագաթանգեղոսի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչը այսպես թագավորի և բոլոր աշակերտների հետ մեկտեղ ամբողջ ժամանակը օր ու գիշեր Գրքերի ընթերցանությամբ էր անցկացնում, և դրանով ծաղկած ու շահված՝ բարի օրինակ էին դառնում ուսումնասեր ունկնդիրներին։ Մանավանդ որ զգուշացուցիչ պատվիրաններ ունեին Աստծու կարգած պատգամավորներից, որոնց առաջինը հրամայում է, թե՝ «Տիրոջ օրենքի մասին պիտի խորհես գիշեր և ցերեկ» (տե՛ս Սահմ. Ա. 2), և երկրորդը նմանապես պատվիրում է. «Հետամտի՛ր Աստծու խոսքն ընթերցել, հորդորել և ուսուցանել հավատացյալներին։ Զանց մի՛ առ այն շնորհը, որ քո մեջ է, որ տրվեց մարգարեությամբ, երեցների ձեռնադրումով։ Այդ բանի վրա մտածի՛ր և հարատկի՛ր դրանում, որպեսզի

քո առաջադիմությունը հայտնի լինի բոլորին: Զգո՞վշ
եղիր քո մկատմամբ և քո ուսուցման մկատմամբ և հա-
րատնի՛ր դրամում: Եթե այդ բանն անես, կփրկես և՝քեզ,
և՛ մրանց, որ լսում են քեզ» (Ա, Տիմ. Դ 13-16):

Արդ, այս կերպ իր կյանքի բոլոր օրերը
առաքելական, առաքելագործ եղանակով վա-
րեց, գնաց ընդունված հրամանների հետքերով,
տարեցտարի այս արեց մինչև դեպքերի վախ-
ճանը և, թաղված Քրիստոսի սիրո մեջ, լուսա-
վորվում էր»¹:

Մեծ սուրբը, բացի Աստծու խոսքի քարո-
զությունից, եկեղեցիներ կառուցելուց և հոգևո-
րականներ կարգելուց, հորդորեց ս. Տրդատ թա-
գավորին դպրոցներ հիմնել, «որպեսզի զանա-
զան գավառներից, կողմերից, այլևայլ տեղերից
մանկանց բազմություն հավաքեն՝ ուսուցանե-
լու գագանամիտ, վայրենագույն և ճիվաղաբա-
րու գավառների բնակիչներին, որոնց ընդգրկեց
ուսուցման մեջ և հոգեոր սիրով ու եռանդով
վերացրեց դեերի ու սնոտի կուռքերի պաշտա-
մունքի շարավահոտ աղտն ու ժանգը և այն-
չափ հեռացրեց իրենց բուն բարքերից, մինչև
որ նրանք ասացին, թե՝ «Մոռացա իմ ժողովր-
դին ու իմ հոր տունը»²:

¹ Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, 889-891:

² Անդ, 839:

Սակայն այս գիշերօթիկ, իսկ ապա՝ ու Ներսեսի ջանքերով բացված «ցերեկեայ» դպրոցներում Ա. Գիրքը դասավանդվում էր ասորերեն և հունարեն։ Եկեղեցիներում ու վանքերում ծեսը և աստվածաշնչյան ընթերցանությունները նույնպես «մուրացածոյ բարբառով» էին։ «Իսկ որոնք գրագիտության արվեստից զուրկ էին, այսինքն՝ ժողովրդի՝ նախարարների ու շինականների խառնիճաղանջ բազմությունը, եթե ուսուցիչները, նստելով գիշերցերեկ, ամպերի նման ուսումը ինչպես հորդ անձրև նրանց վրա հոսեցնեին, նրանցից ոչ մեկը ոչ մի խոսք, ոչ կես խոսք, ոչ մի բան, ոչ մի նշույլ իրենց լսածներից չէին կարող մտքում պահել կամ հասկանալ»¹։

Այս պատճառով ժողովրդի լայն զանգվածները շարունակում էին կառչած մնալ իրենց բիրտ հեթանոսական բարքերին։ Ամբողջ մի դար պետք էր սպասել, մինչև աստվածային անքնին նախախնամությամբ բովանդակ Հայոց աշխարհը իր քիմքի վրա ճաշակեր Աստվածաշնչի կենարար քաղցրությունը։ Ա. Գրքի թարգմանությամբ պայմանավորված գրերի գյուտով միայն բարենպաստ պայմաններ ստեղծվեցին երկրի կատարյալ աստվածաշն-

¹ Փ. Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1968, էջ 91։

չացման համար։ Հայաստանն այսուհետ թևակոխեց նոր՝ չտեսնված երկնային օրենքների ու անքնին խորհուրդների, ճշմարտության և իմաստության, սիրո և ներողամտության, բարության և սրբության, առաքինության և աստվածաշտության անանց փուլը, որը տիեզերական հեղաշրջում պիտի կատարեր հայոց սրտերում, պիտի փոխեր նրանց բարոյական նկարագիրը և պիտի կերտեր երկնքի արքայությանն արժանի երկնաքաղաքացիներ։ «Ճանաչել զիմաստութիւնն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»՝ ահա՛ Աստվածաշնչից թարգմանված առաջին հայաբարբառ տողը, որը դարձավ նաև սկզբնավորված թարգմանչաց շարժման և դպրության խորհրդանիշը։

Ըստ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դիրքորոշման՝ Ս. Գրքի քաջ իմացությունը պարտադիր է նախ և առաջ հոգեուրականների համար՝ թե՛ իրենց անձերի, թե՛ հավատացյալների փրկության համար։ Մայր Մաշտոցում զետեղված Վարդան վարդապետի «Յաղագս քահանայութեան» կանոնում, ի թիվս քահանայական պաշտոնին վերաբերող պահանջների, շեշտվում է. «Վերջապես և ա՛յս իմացեք, եղբայրնե՛ր, որ քահանայական բարձր աստիճանը երկու հիմքի վրա է կայա-

նում, որոնք են Սուրբ Գրքի իմացությունը և
անձի սրբությունը։ Այս երկուսից մեկի բա-
ցակայության դեպքում այդպիսի մեկի համար
քահանայությունը չի կայանում, ինչպես շեն-
քը՝ առանց հիմքի։ Քանզի եթե քաջատեղյակ
է Ս. Գրքին, բայց գործեր չունի, կամ գործեր
ունի, իսկ գիտություն՝ ոչ, անարժան է քահա-
նայության»¹։ Իսկ ս. Թաղեոս առաքյալի կանո-
նում եպիսկոպոսին հանձնարարվում է «ձեռ-
նադրել միայն այն արժանավորներին, որոնք
գիտեն և հասկանում են Ս. Գիրքը, Եկեղեցու
կարգերը և Աստծու օրենքները։ Տգետներին
բացահայտ մերժել և ամենեին չձեռնադրել,
քանզի տգիտությունը, իբրև ամենամեծ չա-
րիք, մերժվում է Աստծու կողմից»²։

Մեր Եկեղեցին այս խնդրում ենում է
Հետեյալ աստվածային պատգամից. «Ար-
դարև, քահանայի շրթունքները զգուշ պիտի վարվեն
գիտության հետ, մարդիկ նրա բերամից պիտի օրենք-
ներ խնդրեն, քանի որ նա է ամենակալ Տիրոց պատգա-
մարերը» (Մաղաք. Բ 7):

XI դ. պատմիչ Ասողիկը զարմանահրաշ
տեղեկություններ է հաղորդում ոմն Սարգիս
վարդապետի մասին, որը «մանկուց Ս. Գիրքն

¹ Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ, Պոլիս, 1807, էջ 343:

² Նույն տեղում, էջ 343:

ամբողջությամբ անգիր գիտեր»¹:

Ա. Ներսես Շնորհալին «Հավաքում էր Աստծու խոսքը սիրողներին և նրանց հետ բնակվում: Սուրբ Հոգու խոսքն էր կարդում և Սուրբ Հոգու հետ խոսակցում»²: Նա և նրա օրինակին հետևած Սիմեոն Այրիվանեցի կաթողիկոսը հանդիմանում էին Դավթի 150 սաղմոսներն անգիր չիմացող քահանաներին:

Մեծն Լամբրոնացու մասին ուշագրավ վկայություն կա. «Ընթերցում և ուսանում էր միշտ ու գիշեր-ցերեկ գրում առանց հանգստանալու, այնպես որ երբեք ոտքն իսկ չմեկնեց իր անկողնու մեջ ո՛չ ցերեկը, ո՛չ գիշերը, այլ ցերեկը զբաղվում էր աղոթքով և Սուրբ Գրքի ընթերցանությամբ և ամենայն բարի գործով, իսկ գիշերը, նստելով աթոռի վրա, մի քիչ քնում էր, ապա շուտ արթնանալով, շտապում աղոթքի կանգնել՝ աչքերից արտասուքի աղբյուրներ բխելով»³:

Իսկ մեծ Վկայասերի՝ Գրիգոր կաթողիկոսի մասին կարդում ենք. «Միշտ զբաղվում էր Ա. Գրքի ընթերցանությամբ և աստվածախոս

¹ Ստեփանոս Վրդ. Տարօնացի, Տիեզերական պատմութիւն, Փարիզ, 1859, էջ 172:

² Շնորհալի, Զափածո Երկեր:

³ Յայապատում, Վենետիկ, 1901, էջ 420:

աղոթքներով», որին մեծն Շնորհալին՝ նրա թոռը, ձոնել է այս տողերը.

«Զբանի սիրողսն հաւաքեալ
Եւ առ ինքեան բնակեցեալ
ԶԳիրս Հոգույն միշտ ընթերցեալ
Եւ ընդ նոսին իր խօսեցեալ»¹:

**XIII դ. ապրած Հովհաննես Երզնկացի Պլուզ
վարդապետը նույնպես անգիր գիտեր Աստվա-
ծաշունչ Մատյանը:** Մի օր Անիի Մայր տաճա-
րում պաշտամունք մատուցելիս քահանաները
բարձր գրակալի վրա են զետեղում Ատյանի
Ավետարանը, որպեսզի կարճահասակ վարդա-
պետը չկարողանա կարդալ և ծաղրվի: Իսկ նա
ամոթով է թողնում վերջիններիս, երբ անգիր և
անսխալ կարդում է օրվա ընթերցվածքները:

**XIII դ. ապրած Հակոբ Բ կաթողիկոսը կկոչ-
վի «Հանճարոյ իմաստութեամբ վարժն Աստուա-
ծաշունչ Գրոց, Հմուտ և գիտող բանից իմաստ-
նոց, աննախանձաբար սիրողն և պատուղն ու-
սումնասիրաց, որ և Հայր Հոգեոր»²:**

**Ս. Գրիգոր Տաթևացին 7 տարեկանից է
սկսել ուսումնասիրել Ս. Գիրքը: 14 տարեկա-
նում Սուրբ Հոգու շնորհով նա այնքան քաջա-
տեղյակ էր Աստվածաշնչին, որ անգամ մեկնում**

¹ Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 406:

² Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 509-510:

Էր այն իր հետ խորհրդակցելու եկած վարդապետների համար:

Պատմում են,որ Կ. Պոլսի պատրիարք երջանկահիշատակ Շնորհք արք. Գալուստյանը սովորություն ուներ ամեն գիշեր մոմի լույսի ներքո ընթերցել Ա. Գիրքը, թեպետև կատարելապես քաջատեղյակ էր աստվածային Մատյանին:

Ա. Գրիգոր Լուսավորիչը Հայաստանով մեկ վանքեր հիմնեց և «չեն ու անշեն տեղերում հաստատեց դաշտաբնակ, շենաբնակ, լեռնական, անձավաբնակ, արգելաբնակ վանականների բազում ու անհամար խմբեր»¹: Հայոց վանքերը, սակայն, սոսկ ճգնարաններ չէին. այնտեղ ներանձնական կյանքը, սրբակենցաղ վարքը և վշտակյաց տկարությունը միահյուսված էին մանավանդ Ա. Գրքի ուսմանը. «Այնտեղ չէին հարբում գինով, այլ լցում էին Հոգով ու սրտերը հոգեոր երգերով էին պատրաստում ի փառս և ի գովություն Աստծու: Այնտեղ վարժվում էին հոգեպատում Գրքերի քաղցրուսույց ընթերցանությամբ: Այնտեղ քաջալերվում էին հորդորող լուսավոր քարոզությամբ՝ հասնելու Քրիստոսի նշանակած պահառատ նպատակներին»²:

¹ Ագաթանգեղոս, 839:

² Անդ, 847:

Հ. Ք. Զրաքյանը այդ մասին գրում է. «Ինչ որ ուրիշները IV և V դարերի Եղիպտոսի համար են ավանդում, մենք էլ մեր անապատականների ու վանականների համար կարող ենք ասել, որ նրանց բովանդակ գիտությունը, նրանց ուսումի ու խոկումի նյութը միայն Աստվածաշունչ Մատյանն էր: Եթե ունենայինք այդ վանքերի կանոններն ու կանոնադրությունը՝ նման ա. Պախոմեոսի կանոններին, պիտի գտնեինք Ս. Գրքի ուսման մեջ հարատեելու խիստ պարտավորություն՝ գեթ Նոր Կտակարանն ու Սաղմոսարանը անգիր սերտելու»¹:

Ս. Ն. Շնորհալին իր «Թուղթ ընդհանրականում» վանական սուրբ ուխտերի առաջնորդներին՝ «Եկեղեցու մարմնի աչքերի դերն ու սպասավորությունը կատարողներին» հղած հորդորում բացահայտում է անմոլոր առաջնորդության էությունը: «Եկեղեցու առաջնորդներից ով երկու աչքով լուսավորված լինի, այսինքն՝ Աստվածաշնչի գիտությամբ և առաքինասեր գործերով՝ անբծությամբ, սրբությամբ և ամենայն արդարությամբ, ինչպես Աստծու պատվիրաններն են ուսուցանում, այդպիսին ինչպես իր անձը, այնպես էլ ամբողջ եղբայ-

¹ Բազմավեպ, 1901, էջ 159:

բությունը բարվոք կառաջնորդի աստվածային գործերի մեջ»¹:

Վանքերը, չնորհիվ հոգեոր տեսական ու գործնական աստվածալաշտության բուռն աճի, չուտով վերաճում են հոգեոր կյանքի կենտրոնների, և վարդապետանոցները՝ հոգեոր ուսումնական հաստատությունները, մեծ մասամբ հաստատվում են այդտեղ: Ղազար Փարպեցին տեղեկություններ է հաղորդում Ա. Գրքի դասավանդման կերպի մասին. «Իսկ մեր երանելի վարդապետները, երեք-չորս անգամ մեզ սովորեցնելով Եկեղեցու բոլոր Կտակարանները սկզբից մինչև վերջ, մեզնից էլ պահանջում էին նույնը և հարկադրում այդ բոլորն իմանալ Դավթի սաղմոսների պես»²: Նշենք, որ մեր մատենագիրները մեծ մասամբ վանականներ ու հոգեորականներ են եղել, «ինչպես որ արևմտյան մենաստանները միշտ մայր ու դայակ եղան դպրության»³:

Այս և ուշ դարերի հոգեոր ուսումնական հաստատություններում ինչպես մյուս բոլոր

¹ Ա. Ներսէս Շնորհալի, Թուրք ընդհանրական, «Գանձասար» հանդէս, 1991, էջ 59:

² Ղազար Փարպեցի, Թուրք Վահան Մամիկոնյանին, Երևան, 1982, էջ 481-483:

³ Յ. Յացունի, Դաստիարակութիւնը իին հայոց քով, Վենետիկ, 1923, էջ 182:

Քրիստոնյա ազգերի, այնպես էլ հայերի մոտ դասավանդման գլխավոր առարկան Ա. Գիրքն էր:

Այսպես՝ Հովհան Երգնկացին՝ իբրև ուսուցիչ, Սեպուհ Ղեռան Ա. Մինաս վանքում մեկնում էր Աստվածաշունչը:

Ներսես վարդապետ Սասնեցին՝ Մշո Ա. Ղազար վանքի վանականը, 1332 թ. գրում է. «Գլածորի համալսարանը գնացի, ուր եօթն ամ աշխատեցայ ի վարժումն Հին և Նոր Կտակարանաց և այլ բազում սրբոց բանից»¹:

Սիմեոն Այրիվանեցին Եղիվարդ գյուղի մենաստանում դասավանդում է «Հին և Նոր Կտակարանք»:

Հովհաննես վարդապետը Տարոնի Ա. Կարապետ վանքում ուսուցիչ է կարգվում՝ «ասել դաս և մեկնել զգիրս Աստուածաշունչ՝ աշակերտելոցն եկեղեցւոց մանկանց»²:

Ա. Գր. Նարեկացին, անկասկած, անգիր գիտեր Հին և Նոր Կտակարանները. այս մասին նա ինքն է վկայում.

«Ունեմ Մովսեսին իր օրենքը Աերով՝
Մահացած Աերի աշխարհից եկած,

¹ Բ. Եղիայեան, Քննական պատմութիւն սուրբգրական ժամանակներու, Անթիլիաս, 1926, էջ 1174:

² Անդ, էջ 1174:

Մարգարեաների գրքերը բոլոր՝ գրված հոգուս մեջ,
Եվ մատյանները առաքյալների՝
Ծարված իմ մտքի մատների վրա,
Տիրոջդ համայնի՝ հանդերձ կտակով իր ավետա-
բեր....»¹:

Ուսումնասիրողներն իրավամբ պնդում են
Նարեկա վանքի մեծ ճգնավորի մասին, «քաջ
և մանաւանդ անգիր սերտող մը միայն պիտի
կրնար այնքան նիւթ և հիւթ քաղել անկից»²:
Գր. Նարեկացու «Մատյանում» հանդիպող
սուրբգրային մեջբերումների թիվն անցնում է
1000-ից:

Ասողիկը Սևանի վանքի մասին գրում է,
որ այնտեղ «հավաքվեցին բազում եղբայրներ՝
ստանալով բազմաթիվ Սուրբ Գրքեր, որպեսզի
լուսավորվեն հոգու աչքերը՝ տեսնելու Տիրոջ
ճանապարհը՝ ըստ իր անստվեր ուղևորություն-
ների»³: Մովսես վարդապետը՝ ապագա կաթո-
ղիկոսը, Երևանի հյուսիսային կողմում՝ ներ-
կայիս Ս. Աստվածածին (Զորավոր) եկեղեցու
տարածքում, վանք է հիմնում. «Նրա մոտ հա-

¹ Ս. Գր. Նարեկացի, Մատյան ողբերգության, Երևան, 1979, ԿԴ,
Բ:

² «Լոյս» շբթ., Կ. Պոլիս, 1906, թիւ 46:

³ Ստեփանոս Վրդ. Տարօնացի, Տիեզերական պատմութիւն,
Փարիզ, 1853, էջ 146:

վաքվեցին բազմաթիվ միաբաններ, միայնակ-յացներ, Սուրբ Գրքի իմաստուն ու սրբակյաց աշակերտներ: Մեծ ու փոքր միասին սիրով ու խաղաղ մնում էին խցում՝ միշտ աղոթելով ու Սուրբ Գիրքն ընթերցելով»¹:

Սուրբ Գրքի ուսումը, սակայն, չի սահմանափակվում միայն Հոգեորականների ու վանականների դասով:

Ա. Սահման ու ս. Մեսրոպը, ըստ Կորյունի վկայության, Ա. Գրքի թարգմանությունից անմիջապես հետո «աստվածային իմաստությամբ կրթեցին հենց այնտեղ իրենց մոտ եղած արքունիքը՝ ամբողջ ազատագունդ բանակի հետ: Երանելի Սահման ուսման վարժությամբ զբաղեցնում էր ավելի Մամիկոնյան մարդկանց, որոնց առաջինի անունն էր Վարդան, որ և Վարդկան էր կոչվում: Նույնպես ամեն մարդու աշխատում էր նա կրթել, հասկացնել ճշմարտության գիտությունը»²:

Ա. Սահման ու ս. Մեսրոպը լծվեցին ամենուր նոր գպրոցներ հիմնելու գործին ոչ միայն կղերի, այլև ազնվականների ու ռամիկների համար, որտեղ դասավանդման անկյունաքարը դարձյալ Ա. Գիրքն էր, որ մեր մատենագ-

¹ Առաքել Դավիթիժեցի, Պատմություն, Երևան, 1994, էջ 46:

² Կորյուն, Վարդ Մաշտոցի, Երևան, 1994, էջ 36:

բության մեջ հանդիպում է «Սուրբ Գրոց ուսում», «գիտութիւն Աստուծոյ», «չնորհք պատուիրանացն Աստուծոյ» և այլ անուններով։ Բոլորի աչքերն այսուհետ ուղղվում են դեպի Վաղարշապատ, որտեղից բխում էր «բացեալ աղբիւրն Աստուծոյ», և դեպի ուր շարժվում էին գունդ-գունդ՝ Ա. Գրքով լուսավորվելու համար։

Հազար Փարպեցին վկայում է. «Անվերջ բխում-հոսում էին մեկնությունների խոսքերը, որոնք մարգարեների գաղտնին հայտնի դարձնելով՝ ամբողջ ժողովրդի առաջ էին դնում հոգեոր կերակուրներով լեցուն սեղանը։ Իմաստության հետեւողներն էլ ճաշակում էին դրանք և իրենց քիմքերը քաղցրացնում՝ ըստ սաղմոսերգուի խոսքի, որ ասում է. «Վարդապետության խոսքերն առավել են, քան խորիսից մեղրի» (տե՛ս Սաղմ. ԺԸ 11): Եվ որպեսզի միանգամից ասեմ, ըստ Եսայի սուրբ մարգարեի խոսքի՝ Հայոց ամբողջ երկիրն Աստծու գիտությամբ լցվեց ս. Սահակ հայրապետի հոգեոր քարոզներից, որոնք բարում վտակների պես ծովերն էին լցնում»¹։

Իսկ երբ պարսիկները մտադրվեցին արմատախիլ անել քրիստոնեությունը, հանդիպեցին Հայ ժողովրդի աննկուն կամքին. «Մեզ Հայը

¹ Դազար Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 41:

ենք ճանաչում սուրբ Ավետարանը և մայր՝
Առաքելական Կաթողիկե Եկեղեցին. թող ոչ ոք,
իբրև չար անջրպետ մեջ ընկնելով, մեզ սրանից
չբաժանի»¹:

Ավելին, այդ օրհասական օրերին «աստ-
վածային Կտակարանների ընթերցումը երբեք
չէր դադարում ոչ մի ժամ»²: Իսկ թշնամու դեմ
«վասն հաւատոյ և վասն հայրենեաց» ելած
քաջ դյուցազնի մասին նույն պատմիչը գրում
է. «Մանկությունից տեղյակ էր սուրբ Կտակա-
րաններին»³:

Նրան հարած շատ իշխաններ ու նախարար-
ներ «Սուրբ Գիրքը սովորել էին մանկություն-
նից»⁴: Սա հաստատվում է նաև Ղեռնդ Երե-
ցի խոսքում. «Ինձնից ավելի տեղյակ և հմուտ
եք սուրբ Կտակարաններին»⁵: Իսկ Ավարայրի
ճակատամատից առաջ քաջ Վարդանը զորքին
քաջալերելու համար կարդում է Մակաբայեցի-
ների գիրքը:

Շուշանիկն իր մոտ իբրև հիշատակ պահում

¹ Եղիշե, Վարդանի և Յայոց պատերազմի մասին, Երևան, 1989,
էջ 135:

² Անդ, էջ 137:

³ Անդ, էջ 213:

⁴ Անդ, էջ 43:

⁵ Անդ, էջ 219:

և հանապազ կարդում էր իր պապի՝ ս. Սահակ Հայրապետի անձնական փոքրիկ Ավետարանը¹:

«Վահրամ Պահլավունին (X դ. զինվորական) առավոտ թե երեկո Հովհաննես Մկրտչի նման ճգնում էր պահեցողությամբ և, Աստվածաշունչում ընթերցելով, կերակրում իր բանական հոգին»²:

«Մուշեղ իշխանը՝ Սմբատ սպարապետի որդին (IX դ.), կրթված էր Աստվածաշնչի ընթերցումներով և ծանոթ էր ճարտասանական արվեստին»³:

XII դ. պատմիչ Մատթեոս Ուռհայեցին դրվատանքով վկայում է, որ Գագիկ արքան «կատարելապես գիտակ է Աստծու Հին և Նոր Կտակարաններին», իսկ Գրիգոր Պահլավունին «անչափ կրթված, բոլոր գիտություններն ուսումնասիրած, Աստծու Հին և Նոր Կտակարանները կատարելապես յուրացրած մարդ էր: Նա իմաստասերների հետ Ս. Սոֆիայի ատյանում էր նստում և բանավիճում հոռոմ վարդապետների հետ»: Իսկ Բագրեանդի գավառից

¹ Սովետք, Թ 27:

² Գր. ավագ քահանա Յայրապետյան, Աստվածաշունչը, Գտպագրություն, Երևան, 1995, էջ 10:

³ Անդ, էջ 9:

Ատրներսեհ մեծ իշխանի մասին նույն պատմիչը գրում է. «Նա ևս քաջատեղյակ էր, շատ տաղանդավոր, իսկական իմաստասեր մարդ էր, ուսանել էր Մեծ Արգինայում և սովորել աստվածային Կտակարանները»¹:

Արիստակես Լաստիվերցին ևս իշխան Գրիգոր Պահլավունու (Մագիստրոսի) մասին նույն վկայությունն է տալիս. «Իմաստուն և աստուածային Գրքերին հույժ հմուտ այր էր, ինչպես ուրիշ ոչ ոք»²:

Հեթում Ա թագավորը սիրում էր կարդալ Աստվածաշունչը. նրա մասին դրվատանքով է խոսում Երգնկացին. «Վարժ աստուածային Գրոց Արբոց»: Նմանօրինակ հիշատակություն կա Թորոս Բ-ի մասին.

«Աստուածային Գրով վարժեալ
Եւ յիմաստից արուեստ մտեալ»:

Կիլիկիայի Հեթում թագավորի մասին կարդում ենք. «Քանզի մանկությունից վարժված էր աստվածային օրենքների ընթերցանության կրթությամբ, որը կարող է իր մեջ հաստատված-

¹ Սատթեոս Ուռիայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 121:

² Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Երևան, 1971, էջ 36:

ներին ավելի լավ սնուցել, քան մայրերի ու դաշյակների հոգատարությունը։ Նա սիրեց իմաստությունը և սիրվեց նրա կողմից»¹:

Հեթում Բ-ի հորաքույր Ֆիմին, պատերազմի պատճառով փախչելով հայերի մոտ, արքանեղբայր Հովհաննես եպիսկոպոսից խնդրում է Սողոմոնի գրքերը՝ սփոփանք և մխիթարութուն գտնելու. «Որով, ասում է ընծայողը, յԱստուած և յաստուածայինսն խոկասցես միշտ և տրտմեալ սրտի քո սփոփանս սովաւ արասցես»։ Նույն առիթով սույն տիկնոջ «աստվածասեր եղբայրը»՝ Լեռնը, Ավետարան է նվիրում նրան՝ «ի մխիթարութիւն և ի փրկութիւն հոգւոյ»²:

Հստ XIII դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցու՝ Խաչենի Զալալ անվանված իշխան Հասանը, որը Զաքարեի և Իվանեի քեռորդին էր, «մի բարեպաշտ, աստվածասեր, հեզ ու հանգիստ, ողորմած ու աղքատասեր, անապատականների նման աղոթքների ու աղաչանքների մեջ ճգնող էր։ Որտեղ էլ լիներ, անխափան կատարում էր ցերեկվա և գիշերվա պաշտամունքը, ինչպես վանականները։ ...Զափազանց քահանայասեր և

¹ Յայապատում, Վենետիկ, 1901, էջ 516:

² Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 145:

ուսումնասեր էր ու աստվածային կտակարանների ընթերցող»¹:

Աստվածաշունչը շատ սիրվեց նաև հասարակ ժողովրդի կողմից. «Բայց ավելի տարածուն էին Դավթի սաղմոսները, որոնք իրենց ախորժական եղանակով ու աղոթական իմաստներով խոսում էին բոլորի սրտերի հետ և բոլորի շուրթերին էին»²:

Ղազար Փարպեցին այսպես է նկարագրում Սուրբ Գրքի թարգմանությամբ կյանքի կոչված բուռն հոգեոր զարթոնքը. «Սուրբ Եկեղեցիների արարողությունները զարդարվեցին: Կանանց և տղամարդկանց բազմությունները ճոխացան Փրկչի տոների ժամանակ և մարտիրոսացածների վկայարաններում: Գոհանալով, հոգեոր միսիթարությունից երջանկացած՝ նրանք իրենց տներն էին գնում՝ մեծամեծերն ու տղաները սաղմոսելով և կցորդներն ասելով ամենայն տեղ՝ հրապարակներում, փողոցներում և տներում»³:

Թովմա Արծրունին պատմում է Սասնա լեռ-

¹ Կիրակոս Գանձակեցի, Յայոց պատմություն, Երևան, 1982, էջ 192-193:

² Վ. Յացումի, Աստուածաշունչն ու Յայաստան, տե՛ս Յուշարձան Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան 1500-ամեակի, Երուսաղէմ, 1938, էջ 390:

³ Ղ. Փարպեցի, էջ 41:

ների Խույթ գյուղի բնակիչների մասին, ովքեր «անգիր գիտեին հայոց վարդապետների թարգմանած հին սաղմոսները, որ մշտապես ունեն շուրջներին»¹:

Իսկ Հովհաննես Գառնեցին վկայում է, որ ամբողջ ժողովուրդը՝ «քահանայք, ուամիկք, մանկունք, կողեռք և հաւատաւոր կանայք», ի տարերություն մյուս ազգերի, ովքեր սաղմոսները գրքով են երգում, անգիր են ասում Դավթի հոգեզմայլ սաղմոսները և այդ իսկ պատճառով բազում սխալներ թույլ տալիս:

Սաղմոսները դարեղար երգվել ու արտասանվել են ուազմի դաշտում, պանդխտության մեջ, արտերում ու այգիներում, եկեղեցիներում ու վանքերում, նեղության և ուրախության մեջ: Սակայն ժողովրդի բոլոր խավերի կողմից սաղմոսների լայն կիրառությունը փաստող բազում մատենագրական վկայություններից չպետք է տպավորություն ստեղծվի, թե Սաղմոսաց գիրքը հայերի ամենասիրելի գիրքն է եղել անցյալում: Հայերը, ինչպես նաև մյուս քրիստոնյա ազգերը, ամենից շատ պատվել, գերազասել և սիրել են Ավետարանը՝ իբրև մեր Տէր Հիսուս Քրիստոսի ուղղակի խոսք:

¹ Թովմա Արծրունի, «Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978, էջ 138:

Կիլիկիայի Բարեկեն Ա. կաթողիկոսը ինքն անձամբ ճանաչել է երկու կույր հայերի, «որոնք անթերի գիտեին ընթերցվածքները»¹:

Բոլոր ժամանակներում մեծ է եղել Աստվածաշնչի դերը նաև մատաղ սերնդի դաստիարակության մեջ: «Մեր բարեպաշտ նախնիք լայնօրէն կը խառնէին դաստիարակութեան գործին մեջ Ս. Գիրքը. իրենց պարծանք կը համարէին անոր հմտութիւնը և սփոփանք՝ անոր ընթերցումն ու սազմոսերգութիւնն իրենց բոլոր կենաց մէջ»²:

Բարեպաշտ ընտանիքներում Աստվածաշնչի ընթերցումով են մեծացել հայոց բազում սրբեր, հայրեր, վարդապետներ, թագավորներ, իշխաններ և ուրիշներ: Մանուկների դաստիարակությունը աչքաթող չի արվել հայրերի ու վարդապետների կողմից՝ Ներսես Շնորհալի, Գրիգոր Տաթևացի, Վարդան վարդապետ, Մխիթար Գոշ, Հովհաննես և Մովսես Երզնկացիներ: Օրինակ՝ Հովհաննեսը երեխաններին չարությունից ետ պահելու համար («նրանց մտքի վրա չարը դյուրին է տպավորվում, ինչպես կնիքը՝ փափուկ մոմի վրա») խորհուրդ է տա-

¹ Բ. Եղիայեան, էջ 1176:

² Վ. Դացունի, Դաստիարակութիւնը իին հայոց քով, Վենետիկ, 1923, էջ 58:

լիս մանուկների միտքը սնել «ուսմամբ աստուածային օրինացն»¹:

Առհասարակ, ինչպես վկայում է ս. Հովհաննես Ոսկեբերանը, հնուց բարեպաշտ սովորություն կար Ս. Գիրքը բացելուց առաջ լվանալ ձեռքերը: Տղամարդիկ բացում էին գլուխները, իսկ կանայք՝ պատկառանքով ծածկում: Այս սովորությունը տարածված է եղել և հայերի մոտ: Այսպես, Ստեփանոս վարդապետ գրիչը 1171 թ. Ավետարանում խնդրում է. «Մաքրութեամբ և զգուշութեամբ հպիք յայս Ամենափրկիչ Սուրբ Աւետարանս», այն էլ՝ «ծոմապահութեամբ և խնդրուածովք... վասն բժշկութեան ամենեցուն»:

Այսօր Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահպում են Ս. Գրքի բազմաթիվ ձեռագիր օրինակներ, որոնցից շատերը գրչության, մանրանկարչության և կազմության առումով արգեստի գլուխգործոցներ են: Պահպանված ձեռագրերի թիվը, սակայն, չի արտահայտում Հայաստանում և նրա սահմաններից դուրս երբեմնի գործածված Աստվածաշունչ Գրքերի իրական քանակը: Այս կապակցությամբ Բաբեկն կաթողիկոս Կյուլեսերյանը գրում է. «Եթէ կարելի ըլլար նոյնիսկ մերձաւորապէս հաշուիլ,

¹ Անդ, էջ 62:

թէ քանի օրինակ հայերէն Հին և Նոր Կտակարաններ արտագրած են հայ գրիչները Ս. Գրոց թարգմանութենէն մինչ տպագրութեան գիւտին ընդհանրացումը, ապշեցուցիչ թիւերու առջև պիտի գտնուէինք: Ստեփանոս Օրբելեան միայն Սիւնեաց վիճակին մէջ կը հաշուէ 10000-էն աւելի Ս. Գիրք (անշուշտ, Հին և Նոր Կտակարան)»¹:

Այս թվերը, ինչ խոսք, հարգանք ու պատկառանք են ներշնչում՝ վկայելով Հայաստանում ընդհանրական և առանձնական աստվածաշության մեջ Ս. Գրքի լայն գործածության մասին: Սակայն Սուրբ Գրքի ուսումը, ինչպես առհասարակ հոգեոր կյանքը, ապրել է տեղատվության շրջաններ: Ցավոք, միշտ էլ եղել են ժամանակներ՝ կարճ թե տևական, երբ հոգեոր զարթոնքին հաջորդել են գաղղության, անբարոյականության, նյութապաշտության, սուտ գիտական գաղափարներով մոլորվելու շրջաններ, որ առաջ են բերել հոգու սով՝ Աստծու խոսքը լսելու սով, և պայմանավորել բովանդակ հասարակական կյանքի ճգնաժամը: Առաքել Դավրիմեցին, նկարագրելով իր ժամանակի հոռի բարքերը, որոնք աղերսներ ունեն ներկայիս հետ, եղրակացնում է. «Եվ սրանց

¹ «Լոյս» շբթթ., Կ. Պոլիս, 1905, թիւ 16, էջ 395:

բոլորի պատճառը ոչ այլ ինչ էր, եթե ոչ հեռացումը Աստվածաշնչից և Աստծու երկյուղից. բնավ Գրքեր չէին կարդում, աստվածային Մատյանները փակվել ու լոել էին, որովհետեւ խափանվել էր Աստվածաշնչի ընթերցումը, որ արհամարհված էր նրանց աչքում. Հողով ու մոխրով պատված՝ ընկած էին որևէ անկյուն, որովհետեւ, ըստ Տիրոջ խոսքի, «'չ Գիրքն էին ճանաչում, ո՛չ Գրքերի զորությունը» (տե՛ս Մատթ. իԲ 29):



¹ Առաքել Ղավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988, էջ 229-230:

ՍԱՂՄՈՍ ՇԺԸ

ԳՈՎՔ ԱՍՏԾՈՒ ՕՐԵՆՔԻ

ԱԼԵՖ

- 1 Երանի նրանց, ովքեր ամրիծ ուղի են բռնել և ընթառում են *Տիրոց օրենքով*:
- 2 Երանի նրանց, ովքեր հետևում են նրա պատվիրաններին, իրենց ամրող սրտով փնտրում են նրան: Յ Անորենության գործողները չեն, որ պիտի ընթանան նրա ճանապարհներով:
- 4 Դու հրամայեցիր, որ քո պատվիրանները խստորեն պահեմ:
- 5 Իմ ճանապարհները հաջող կլինեն, եթե քո պատվիրանները պահեմ:
- 6 Այն ժամանակ ես չէի ամաչում, երբ զգովշ էի քո պատվիրանների հանդեպ:
- 7 Ես գոհություն պիտի մատուցեմ քեզ, *Տե՛ր*, ուղիղ սրտով, սովորելով քո արդար դատաստանները:
- 8 Պահեցի ես քո օրենքները, իսպան մի՛ լրիր ինձ:

ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՏԻՐՈՉ ՕՐԵՆՔԻՆ

ԲԵԹ

- 9 Երիտասարդն ի՞նչ միջոցով ուղղի ճանապարհն իր, եթե ոչ քո խոսքերը պահելով:
- 10 Իմ ամրող սրտով քեզ փնտրեցի, մի՛ զրկիր ինձ քո պատվիրաններից:
- 11 Քո խոսքերը սրտում թաքցրի, որ չմեղանչեմ քո դեմ:

- 12 Ὁρῆλαὶ οὐ ηποιεῖται, στέρεται, αποψητείται· τὸν οὐκέπαθεν
ποτε,
13 ποτὲ γρηγορεῖται· τὸν δὲ φύσιν τοῦτον τοιούτον
αποτελεῖται·
14 φάνταστος γένεται· τὸν διαδιπλωμένον τοῦτον τοιούτον
αποτελεῖται· τὸν διαδιπλωμένον τοῦτον τοιούτον
αποτελεῖται·
15 φάνταστος γένεται· τὸν διαδιπλωμένον τοῦτον τοιούτον
αποτελεῖται· τὸν διαδιπλωμένον τοῦτον τοιούτον
αποτελεῖται·
16 φάνταστος γένεται· τὸν διαδιπλωμένον τοῦτον τοιούτον
αποτελεῖται·

ԵՐԳԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՏԻՐՈՁ ՕՐԵՆՔՈՒՄ
ԳԱՄԵԼ

- 17 Հասուցի՞ր քո ծառալին, որ ապրեմ ու պահեմ խոս-
քերը քո:
18 Բա՛ց իմ աչքերը, որ տեսանք քո օրենքի հրաշալիք-
ները:
19 Պամուկիստ եմ ես երկրի երեսին, պատվիրաններդ
մի՛ թաքցրու իմանից:
20 Ես փափագեցի ամեն ժամ ցանկանալ քո դատաս-
տանները:
21 Դու սաստեցիր ամբարտավաններին. անիծյալ են
նրանք, ովքեր խոտորվեցին քո պատվիրաններից:
22 Հեռացրո՞ւ իմանից նախատինքն ու արհամարհանքը,
քանզի ես նախանձախմադիր եղա քո վկայություննե-
րին:
23 Թեև իշխանները նատած չարախոսում էին իմ մասին,
բայց քո ծառան խորհում էր քո օրենքների մասին:
24 Քո վկայություններն իմ խոսքերն էին, և քո արդա-
րությունն՝ իմ խորհուրդը:

ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՏԻՐՈՉ ՕՐԵՆՔԻՆ
ԴԱԼԵՐ

- 25 Հոգիս մերձեցավ հողին. Տե՛ր, ըստ քո խոստման՝
փրկի՞ր ինձ:
- 26 Իմ ճանապարհների մասին պատմեցի քեզ, ու դու
ինձ լսեցիր. դատաստաններու սովորեցրո՞ւ ինձ:
- 27 Ինձ ճանաչե՛լ տուր քո արդարությունների ճանա-
պարհը, որ խորհեև քո հրաշագործությունների մա-
սին:
- 28 Հոգիս աճքուն մնաց ձանձրովթից, ըստ քո խոստ-
ման՝ ամրապնդի՞ր ինձ:
- 29 Մեղքի ճանապարհները հեռացրո՞ւ ինձնից և քո
օրենքով ողորմի՞ր ինձ:
- 30 Քո ճշմարտության ճանապարհն ընտրեցի, և քո
օրենքները ես չմոռացա:
- 31 Մերձեցա քո պատվիրաններին. Տե՛ր, մի՛ ամաչեց-
րու ինձ:
- 32 Քո պատվիրանների ճանապարհով ընթացա, քան-
դի ամդորրություն տվիր իմ սրտին:

ԱՂՈԹՔ՝ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ ՏԻՐՈՉ ԻՄԱՍՏՈՒԹ-
ՅՈՒՆԸ

ՀԵ

- 33 Տե՛ր, իրավունքիդ ճանապարհի օրենսգետն ինձ
դարձրու, որ ամեն ժամ հետևեմ դրան:
- 34 Իմաստուն դարձրու ինձ, որ քննեմ քո օրենքը և ամ-
բողջ սրտովս պահպանեմ այն:
- 35 Առաջնորդի՞ր ինձ քո պատվիրանների շավիդներով,
քանզի հաճելի են դրանք ինձ:

- 36 Սիրտս հակի՞ր դեպի քո պատվիրանները, և ոչ թե դեպի ազահություն:
- 37 Ծրջի՞ր աչքերս, որ ունայնություն չտեսնեմ, ինձ պահպանի՞ր քո ճանապարհին:
- 38 Քո ծառայի համար հաստատի՞ր քո խոսքը, որ քո երկյուղի մեջ մնամ:
- 39 Ազատի՞ր ինձ նախատիմքներից, որոնցից կասկածում էի, քանզի քաղցր են դատաստանները քո:
- 40 Ահա ցանկացա քո պատվիրանները, քո արդարությամբ պահպանի՞ր ինձ:

ՎԱՏԱՀՈՒԹՅՈՒՆ ՏԻՐՈՉ ՕՐԵՆՔԻՆ ՎԱՎ

- 41 Ողորմություն ինձ վրա թող գա, Տե՛ր, և փրկություն՝ ըստ քո խոստման:
- 42 Ես խոսքով պատասխան կտամ ինձ նախատողներին, քանզի հույս դրի քո խոսքերի վրա:
- 43 Ծշմարտության խոսքը բնավ մի՛ հեռացրու իմ քերանց, քանզի հույս դրի քո դատաստանների վրա:
- 44 Քո օրենքը պահեցի ամեն ժամ, հավիտյան և հավիտյան հավիտենից:
- 45 Ես ընթացա անդորրության մեջ, քանզի քո պատվիրանները փանուրեցի:
- 46 Թագավորների առաջ խոսեցի քո պատվիրանների մասին ու չամաչեցի:
- 47 Խորհեցի քո պատվիրանների մասին, որոնք սիրեցի:
- 48 Զեռքս պարզեցի դեպի պատվիրանները քո, որոնք սիրեցի, և խորհեցի քո արդարության մասին:

**ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ ՏԻՐՈՉ ՕՐԵՆՔՈՒՄ
ԶԵ**

- 49 Հիշի՛նք ծառայի՛ տրված խոսքը, որի վրա էլ դրի՛
իմ հույսը:
- 50 Դա է թշվառության մեջ ինձ միա մխիթարողը, քանզի քո
խոսքն ինձ պահպանեց:
- 51 Ամբարտավաճառերը շատ անհրավություն գործեցին
իմ դեմ, բայց ես քո օրենքից չխոտորվեցի:
- 52 Քո հավերժական օրենքաները հիշեցի, Տե՛ր, ու մխի-
թարվեցի:
- 53 Տրտմություն իշավ ինձ վրա մեղավորների ու քո
օրենքը լրողների երեսից:
- 54 Պատվիրաճներդ գովասանքի արժանի են ինձ հա-
մար իմ պանդխոտավայրում:
- 55 Գիշերն հիշեցի քո անունը, Տե՛ր, և քո օրենքը պա-
հեցի:
- 56 Դա՛ եղավ կյանքիս ուղին, քանզի քո արդարությունը
փառքեցի:

**ՆՎԻՐՈՒՄ ՏԻՐՈՉ ՕՐԵՆՔԻՆ
ԽԵՂԾ**

- 57 Բաժինս դո՞ւ ես, Տե՛ր, ասացի, որ օրենքիդ պիտի
հետևեմ:
- 58 Ամրող սրտովս աղոթեցի քո դիմաց, ողորմի՛ր ինձ
ըստ քո խոստման:
- 59 Իմ ճանապարհի մասին խորհեցի, և քայլերս դեպի քո
պատվիրաճները շրջեցի:
- 60 Պատրաստվեցի և չվախեցա պահել քո պատվիրաճ-
ները:
- 61 Մեղքի ցանցերը պատեցին ինձ, բայց քո օրենքը ես
չմոռացա:

- 62 Կեսգիշերին եղանում էի՝ գոհություն մատուցելու քեզ
քո արդար դատաստանների համար:
- 63 Հաղորդակցվում էի քեզնից երկյուղ կրող բոլոր
մարդկանց հետ, ովքեր պահում են պատվիրաննե-
րով քո:
- 64 Երկիրը լցվել է Տիրոջ ողորմությամբ, սովորեցրո՞ւ
ինձ արդարադատությունը քո:

ՏԻՐՈՋ ՕՐԵՆՔԻ ԱՐԺԵՔԸ
ԹԵՂԸ

- 65 Քաղցրությամբ վարվեցիր ծառայիդ հետ, Տե՛ր, քո
խոսքի համաձայն:
- 66 Քաղցրություն, խրատ և գիտություն սովորեցրո՞ւ
ինձ, քանզի հավատացի քո պատվիրաններին:
- 67 Քանի դեռ չեի խեղճացել, մեղանչում էի, դրա համար
խստորէն հետևեցի քո խոսքերին:
- 68 Քաղցր ես դու, Տե՛ր, և քո քաղցրությամբ քո արդա-
րադատությունը սովորեցրո՞ւ ինձ:
- 69 Ամրարտավանների անհրավություններն իմ դեմ շա-
տացան, բայց ես ամբողջ սրտով քո պատվիրան-
ները քննեցի:
- 70 Կաթի պես թանձրացավ սիրտը մրանց, բայց ես քո
օրենքներով խոսեցի:
- 71 Լավ է, որ դու խոնարհ դարձրիր ինձ, որպեսզի քո
արդարադատությունը սովորեն:
- 72 Քո քերանից եղած օրենքն ինձ համար ավելին է, քան
հազարներով արծաթ ու ոսկի:

ՏԻՐՈՉ ՕՐԵՆՔԻ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ
Եղի

- 73 Քո ձեռքերն արարեցին ու ստեղծեցին ինձ, ինձ իմաստով՝ դարձրու, որ սովորեմ պատվիրանները քո:
- 74 Քեզնից երկյուղ կրողները պիտի տեսնեն ինձ և ուրախանան, քանզի հույսս դրի քո խոսքերի վրա:
- 75 Հասկացա, Տե՛ր, որ քո դատաստանն արդար է, և իրավացիորեն խոնարին դարձրիր ինձ:
- 76 Ողորմությունն թող ինձ միսիթարություն լինի՝ ծառայիդ տրված խոսքիդ համաձայն:
- 77 Գթություններդ թող ինձ վրա գան, որպեսզի փրկվեմ, քանզի քո օրենքներն են իմ խոսքերը:
- 78 Ամբարտավանները պիտի ամաչեն, որ իզուր անիրավություն գործեցին իմ դեմ, իսկ ես քո պատվիրանների մասին պիտի խորհին:
- 79 Թող ինձ իրատեն քեզնից երկյուղ կրողները և քո վկայությունները ճանաչողները:
- 80 Թող սիրու ամքիծ լինի քո արդարության մեջ, որպեսզի չամաչեմ:

ԱՂՈԹՔ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
Քափ

- 81 Հոգիս կարոտեց քո փրկությանը, քանզի հույսս դրի քո խոսքի վրա:
- 82 Աչքերս սպասեցին քո խոսքին, ասացի. «Ե՞րբ պիտի միսիթարես ինձ»:
- 83 Եղա ես ինչպես տիկ սառնամանիքում, քանի որ քո արդարադատությունը չմոռացա:
- 84 Որքա՞ն են քո ծառայի օրերը, ե՞րբ պիտի տեսնես դատաստանն ինձ հաղածողների:

- 85 Անօրեններն ինձ խորհուրդներ տվին, բայց ոչ քո
օրենքի համեմատ:
- 86 Քո բոլոր պատվիրանները ճշմարիս են, իզուր ինձ
հաղածեցին, օգնի՞ր ինձ:
- 87 Մի փոքր ևս, և ճրանք կորստյան կմատնեին ինձ երկ-
րի երեսին, բայց ես չլրեցի քո պատվիրանները:
- 88 Քո ողորմությամբ կյանք տուր ինձ, և ես կպահպա-
նեմ քո բերանի վկայությունները:

**ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ ՏԻՐՈԶ ՕՐԵՆՔԻՆ
ԼԱՄԵՔ**

- 89 Քո խսքը, *Տե՛ր*, հավիտյան երկնքում է:
- 90 Սերնդից սերունդ մնում է քո ճշմարտությունը, դու
հաստատեցիր երկիրը, որ կա:
- 91 Քո հրամանին է սպասում ցերեկը, բանզի բոլորը քո
ծառաներն են:
- 92 Եթե քո օրենքն իմ խոսքը չլիներ, վաղուց ես կործան-
ված կլիմեի իմ թշվառության մեջ:
- 93 Հավիտյան չպիտի մոռանամ քո արդարությունները,
բանզի դրանցով ինձ պահպանեցիր:
- 94 Քոնն եմ ես՝ փրկի՞ր ինձ, բանզի արդարադատութ-
յունդ փնտրեցի:
- 95 Մեղավորները հետամտեցին, որ կործանեն ինձ,
բանզի մտքումն քո վկայությունները դրի:
- 96 Ամեն կատարելության վախճանը տեսա, քո պատ-
վիրանները խիստ ընդարձակ էին ինձ համար:

ՍԵՐ ՏԻՐՈՁ ՕՐԵՆՔԻ ՀԱՆԴԵՊ Մեմ

- 97 Որքա՛ն սիրեցի օրեմքները քո, մրամք գիշեր և ցերեկ
իմ խոհերմ էին:
- 98 Թշնամիներից ավելի խելացի դարձրիր ինձ քո
պատվիրաններով, քանզի մրամք իմն էին միշտ:
- 99 Բոլոր ուսուցիչներից ավելի իմաստուն եղա, քանզի
քո վկայություններն իմ խոհերմ էին:
- 100 Ծերունիներից ավելի իմաստուն դարձա, քանզի քո
պատվիրանները քննեցի:
- 101 Ոտքերս ետ պահեցի չարիքի բոլոր ճանապարհնե-
րից, որպեսզի պահեմ քո խոսքերը:
- 102 Քո իրավունքից չխոտորվեցի, քանզի դու ինձ
օրենսգետ դարձրիր:
- 103 Որքա՛ն քաղցր են քո խոսքերն իմ քիմքին՝ ավելի
քաղցր, քան մեղրն իմ բերանին:
- 104 Քո պատվիրաններով իմաստնանալով՝ ատեցի չա-
րիքի բոլոր ճանապարհները, քանզի դու ինձ օրենս-
գետ դարձրիր:

ԼՈՒՅՍ ՏԻՐՈՁ ՕՐԵՆՔԻՑ Նուն

- 105 Քո խոսքը ճրագ է իմ ոտքերի համար և լուսավորում
է իմ շավիդները:
- 106 Երդվեցի ու որոշեցի, որ պիտի պահեմ քո բոլոր ար-
դար դատաստանները:
- 107 Սաստիկ թշվառ եղա.
- Տե՛ր, կյա՛նք տուր ինձ ըստ քո խոստման:
- 108 Բարեհաճի՛ր ընդունել ընծան իմ բերանի, Տե՛ր, և քո
իրավունքն ինձ սովորեցրո՛ւ:

- 109 Հոգիս ամեն ժամ քո ձեռքում է, և ես քո օրենքը չմո-
նացա:
- 110 Մեղավորները որոգայթ լարեցին իմ դեմ, ես քո
պատվիրաններից չխոտորվեցի:
- 111 Հավիտյան ժառանգեցի քո վկայությունները, քան-
դի ճրանք իմ սրտի ցնծությունն են:
- 112 Սիրոս առհավետ խոնարհեցրի, որ հատուցման
համար քո օրենքները կատարեմ:

ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ ՏԻՐՈՁ ՕՐԵՆՔՈՒՄ Սամքաթ

- 113 Ատեցի ամօրեններին և քո օրենքը սիրեցի:
- 114 Օգնականն ու փրկիչն իմ դու ես, և ես հովս դրի քո
խոսքի վրա:
- 115 Հեռացե՛ք ինձնից, չարազործնե՛ր, որ ես իմ Աստծու
պատվիրանները քննեմ:
- 116 Օգնի՛ր ինձ ըստ քո խոսքի ու պահպանի՛ր ինձ, և իս
հովսի մեջ ինձ մի՛ ամաչեցրու:
- 117 Օգնի՛ր ու փրկի՛ր ինձ, որ շարունակ քո դատաստա-
նի մասին մտածեմ:
- 118 Անարգեցիր բոլոր ճրանց, ովքեր ընդվզեցին քո ար-
դարադատության դէմ, քանզի անիրավ էին ճրանց
խորհուրդները:
- 119 Հանցավոր համարեցի աշխարհի բոլոր մեղսա-
գործներին, դրա համար սիրեցի պատվիրանները
քո:
- 120 Մարմինն իմ գամի՛ր քո երկյուղին, քանզի սաստիկ
վախեցա քո դատաստաններից:

ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՏԻՐՈՉ ՕՐԵՆՔԻՆ
Է

- 121 Դատաստան և արդարություն գործեցի, ինձ մի՛ մատնիր ինձ նեղողների ձեռքը:
- 122 Ծառայիդ բարությանը ընդունիր, որ ամբարտավաճակը չչարչարէն ինձ:
- 123 Աչքերն իմ սպասեցին քո շնորհելիք փրկությանը, Տե՛ր, և քո արդարության խոսքին:
- 124 Ծառայիդ հետ վարվի՛ր քո ողորմության համեմատ, քո արդարադատությունն ինձ սովորեցրո՛ւ:
- 125 Ես քո ծառան եմ, ինձ իմաստո՛ւն դարձրու, որ ճանաչեմ քո վկայությունները:
- 126 Ժամն է, որ Տերը վեր կենա, քանզի խափանեցին քո օրենքը:
- 127 Հիրավի, սիրեցի քո պատվիրանները ուկուց ու սպազիոնից ավելի:
- 128 Քո բոլոր պատվիրաններն ինձ հաջողություն բերին, քանզի ատեցի ճանապարհը չարիքի:

ՏԻՐՈՉ ՕՐԵՆՔԻՆ ՀՆԱԶԱՆԴՎԵԼՈՒ
ԶԳՑՈՒՄ
ՓԵ

- 129 Սքանչելի են քո վկայությունները, դրա համար հոգիս սիրեց դրանք:
- 130 Քո խոսքերի հայտնությունը լուսավորում և իմաստնացնում է պարզամիտներին:
- 131 Բերան բացեցի ու շունչ առա, հոգիս փափազեց պատվիրանները քո:
- 132 Նայիր ի՞նձ և ողորմի՛ր ինձ քո անունը սիրողների իրավունքի համեմատ:

- 133 Ծանապարհն իմ ուղիքի քո խոսքի համաձայն, որ
զանազան մեղքեր չտիրեն ինձ:
- 134 Փրկիքի ինձ մարդկանց գրպարտությունից, և ես քո
պատվիրանները կպահեմ:
- 135 Երեսդ ցույց տուր քո ծառային, և քո արդա-
րադատությունը սովորեցրո՞ւ ինձ:
- 136 Զրերի վտակներ իշան իմ աչքերից, բանզի մարդիկ
չհետևեցին քո օրենքներին:

ՏԻՐՈՉ ՕՐԵՆՔԻ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ
Ծադե

- 137 Արդար ես դու, *Տէ՛ր*, և շիտակ են քո դատաստան-
ները:
- 138 Դու պատվիրեցիր քո վկայությունները, որոնք ար-
դարն շատ ճշմարիտ են:
- 139 Նախանձախներությունը քո համելեա մաշեց ինձ,
բանզի թշնամիներն իմ մոռացան խոսքերը քո:
- 140 Խիստ ընտիր են խոսքերը քո, և քո ծառան սիրեց
դրանք:
- 141 Մանուկ եմ ես և արհամարհված, բայց քո արդա-
րությունը չմոռացաւ:
- 142 Քո արդարությունը հավերժական արդարություն է,
և քո օրենքը՝ ճշմարիտ:
- 143 Նեղությունն ու վիշտն ինձ պատեցին, բայց քո
պատվիրաններն իմ խոսքերն եղան:
- 144 Քո վկայություններն արդար են հավիտյան. իմաս-
տո՞ւն դարձրու և պահպանիք ինձ:

ԱՐՈԹՔ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
Կոփ

- 145 Ամբողջ սրտովս քեզ ձայն տվի, լսի՞ր իհած, *Sէ՛ր, քանզի քո արդարությունը փնտրեցի:*
- 146 Աղաղակեցի քո առջև՝ փրկի՞ր իհած, և ես քո վկայությունները կպահեմ:
- 147 Ես վաղ առավոտյան արթնացա ու աղաղակեցի և իմ հույսը դրի քո խոսքերի վրա:
- 148 Առավոտից շուտ բացվեցին աչքերն իմ, որ քո խոսքերն արտասանեմ:
- 149 Լսի՞ր իմ ձայնը, *Sէ՛ր, ըստ քո ողորմության. Sէ՛ր, քո դատաստանով փրկի՞ր իհած:*
- 150 Հաղածիչներս անօրենությունը մոտեցրին իհած, քանզի նրանք հեռու եղան քո օրենքից:
- 151 Մոտ ես դու, *Sէ՛ր, և քո բոլոր պատվիրանները ճշմարիտ են:*
- 152 Ակզրից ևեթ ճանաչեցի քո վկայությունները, որոնք դու հավիտյա՞ն հաստատեցիր:

ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ
Ռեզ

- 153 *Sէ՛ս իմ թշվառությունը և փրկի՞ր իհած, քանզի քո օրենքը ես չմոռացա:*
- 154 *Sէ՛ս իմ դատաստանը և ազատի՞ր իհած, ու քո խոսքի համաձայն՝ պահպանի՞ր իհած:*
- 155 *Փրկությունը հեռու է մեղավորներից, քանզի նրանք քո օրենքները չպահեցին:*
- 156 *Քո գթությունները շատ են, *Sէ՛ր, և քո դատաստանի համաձայն՝ պահպանի՞ր իհած:**
- 157 *Բազմաթիվ եղան իմ հալածիչներն ու իհած նեղողնե-*

- բը, բայց քո վկայություններից ես չխոտորվեցի:
- 158 Մաշվում էի ճայելով անողորմներին, քանզի քո պատվիրանները չպահեցին նրանք:
- 159 Տե՛ս, թե որքա՞ն սիրեցի քո պատվիրանները. Տե՛ր, քո ողորմությամբ կյա՛նք տուր իԱՃ:
- 160 Քո խոսքի սկիզբը ճշմարտությունն է, հավերժ են քո բոլոր արդար դատաստանները:

ԸՆԾԱՅՈՒՄ ՏԻՐՈՉ ՕՐԵՆՔԻՆ ԾիԱ

- 161 Իշխաններն իզուր հալածեցին իԱՃ. սիրտս միայն քո խոսքերից սարսափեց:
- 162 Ես ցնացի քո խոսքերով, ինչպես մեկը, որ մեծ ավար է գտնում:
- 163 Ատեցի ու արհամարհեցի մեղքը և քո օրենքը սիրեցի:
- 164 Օրվա մեջ յոթն անգամ քեզ պիտի օրհնեմ քո արդար դատաստանի համար:
- 165 Քո օրենքը սիրողները մեծ խաղաղության մեջ են, և նրանց համար չկա զայթակղություն:
- 166 Սպասեցի քո փրկությանը, Տե՛ր, և քո պատվիրանները սիրեցի:
- 167 Հոգիս պահեց քո վկայությունները, և ես շատ սիրեցի դրանք:
- 168 Հետևեցի քո պատվիրաններին և վկայություններին, քանզի իմ բոլոր ուղիներն առջևու են:

ԱՂՈԹՔ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ Թավ

- 169 Իմ խնդրանքները թող մոտենամ քեզ, Տե՛ր, քո խոսքի համաձայն՝ իմաստուն դարձրու իԱՃ:

- 170 Իմ աղոթքը թող հասմի քեզ, *Sէ՛ր*, և քո խոսքով
փրկի՞ր ինձ:
- 171 Իմ շրջումքները քեզ օրհնություն կրխեցնեմ, երբ
ինձ սովորեցնես քո արդարադատությունը:
- 172 Իմ լեզուն քո խոսքերը կարտասամի, քանզի քո բո-
լոր պատվիրաններն արդար են:
- 173 Քո ձեռքն իմ պահապանը թող լինի, քանզի քո
պատվիրաններն ընտրեցի:
- 174 Քո շնորհելիք փրկությունը ցանկացա, *Sէ՛ր*, և քո
օրենքներն իմ խոսքերն եղան:
- 175 Թող ես ապրեմ, որ օրհնեմ քեզ, և քո արդարադա-
տությունն ինձ թող օգնի:
- 176 Մոլորվեցի կորուսյալ ոչխարի պես, փնտրի՞ր ծա-
ռայիդ, քանզի պատվիրաններդ չեմ մոռացել:



Օգտագործված գրականություն

1. Աստուածաշունչ, արևելահայերէն նոր թարգմանութիւն, Ս. Էջմիածին, 1994:
2. Բիլգանդ Եղիայեան, Քննական պատմութիւն սուրբգրական ժամանակներու, Ե գիրք, Անթիլիաս, 1976:
3. «Գանձասար» հանդէս, Ա, 1992, Տիգրան Խաչատրեան, Եկեղեցու հայրերի ուսմունքը հոգևոր ընթերցանութեան և հաւատքի դաւանութեան մասին:
4. Յուշարձան Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան 1500-ամեակի, Երուսաղէմ, 1938:
5. Յոգևոր Կեանքի մասին, «Գանձասար», 1997:
6. Գր. ավ. քահանա Յայրապետյան, Եղիա քահանա Յայրապետյան, Աստվածաշունչը, Գ տպագրություն, Երևան, 1995:
7. Աստուածաշունչի սերտողութիւն, Ս. Ներսէս Ճեմարան, Նիւ Եօրք, 1992:
8. S. Սահակ քինյ. Սարգսեան, Քննական կրօնագիտութիւն, Կոստանդնուպոլիս, 1874:
9. Գր. Տարեացի, Գիրք հարցմանց, Երուսաղէմ, 1993:
10. Գր. Տարեացի, Զմերան հատ. «Գրոց առաւել քննութիւն պարտի»:
11. Գր. Տարեացի, Սողոմոնի առակների մեկնութիւնը, Երևան, 2000:
12. Ս. Ներսէս Շնորհալի, Թուղթ ընդհանրական, «Գանձասար», 1991:
13. Ս. Շնորհալի, Յորդորակներ, Անթիլիաս, 1978:
14. Գր. Նարեկացի, Մատյան ողբերգության, Երևան, 1979:
15. Կիւրեղ Երուսաղէմացի, Կոչումն ընծայութեան:
16. Կանոնագիրք Յայոց, Բ, աշխատ. Վ. Յակոբյանի, Եր., 1971:
17. Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ, Պոլիս, 1807:

18. S. Մեսրոպ քինյ. Արամեան, Երգ Երգոց՝ հանդերձ մեկ-նութեանք նախնեաց, «Գանձասար», 1993:
19. Արշակ Տէր-Միքէլեան, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու քրիստոնէականը, Տփղիս, 1900:
20. Արշակ Տէր-Միքէլեան, Ուսումն Ս. Գրոց, Թիֆլիզ, 1900:
21. Ս. Շնորհալի, Մեկնութիւն Եօթնից թղթոց կարուղի-կեաց, Երուսաղէմ, 1998:
22. Յ. Ք. Չրաքեան, Սուլր Գրոց ուսումն ի Հայս, «Բազմավեպ», 1901:
23. Յ. Միքայել վոդ. Զամշեանց, Մեկնութիւն Սաղմոսաց, Վենետիկ, 1815:
24. Մ. Ա. ձեռ. 5324, Խրատ ժամակարգութեանց աղօթից և ծնրադրութեանց, հասարակաց և առանձնութեան, ի սուլր Գրիգոր Վարդապետէ, 1627:
25. Յովհ. Երգնկացի, Խրատ բոլոր քրիստոնէաներին, Անրիլիս, 1984:
26. Հայելի Վարուց, Երևան, 1994:
27. Գրիգոր Սարաֆեան, Ներածութիւն Նոր Կտակարանի, Անրիլիս, 1950:
28. Յ. Վ. Հացումի, Դաստիարակութիւնը իին հայոց քով, Վենետիկ, 1923:
29. Գարեգին Ա, Համառօտ ձեռնարկ հովուական աստուածաբանութեան, Մ. Արոռ, 1995:
30. Կիւլեսերեան Բարգէն, Սուլր Գրոց ընթերցուածները Հայ Եկեղեցւոյ մէջ, «Լոյս» շբթ, Կ. Պոլիս, 1905, թիւ 16:
31. «Լոյս» շբթ, Կ. Պոլիս, 1906, թիւ 46:
- 32 Յովհ. Արծիշեցի, Պատարագի մեկնություն, Ս. Էջմիածին, 1999:
33. Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացւոյ Վարդ Եւ մատենագրութիւնք, Վենետիկ, 1907:
34. Մամբրէ Վերծանող, Մատենագրութիւնք նախնեաց, Վենետիկ, 1894:

35. Ս. Մայիսյան, Ժամանակակից աղանդները Հայաստանում, Ս. Եջմիածին, 2000:
36. Ազարանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983:
37. Փ. Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1982:
38. Ղ. Փարպեցի, Հայոց պատմություն, Թուղթ Վահան Մամիկոնյանին, Երևան, 1982:
39. Ասողիկ (Ստեփանոս վրդ. Տարօնացի), Տիեզերական պատմութիւն, Փարիզ, 1859:
40. Կորյուն, Վարք Սաշտոցի, Երևան, 1994:
41. Եղիշե, Վարդանիկ և Հայոց պատերազմի մասին, Երևան, 1989:
42. Մատթեոս Ուռիհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1973:
43. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982:
44. Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978:
45. Առաքել Դավիթիմեցի, Պատմություն, Երևան, 1988:
46. Հայապատում, Վենետիկ, 1901:
47. Սիսուան, Վենետիկ, 1885:
48. Как читать библию? Москва, 1996.
49. Какую духовную литературу читать, Москва, 1998.
50. Иоанн Кронштадтский, Моя жизнь во Христе, Ницца, 1928.
51. Епископ Феофан, Что есть духовная жизнь и как на нее настроиться, Ленинград, 1991.
52. Епископ Каллист Диоклисийский, Как читать Библию, 1989.
53. Традиции и наследие Христианского Востока, Материалы международной конференции, Москва, 1996.

Բովանդակություն

<i>Մուտք</i>	9
<i>Մաս առաջին</i>	
Ա. Սուրբ Գրքի շնորհման նպատակը	17
Բ. Աստծու խոսքի վկալությունն իր իսկ մասին.....	28
Աերմ	30
Կերակոր	33
Գ. Աստվածաշնչի բարերար ազդեցությունը	40
Միմիթարություն	43
Խաղաղություն	44
Տիրոջ խոսքը մաքրագործում, իմաստնացնում և լուսավորում է հոգիները	46
Դ. Աստվածաշնչի ընթերցանությունը առանձնական աստվածապաշտության մեջ.....	51
<i>Մաս երկրորդ</i>	
Ա. Հավատով կարդալու մասին.....	53
Բ. Հասկանալով կարդալու մասին.....	55
Աստվածաշունչը վերընթերցանության գիրք է	58
Գ. Խոկում և խորհրդաժություն կարդացածի շուրջ.....	60
Դ. Սուրբ Գիրքը հարատև ընթերցանությամբ սերտելու մասին	66

Ե. Մինչև երբ քրիստոնյան պետք է	
ըմթերցի Սուրբ Գիրքը	71
Զ. Աստծու խոսքը պահելու մասին	72
Է. Աղոթքով կարդալու մասին	79
 Մաս երրորդ	
Ա. Վերաբերմունքը Ս. Գրքի Ակատմամբ	85
Բ. Սեղը Ս. Գրքի Ակատմամբ	89
Գ. Սրտի մաքրություն	92
Դ. Խոնարհություն	95
Ե. Զգուշություն չարի հարձակումներից	97
Զ. Երկյուղածություն	100
Է. Հնազանդություն	101
Ը. Ընթերցանության անձնական բնույթը	104
 Մաս չորրորդ	
Ա. Սուրբ Գրքի մեկնառությունը	109
Բ. Ս. Գրքի մատչելիությունը և շերտերը	113
Գ. Ս. Գրքի անսպառ հարստությունը	120
 Մաս հինգերորդ	
Ա. Աստծու խոսքը՝ մեզ վրա թույլ ճերգործելու պատճառների մասին	125
Բ. Ս. Գիրքը չընթերցողների մասին	129
Գ. Աստվածաշունչը և մյուս գրքերը	138
Դ. Աստվածաշունչը և աղամդները	144

Ե. Աստվածաշնչի նշանակությունն ի պետս երեխաների դաստիարակության.....	149
 <i>Մաս վեցերորդ</i>	
Ա. Աստվածաշունչը Հիսոս Քրիստոսի մասին է.....	157
Բ. Ա. Գիրքն ընդհանուր քրիստոնեական աշխարհայացքի լուսի մերքու ընթերցելու մասին	161
Գ. Պատմական մանրամասնությունները.....	164
Դ. Աստվածաշնչի ընթերցանության հերթականությունն ըստ Գրքերի կարևորության և մատչելիության.	166
Ե. Աստվածաշնչի ընթերցանությունն ըստ Ծաշոց գրքի սկզբունքների.....	172
Զ. Եղրակացություններ.....	177
 <i>Հավելված.</i>	
Աստվածաշունչը և հայերը (համառոտ ակնարկ).....	181
Սաղմոս ԾԺԸ.....	206
Օգտագործած գրականություն.....	221
Բովանդակություն.....	225

*Սիրելի՝ ընթերցող, քո սուրբ
աղոթքներում հիշի՞ր այս
գլոբույկը կազմողներին և նրանց
ննջեցյալների հոգիները:*

**ԻՆՉՊԵՍ ԿԱՐԴԱԼ
ԱՍՏՎԱԾԱԾՈՒԶԸ**
Աշխատասիրությամբ Գրիգոր Դարրինյանի

*Հրատարակության տնօրեն՝ Եղիշի Արքեպիսկոպոս
Պետրոսյան*

*Գեղ. Խմբագիր՝ Ղևոնդ քահանա Մալիլյան
Շապիկը՝ Աճառ Օհանջանյանի*

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ Էջմիածնի ՏՊԱՐԱՆ